

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹ Յ ՈՒՆ Ն 3

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2017 թվականի օգոստոսի 4-ի նիստի

Նախագահում էր՝

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը:

**Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝**

Արմեն Հարությունյանը, Դավիթ Մելքոնյանը,
Վահագն Մուրադյանը, Արտակ Հարությունյանը,
Գրիգորի Պողոսյանը, Գևորգ Բաղդասարյանը,
Եղիազար Ավագյանը և Րաֆֆի Ասլանյանը:

Ներկա էին՝ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Հ.Մովսիսյանը, ՀՀ գլխավոր դատախազության ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռնահանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներ Կ.Կարապետյանը և Դ.Կարապետյանը, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ա.Չիչոյանը, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Ա.Աֆանդյանը, Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների դատախազ Դ.Վեքիլյանը, Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ Գ.Գևորգյանը, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ Ս.Խաչատրյանը, Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Գ.Էլիզբարյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Ա.Արսենյանը, Արարատի մարզի դատախազ Ս. Հովհաննիսյանը, Արմավիրի մարզի դատախազ Վ.Հովհաննիսյանը, Արագածոտնի մարզի դատախազի պաշտոնակատար Վ.Մարտիրոսյանը, Գեղարքունիքի մարզի դատախազ Ս.Մնացականյանը, Լոռու մարզի դատախազ Ա.Մարտիրոսյանը, Կոտայքի մարզի դատախազ Ռ.Խաչատրյանը, Շիրակի մարզի դատախազ Կ.Գաբրիելյանը, Տավուշի մարզի դատախազ Վ.Գրիգորյանը, Վայոց ձորի մարզի դատախազ Ն.Ավագյանը, Սյունիքի մարզի դատախազ Վ.Հարությունյանը, Երևանի կայազորի զինվորական դատախազ Ա.Անտոնյանը, Գորիսի կայազորի զինվորական դատախազ Ա.Հարությունյանը, Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Ա.Ասլանյանը, Լոռու կայազորի զինվորական դատախազ Կ.Հարությունյանը, Սևանի կայազորի զինվորական դատախազ Գ.Հայրապետյանը, Շիրակի կայազորի զինվորական դատախազ Մ.Բաղդասարյանը, թիվ 1 կայազորի զինվորական դատախազ Ն.Գաբրիելյանը, թիվ 2 կայազորի զինվորական դատախազ Ա.Պետրոսյանը, թիվ 3 կայազորի զինվորական դատախազ Կ.Աղաբեկյանը և ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ.Թովմասյանը:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին.

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Թ.Պետրոսյանը, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ Մ.Բաբայանը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության պետ Մ.Դուրյանը, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության պետ Մ.Համբարձումյանը, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի տեղակալ Վ.Եղիազարյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Ա.Ասատրյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի օգնական Ա.Հարությունյանը, ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ Ա.Գալստյանը, նույն վարչության վճիռների կատարման և կոնվենցիոն պահանջների ապահովման բաժնի պետ Ա.Շահնազարյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության՝ գործնականում հանդիպող թերացումների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման հարցը»,

Ձեկուցող՝

ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի տեղակալ Կ.Բիշարյան:

Արտահայտվեց՝ Ա. Դավթյանը:

Լսելով և քննարկելով Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության վարչության պետի տեղակալ Կ.Բիշարյանի զեկույցը՝ ՀՀ դատախազության կոլեգիան նշում է.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության» մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավունքը

ա) Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հասկացությունն ու նշանակությունը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս կրկնել է, որ Կոնվենցիայի 5-

րդ հողվածը, որը երաշխավորում է ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնարար իրավունքը, Կոնվենցիայի իմաստով առաջնային կարևորություն ունի ժողովրդավարական հասարակության մեջ (տես՝ *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 18 հունիս 1971թ., պարբ. 65, Սերիա Ա թիվ 12; և *Winterwerp v. the Netherlands*, 24 հոկտեմբեր 1979թ., պարբ. 37, Սերիա Ա թիվ 33): Կոնվենցիայի 5-րդ հողվածն ամրագրում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը, այն է՝ անձի ազատության նկատմամբ պետության կամայական միջամտությունից անհատի պաշտպանության իրավունքը (տես՝ *Aksoy-ն ընդդեմ Թուրքիայի*, 18-ը դեկտեմբերի, 1996, պարբ. 76, Reports 1996-VI): 5-րդ հողվածի 1-ին կետով երաշխավորված այդ իրավունքից բացառությունների ցանկը սպառիչ է, և այդ բացառությունների միայն նեղ մեկնաբանությունը կարող է համահունչ լինել տվյալ դրույթի նպատակին, այն է՝ անձի կամայական ազատագրկումը բացառելու նպատակին (տես՝ *Labita v. Italy [GC]*, պարբ. 170):

Եվրոպական դատարանն առանձնացնում է երեք հիմնական տարրեր, որոնք կազմում են այս իրավունքի էությունը: Դրանք են. ա) Կոնվենցիայի 5-րդ հողվածով սահմանված իրավունքից բացառությունների սահմանափակ բնույթը, որոնք պետք է ճշգրտորեն մեկնաբանվեն, բ) դատավարական և նյութական առումներով կալանավորման օրինականության կրկնակի շեշտադրումը, որը պահանջում է իրավունքի գերակայության սկզբունքի ճշգրիտ կիրառում և գ) 5-րդ հողվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն անհրաժեշտ դատական հսկողության պատշաճ արագությամբ և հրատապությամբ իրացնելու կարևորությունը (տե՛ս (*McKay v. the United Kingdom [GC]*, § 30):

բ) Կալանքի համապատասխանությունը ներպետական իրավունքին

Դատարանի նախադեպային իրավունքում հստակ սահմանված է, որ ցանկացած ազատագրկում պետք է, բացի (ա)-(գ) ենթակետերում նշված բացառությունների իրավասության շրջանակում գտնվելուց, լինի «օրինական»: Երբ կալանավորման «օրինականությունը» խնդիր է, ներառյալ այն հարցը՝ արդյոք «օրենքով նախատեսված ընթացակարգը» պահպանվել է, Կոնվենցիան հղում է կատարում ազգային օրենքին և սահմանում է պարտավորություն՝ համապատասխանելու դրանից բխող հիմնական և ընթացակարգային կանոններին (տես՝ *Էրկալոն ընդդեմ Նիդերլանդների*, §52, Սաադին ընդդեմ Միացյալ Թագավորության, § 67, և *Կաֆկարիսն ընդդեմ Կիպրոսի*, § 116): Սա հիմնականում պահանջում է, որ **ցանկացած ձերբակալություն կամ կալանավորում ունենա հիմքեր ներպետական օրենքում**, բայց նաև առնչվում է օրենքի որակին՝ պահանջելով, որ այն համահունչ լինի օրենքի գերակայությանը՝ գաղափար, որը Կոնվենցիայի բոլոր հողվածների անքակտելի մասն է կազմում (տես՝ վերևում մեջբերված *Կաֆկարիսի* գործը, §116):

Պարզելու համար, թե արդյոք վիճարկվող կալանքը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հողվածի 1-ին մասի գ) ենթակետի դրույթներին, Դատարանը պետք է ստուգի, թե արդյոք այդ ազատագրկումը եղել է ոչ միայն այն բացառություններից մեկը, որոնք նախատեսված են ա)-ից մինչև գ) ենթակետերում, այլ նաև արդյոք այն «օրինական» է եղել: 5-րդ հողվածի 1-ին

մասում ամրագրված «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտություններն ըստ էության վերագրվում են ներպետական օրենսդրությանը, դրա նյութական և ընթացակարգային նորմերին ենթարկվելու պարտավորություն են սահմանում (տես՝ Benham v. the United Kingdom, 10 հունիս 1996թ., պարբ. 41, Ձեկույցներ 1996-111; և Assanidze v. Georgia [GC], թիվ 71503/01, պարբ. 171, ՄԻԵԴ 2004-II):

Կալանքի տակ պահելու ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնված է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանքի որոշման թերացումները անխուսափելիորեն չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով (տես՝ Jecius v. Lithuania, թիվ. 34578/97, պարբ. 68, ՄԻԵԴ 2000-IX):

Այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ նախատեսված կալանավորման «օրինականությունը» առաջնային, բայց ոչ միշտ վճռորոշ տարր է: **Դատարանը պետք է նաև համոզվի, որ քննարկվող ժամանակահատվածի ընթացքում կալանքի տակ պահելը համահունչ էր 5-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների հետ, այն է՝ կանխել մարդկանց կամայական զրկումն ազատությունից:** Ավելին, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք ներպետական օրենսդրությունն ինքնին համապատասխանում է Կոնվենցիային, թե ոչ, ներառյալ՝ սահմանված և կիրառված ընդհանուր սկզբունքները (տես՝ Erkalov v. the Netherlands, 2 սեպտեմբեր 1998թ., պարբ. 52, Ձեկույցներ վճիռների և որոշումների մասին 1998-VI):

Վերջին հարցի կապակցությամբ Դատարանն ընդգծում է, որ ազատագրկման հարցը քննելիս առանձնապես կարևոր է ապահովել իրավական որոշակիության համընդհանուր սկզբունքի պահպանումը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ազատագրկման պայմանները հստակ սահմանված լինեն և օրենսդրությունը կիրառման մեջ ինքնին լինի կանխատեսելի, որպեսզի համապատասխանի

Կոնվենցիայով նախատեսված «օրինականության» չափանիշներին, որոնց համաձայն՝ ամբողջ օրենսդրությունը պետք է բավարար չափով հստակ լինի, որպեսզի հնարավորություն ընձեռի մարդուն, անհրաժեշտության և համարժեք խորհրդի դեպքում, տվյալ հանգամանքներում, ողջամիտ սահմաններում կանխատեսել կատարված գործողության հնարավոր հետևանքները (տես՝ Steel and Others v. the United Kingdom, 23 սեպտեմբեր 1998թ., պարբ. 54, Ձեկույցներ վճիռների և որոշումների մասին 1998-VII):

գ) Կամայական կալանքի արգելքը

Դատարանը նշել է, որ, միայն ներպետական իրավունքով նախատեսված ժամկետների պահպանումը չի կարող ավտոմատ կերպով դիտարկվել որպես կալանքի համատեղելիություն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետից բխող պահանջներին (տես՝ Auad c. Bulgarie, թիվ 46390/10, կետ 131, հոկտեմբերի 11, 2011թ.): Ավելին, այս դրույթը պահանջում է, որ ցանկացած ազատագրկում համապատասխանի կամայականություններից անհատին պաշտպանելու նպատակին (տես՝ ի թիվս այլոց, Winterwerp c. Pays-Bas, հոկտեմբերի 24,

1979թ., կետ 37, շարք Ա թիվ 33, Amuur c. France, հունիսի 25, 1996թ., կետ 50, Ժողովածու (Recueil) 1996- III և Witold Litwa c. Pologne, թիվ 26629/95, կետ 78, ՄԻԵԴ 2000- III): Դա հիմնարար սկզբունք է, համաձայն որի՝ ոչ մի կամայական կալանք չի կարող համատեղելի լինել 5-րդ հոդվածի 1-ին մասի հետ, իսկ «կամայականության» հասկացությունն ավելի հեռու է գնում, քան ներպետական իրավունքի հետ համատեղելիության բացակայությունը, այնպես, որ **ազատագրվումը կարող է օրինական լինել ներպետական իրավունքով՝ լինելով կամայական և Կոնվենցիային հակասող** (տես՝ Suso Musac. v. Malte, թիվ 42337/12, կետ 92, հուլիսի 23, 2013թ.):

դ) «Հիմնավոր կասկածի» հասկացությունը

Հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որը բավարար կլինի անաչառ դիտորդին համոզելու, որ տվյալ անձը հանցանք է կատարել (Ilgar Mammadov v. Azerbaijan, § 88; Erdagöz v. Turkey, § 51; Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32): Հետևաբար իշխանությունների կողմից միջնորդության հիմնավորվածությունն ապահովելու նպատակով գործի հիմնական հանգամանքների վերաբերյալ ընդհանուր քննություն չկատարելը կհանգեցնի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի խախտման (Stepuleac v. Moldova, § 73; Elçi and Others v. Turkey, § 674): Ինչ վերաբերում է «հիմնավոր» հասկացության բովանդակության բացահայտմանը, ապա դա կախված է գործի բոլոր հանգամանքներից (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, § 32):

Ինքնությունը չբացահայտված գործակալի հայտնած, ոչնչով չհաստատվող ապացույցը (ցուցմունքը) բավարար չէ հաստատելու համար հիմնավոր կասկածը, որ դիմումատուն ներգրավված է կազմակերպված հանցավոր խմբավորման գործունեությանը (Labita v. Italy [GC], §§ 156 et seq.):

Դրան հակառակ, տարիներ առաջ կասկածյալների կողմից տրված, սակայն դրանցից հետագայում հրաժարված ցուցմունքները չեն վերացնում դիմումատուի նկատմամբ առկա հիմնավոր կասկածը (Talat Tepe v. Turkey, § 61):

ե) Շարունակվող կալանավորման հիմքերը

Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է մեղադրյալին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր՝ մեղադրյալի՝ դատաքննությանը չներկայանալու վտանգը (տես՝ *Stogm Uller y. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք «Ա», թիվ 9), վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը, (տես՝ *Wemhoff v. Germany*, 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք «Ա», թիվ 7) կամ կկատարի նոր հանցանքներ (տես՝ *Matznetter v. Austria*, 1969 թվականի նոյեմբերի 10, § 9, շարք «Ա», թիվ 10) կամ կկատարի հասարակական

անկարգություններ (տես՝ *Letellier v. France*, § 51; *I.A. v. France*, § 51):

- *դատարանությանը չներկայանալու վրանգը*

Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի գործոններ հաշվի առնելով, որոնք կարող են կա՛մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա՛մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել նախքան դատական քննությունը կալանքի անհրաժեշտությունը (տես՝ *Yagci Yagci and Sargin v. Turkey*, 1995 թվականի հունիսի 8, § 52, շարք «Ա», թիվ 319Ա): Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաև բոլոր կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում է: Ծանր պատժի ակնկալիքը և ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են վերաբերելի լինել, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել երաշխիքներ ստանալու հնարավորությունը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով (տես՝ *Neumeister v. Austria*, 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք «Ա», թիվ 8):

Միայն մշտական բնակության վայրի բացակայությունն ինքնին փախուստի վտանգը հիմնավորող հանգամանք չէ (տես՝ *Sulaoja v. Estonia*, § 64):

Փախուստի վտանգը կալանքի տակ անցկացված ժամանակի հետ անհրաժեշտաբար նվազում է (տես՝ *Neumeister v. Austria*, § 10):

Թեև սպառնացող պատժի խստությունը անձի փախուստի հավանականությունը գնահատելու համար էական նշանակություն ունի, սակայն միայն մեղադրանքի խստությունը չի կարող արդարացնել **տևական կալանքը** (տես՝ *Idalov v. Russia [GC]*, § 145; *Garycki v. Poland*, § 47; *Chraidi v. Germany*, § 40; *Ilijkov v. Bulgaria*, §§ 80-81).

- *քննությանը խոչընդոտելը*

Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքը խոչընդոտելու վտանգը չի կարող վերացական լինել (*in abstracto*). Այն պետք է հիմնավորվի փաստական տվյալներով (տես՝ *Trzaska v. Poland*, թիվ 25792/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

Վկաների նկատմամբ ճնշումների դիսկը կարող է ընդունելի համարվել քննության սկզբնական փուլերում (տես՝ *Jarzynski v. Poland*, § 43): Տևական ժամանակ հետո քննության պահանջները չեն կարող բավարար լինել կասկածյալի կալանքը հիմնավորելու համար. հանգամանքների նորմալ ընթացքի պարագայում ժամանակի հետ ենթադրվող դիսկը նվազում է՝ պայմանավորված նրանով, որ հարցումներն արված են, հարցաքննություններն ու ստուգումները կատարված են (տես՝ *Clooth v. Belgium*, § 44).

- *նոր հանցանք կատարելը*

Մեղադրանքի խստությունը դատական իշխանություններին կարող է ուղղորդել շարունակական կալանքի տակ պահել կասկածյալին՝ հետագա հանցագործությունների փորձերը կանխելու նպատակով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որպեսզի կիրառվող միջոցը համաչափ լինի սպառնացող վտանգին՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, մասնավորապես՝ նախորդող իրադարձությունները և տվյալ անձի բնութագիրը:

Նախկին դատապարտումները կարող են նոր հանցանք կատարելու հիմնավոր ենթադրության պատճառ լինել (տես՝ Selçuk v. Turkey, § 34; Matznetter v. Austria, § 9).

Գործազուրկ լինելը կամ ընտանիք չունենալը չեն կարող հիմք հանդիսանալ եզրակացնելու, որ անձը հակված է նոր հանցանք կատարել (տես՝ Sulaoja v. Estonia, § 64).

- *հասարակական անկարգությունները կանխելը*

Ընդունելի է, որ բացառիկ ծանրության և հասարակական արձագանքի առումով որոշ հանցանքներ կարող են հանգեցնել հասարակական անկարգությունների և դրանով իսկ պայմանավորված՝ արդարացնել նախնական կալանքը, առնվազն կարճ ժամանակով:

Ինչևէ, այս հիմքը կարող է դիտվել որպես վերաբերելի և բավարար, միայն եթե հիմնվի այնպիսի փաստերի վրա, որոնք կվկայեն, որ մեղադրյալի ազատ արձակումն անխուսափելիորեն կհանգեցնի հասարակական անկարգության (տես՝ Letellier v. France, § 51; I.A. v. France, § 104; Prencipe v. Monaco, § 79; Tiron v. Romania, §§ 41-42).

զ) պատշաճ ջանասիրություն

Քննության բարդությունն ու առանձնահատկությունները գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն գնահատելու՝ արդյոք իշխանությունները գործի քննության ընթացքում դրսևորել են պատշաճ ջանասիրություն (տես՝ Scott v. Spain, § 74). Իր գործը արագ քննելու մեղադրյալի իրավունքը չի կարող խոչընդոտ լինել դատական իշխանությունների համար՝ պատշաճ կատարելու իրենց աշխատանքը (տես՝ Shabani v. Switzerland, § 65; Sadegül Özdemir v. Turkey, § 44).

է) կալանավորման ժամկետի երկարացումը

Հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ: (տես՝ Smirnova y. Russia, թիվ 46133/99 և 48183/99, § 58, ՄԻԵԿ 2003-IX (քաղվածքներ); Becciev v.

Moldova, թիվ 9190/03, § 53, 2005 թվականի հոկտեմբերի 4, և *Khodorkovskiy v. Russia*, թիվ 5829/04, § 182, 2011 թվականի մայիսի 31):

Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում (տես՝ *Letellier y. France*, 1991 թվականի հունիսի 26, § 35, շարք «Ա», թիվ 207): Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան (տես՝ *Clooth y. Belgium*, 1991 թվականի դեկտեմբերի 12, § 44, շարք «Ա», թիվ 225):

Հիմնավոր կասկածի կենսունակությունը, համաձայն որի ձերբակալված անձն է կատարել հանցագործությունը *sine qua non* (պարտադիր) պայման է հանդիսանում կալանքի երկարաձգման օրինականության համար, սակայն ժամանակի ընթացքում այն այլևս բավարար չէ կալանքի երկարաձգումն արդարացնելու համար: Դատարանը փորձ չի կատարել այս հասկացությունը փոխարկել կոնկրետ օրերի, շաբաթների, ամիսների կամ տարիների, կամ, կախված հանցագործության ծանրությունից, տարբեր ժամանակահատվածների (տես՝ *Stögmüller-ն ընդդեմ Ավստրիայի*, թիվ 1602/62, § 4, 10 նոյեմբերի 1969թ.): Եթե «հիմնավոր կասկածի» առկայությունը այլևս բավարար չէ, Դատարանը պետք է հիմնավորի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերը շարունակել են արդարացնել ազատազրկումը: Մասնավորապես, այդ մարմինները պետք է պարզեն, թե արդյոք այդ հիմքերը «հիմնավոր» էին և «բավարար», և արդյոք ներպետական իշխանությունները «հատուկ ջանասիրություն» են ցուցաբերել գործի քննության ընթացքում (տես՝ ի թիվս այլ հեղինակավոր աղբյուրների, *Letellier-ն ընդդեմ Ֆրանսիայի*, 26 հունիսի 1991թ., § 35, Շարք Ա թիվ 207, և *Yağci-YagciYagci-ն և Sargin-SarginSargin-ն ընդդեմ Թուրքիայի*, 8 հունիսի 1995թ., § 50, Շարք Ա թիվ 319- A):

Դատարանի նախադեպային իրավունքում դեռ անդրադարձ չի եղել այս համատեքստում նախնական կալանքի վաղ փուլերին, հավանաբար, ինչպես գործերի ճնշող մեծամասնության դեպքում կասկածանքի առկայությունը բավարար հիմք է հանդիսանում կալանավորման համար, իսկ գրավով այն չփոխարինելու հարցն էլ լրջորեն չի վիճարկվել: Կասկած չի առաջացնում, սակայն, որ դատաքննության ընթացքում դատարանը պետք է հնարավորություն ունենա քննելու կալանքից ազատելու հարցը, քանի որ նույնիսկ այս փուլում կարող են լինել այնպիսի գործեր, որով հանցագործության բնույթը կամ կասկածվող իրավախախտի անձնական հանգամանքները այնպիսին են, որ կալանավորումը դարձնում են չարդարացված կամ հիմնավոր և բավարար հիմքերով չապահովված: «Անհապաղության» ուղղակի պահանջ, ինչպես առկա է 5-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին նախադասությունում, այնտեղ չկա: Սակայն, դատարանը՝ դիմումատուի միջնորդության կամ իր նախաձեռնությամբ, գործի քննությունը պետք է իրականացնի պատշաճ արագությամբ՝ նպատակ ունենալով ազատազրկման անհիմն դեպքերը հասցնել նվազագույնի (տես՝ վերևում մեջբերված *McKay-ի* գործը, § 46):

Երաշխավորելու համար, որ իրավունքը գործնականում կիրառելի է և արդյունավետ, այլ ոչ թե՛ տեսական և թվացյալ, և որ այն ազնիվ գործելակերպի միայն խնդիրը չէ, սակայն նախընտրելի է ձգձգումները նվազեցնելու համար, որպեսզի այն դատական իշխանության պաշտոնատար անձը, ով իրականացնում է կալանավորման օրինականության և հիմքերի առկայության վերաբերյալ առաջին ինքնաբերական ստուգումը, նաև իրավասու լինի անձին գրավի դիմաց ազատ արձակի: Սակայն դա Կոնվենցիայի պահանջը չէ և սկզբունքորեն պատճառ չկա, թե ինչու այդ հարցերը դատական իշխանության երկու պաշտոնատար անձինք չեն կարող լուծել անհրաժեշտ ժամանակահատվածում: Բոլոր դեպքերում, մեկնաբանման հարց հանդիսանալով, չի կարող պահանջվել, որպեսզի գրավի քննությունը ավելի արագ կատարվի, քան պահանջվում է առաջին ինքնաբերական ստուգման դեպքում, որն ըստ Դատարանի՝ առավելագույնը չորս օր է (տես՝ *Brogan and others v. The United Kingdom* գործը (11209/84)):

Իշխանությունները պարտավոր են համոզիչ կերպով ապացուցել կալանավորման ցանկացած ժամկետի հիմնավորումը՝ անկախ դրա կարճատևությունից (տես՝ *Belchev*-ն ընդդեմ Բուլղարիայի, թիվ [39270/98](#), պարբ. 82, 8-ն ապրիլի, 2004, և *Castravet*-ն ընդդեմ Մոլդովայի, թիվ [23393/05](#), պարբ. 33, 13-ը մարտի, 2007թ.):

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերջին զարգացումները (Buzadji-ն ընդդեմ Moldova-ի գործով)

Եվրոպական դատարանը, զարգացնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ իր նախադեպային իրավունքը՝ *Buzadji*-ն ընդդեմ *Moldova*-ի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. Հիմնավոր կասկածը բավարար հիմք է անձին որոշակի ժամկետով կալանավորելու համար, սակայն այն բավարար չէ որոշ ժամանակ անց անձի կալանքի ժամկետը երկարացնելու համար: Այս դիրքորոշումը դատարանն առաջին անգամ արտահայտել է *Stögmüller*-ի գործով, որը հետագայում ավելի հայտնի է դարձել որպես “*Letellier principles*” սկզբունք և բազմիցս հաստատվել դատարանի հաջորդական որոշումներով:

Այս սկզբունքը հնարավորություն է տալիս անջրպետ դնել առաջին փուլի, երբ հիմնավոր կասկածը բավարար է անձի կալանավորման համար, և երկրորդ փուլի միջև, որը վրա է հասնում որոշ ժամանակ անց, երբ հիմնավոր կասկածն ինքնին արդեն բավարար չէ և պահանջվում են այլ անհրաժեշտ ու բավարար պայմաններ:

Այն հարցի կապակցությամբ, թե ժամանակային առումով, որ պահից է պահանջվում լրացուցիչ պայմանների հիմնավորումը, Եվրոպական դատարանը նշում է, որ լրացուցիչ պայմանների հիմնավորման անհրաժեշտությունը կապված է «որոշակի ժամանակահատված» հասկացության հետ, և փաստում, որ դատարանը իր նախադեպային իրավունքում չի բացահայտել այդ հասկացությունը կամ չի տվել ընդհանուր չափանիշներ: Վերջերս կայացրած *Magee*-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանը նկատեց, որ գոյություն չունեն ֆիքսված ժամկետներ, որոնք կիրառելի կլինեն քննարկվող հասկացության

համար և նշեց, որ անձի կողմից հանցանքը կատարելու հիմնավոր կասկածի առկայությունը բավարար է նրան որոշակի ժամկետով կալանավորելու համար, սակայն որոշակի ժամանակ անց դա չի արդարացնի անձի կալանքի ժամկետի երկարաձգումը: Մինևույն ժամանակ, դատարանը չի փորձում սահմանել կոնկրետ օրերի, շաբաթների, ամիսների, տարիների քանակ կամ կոնկրետ ժամանակահատված՝ հաշվի առնելով հանցագործության լրջությունը: Իր մի շարք որոշումներով Եվրոպական դատարանն այն դիրքորոշումն է արտահայտել, որ անգամ կարճ ժամանակահատվածի դեպքում հիմնավոր կասկածի առկայությունը ինքնին բավարար չէ մինչդատական կալանքի համար և դրա համար անհրաժեշտ են լրացուցիչ հիմնավորումներ:

Վերոնշյալի լույսի ներքո Եվրոպական դատարանը գտել է, որ նախադեպային իրավունքի զարգացման տեսանկյունից օգտավետ կլիներ պահանջել ազգային իշխանություններից, որպեսզի վերջիններս հիմնավորեին հետագա կալանավորումը՝ հաշվի առնելով կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Դատարանը նշել է, որ 2-րդ փուլի դեպքում ժամանակահատվածը, որը պետք է հաշվի առնվի կալանքի հիմնավորվածությունը գնահատելու համար, հաշվվում է այն պահից, երբ անձը զրկվել է ազատությունից: Հենց այդ պահից համապատասխան անձն ունի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքը, համաձայն որի՝ վերջինս պետք է անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական գործառույթներ իրականացնել՝ պահպանելով գործադիր մարմնին և կողմերին ներկայացվող անկախության պահանջը: Այսպիսի կարգավորումը դատավարական պարտականություն է առաջացնում դատավորի կամ օրենքով լիազորված դատավարական գործառույթներ իրականացնող անձի համար՝ պարտավորեցնելով նրան լսել իր մոտ ներկայացված անձին, վերանայել կալանավորման համար հիմք հանդիսացող հանգամանքները, և դրանց բացակայության դեպքում ազատ արձակել անձին: Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ կալանքի հիմնավորման երկու չափանիշները՝ «անհապաղ» և «որոշակի ժամանակ անց» առաջացնում են երկու տարբեր իրավունքներ և դրանք միմյանց հետ տրամաբանորեն կապված չեն: Հարկ է նշել, որ կալանքի ժամկետի հաշվարկը սկսվում է ձերբակալման պահից, և կալանքի հարցը քննող դատարանը պետք է որոշի՝ արդյո՞ք առկա են կալանքը հիմնավորող հանգամանքները և դրանց բացակայության պայմաններում պետք է ազատ արձակի անձին: Այսինքն՝ գործնականում երկրորդ չափանիշից բխող երաշխիքները համընկնում են առաջին չափանիշի երաշխիքների հետ: **Այս առումով կասկածյալին առաջին անգամ դատարան բերելու ժամանակ երկու չափանիշների երաշխիքները միաժամանակ են դրսևորվում, և այդ պահին երկրորդի երաշխիքները գերակայում են առաջինին:** Սակայն այն հարցը, թե երկրորդ չափանիշի երաշխիքներն ամբողջությամբ որ պահից պետք է սկսեն գործել, այնքան էլ հստակ չէ, քանի որ ի լրումն հիմնավոր կասկածի պահանջի նաև պետք է այլ հանգամանքներ հաստատեն կալանքի անհրաժեշտությունը, իսկ այդ հանգամանքերը կախված են բավականին երկիմաստ՝ «որոշակի ժամանակ անց» հասկացությունից:

Եվրոպական դատարանը գտել է, որ դատական մարմինները պարտավոր են ապահովել բավարար և հիմնավոր պատճառներ կալանքի երկարացման համար, եթե ոչ

անմիջապես, ապա կալանավորումից մի քանի օր անց, հատկապես այն դեպքում, երբ դատարանը առաջին անգամ ստուգում է անձին մինչդատական կալանքի վերցնելու անհրաժեշտությունը: Նման մոտեցումը ոչ միայն հստակություն և պարզություն կմտցնի նախադեպային իրավունքի այս ոլորտում, այլև կպաշտպանի անձանց ոչ խելամիտ ժամկետով կալանքի տակ պահելուց:

Եվրոպական իրավունքի կիրառումը Հայաստանի վերաբերյալ գործերով իրավիճակներ

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ-[33376/07](#)

Վճիռ 26.06.2012թ.

2006թ. հոկտեմբերի 22-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով: Նույն ամսաթվին քննիչը միջնորդություն է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին 2 ամիս ժամկետով կալանավորելու համար՝ այն հիմնավորմամբ, որ նախկինում նա ունեցել է դատվածություն, մեղսագրվող արարքը հանդիսանում է ծանր հանցագործություն, և հաշվի առնելով վերոգրյալը վերջինս կթաքնվի վարույթն իրականացնող մարմնից, եթե գտնվի ազատության մեջ: Նույն օրը դատարանը քննության առնելով քննիչի միջնորդությունը՝ գտել է, որ գործի նյութերը բավարար հիմքեր են տալիս ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել և խոչընդոտել վարույթի իրականացմանը՝ հղում կատարելով մեղսագրվող հանցանքի բնույթին և վտանգավորության աստիճանին:

2006թ. դեկտեմբերի 8-ին քննիչը դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացրել՝ այն հիմնավորմամբ, որ կատարվել են մի շարք փորձաքննություններ, սակայն անհրաժեշտ է կատարել ևս մի քանիսը, որոնք կարող են հիմք հանդիսանալ դիմումատուին ներակայացված մեղադրանքը փոխելու համար, իսկ վերջինիս ազատ արձակելը կարող է խոչընդոտել գործի քննությանը: Դատարանը դեկտեմբերի 12-ին քննելով քննիչի միջնորդությունը, որոշում է կայացրել այն մասամբ բավարարելու մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամսի 8-ին նշանակված փորձաքննությունը դեռևս ավարտված չէ, իսկ կալանքը գրավով փոխարինելու մասին դիմումատուի միջնորդությունը մերժել է՝ այն հիմնավորմամբ, որ նա մեղադրվում է ծանր հանցագործության կատարման մեջ:

Դիմումատուն 2006թ. դեկտեմբերի 27-ին բողոք է ներկայացրել Քրեական և Զինվորական գործերով վերաքննիչ դատարան: 2007թ. հունվարի 25-ին վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը: 2007թ. հունվարի 9-ին քննիչը նույն հիմնավորմամբ կալանքը 1 ամիս ժամկետով երկարացնելու միջնորդություն է ներկայացրել դատարան: Դատարանը, քննելով միջնորդությունը, որոշում է կայացրել այն մինչև փետրվարի 19-ը բավարարելու, իսկ կալանքը գրավով փոխարինելու՝

դիմումատուի միջնորդությունը մերժելու մասին: Փետրվարի 19-ին դատախազը հաստատել է մեղադրանքը և գործն ուղարկել դատարան: Հունվարի 27-ին դիմումատուն բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան, սակայն այն թողնվել է առանց քննության այն հիմնավորմամբ, որ գործը ուղարկվել է դատարան: Նույն հիմքով մերժվել է նաև դիմումատուի մարտի 5-ին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ներկայացված բողոքը: Ամբողջ դատաքննության ընթացքում դիմումատուն գտնվել է կալանքի տակ: Օգոստոսի 8-ին՝ նիստի ժամանակ, դիմումատուն միջնորդել է, որ իր կալանքը փոխարինեն գրավով, սակայն մարզի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է՝ գտնելով, որ կալանքը գրավով փոխարինելու բավարար հիմքեր չկան: Չպարզված օրը մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից, 2007թ. դեկտեմբերի 5-ին մարզի ընդհանուր իրավասության դատարանը կարճել է քրեական գործը և նույն օրը դիմումատուին ազատ արձակել կալանքից:

Դատարանին ներկայացված գանգատում դիմումատուն նշել է, որ ներպետական դատարանները չէին ներկայացրել իր երկարատև կալանքի տակ գտնվելու պատճառները, 2007թ. հունվարի 19-ից մարտի 12-ն ընկած ժամանակահատվածում իր կալանավորումը եղել է անօրինական, քանի որ հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, նա հնարավորություն չի ունեցել գրավի դիմաց ազատվել կալանքից մեղսագրվող արարքի ծանրության հիմքով, 2006թ. դեկտեմբերի 12-ի կալանքի վերաբերյալ գործի քննության ժամանակ չի ապահովվել կողմերի մրցակցությունն ու հավասարությունը:

Դատարանը, քննելով գանգատը, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտման կապակցությամբ արձանագրել է, որ դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու մասին որոշում կայացնելիս ներպետական դատարանները հիմնվել են մեղադրանքի ծանրության և դիմումատուի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և վարույթը խոչընդոտելու վտանգի վրա, ինչպես նաև, որոշ դեպքերում՝ այն փաստի վրա, որ որոշակի քննչական գործողությունների կատարման անհրաժեշտություն կա և, որ քննությունը դեռ շարունակվում է:

Դատարանը վերահաստատել է, որ հետագա քննչական գործողություններ կատարելու կամ քննությունն ավարտված չլինելու հիմնավորումները չեն համապատասխանում անձի քննության ընթացքում կալանքի տակ պահելու 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի որևէ հիմքին:

Ինչ վերաբերում է թաքնվելու կամ վարույթին խոչընդոտելու վտանգին, ապա Դատարանը նշում է, որ թե՛ Մարզի ընդհանուր իրավասության դատարանը, թե՛ Վերաքննիչ դատարանը դիմումատուին կալանավորելու և կալանքի ժամկետը երկարաձգելու կարգադրություն տալու իրենց որոշումներում սահմանափակվել են նշված հիմքերը վերացական և կարծրատիպային ձևով կրկնելով՝ առանց մատնանշելու որևէ պատճառ առ այն, թե ինչու են իրենք հիմնավորված համարել այն ենթադրությունները, թե դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել վարույթի ընթացքին: Նրանք չեն էլ փորձել հերքել դիմումատուի փաստարկները: Այն հանցագործության ծանրության ընդհանրական վկայակոչումը, որի մեջ մեղադրվում էր դիմումատուն, և որի վրա մի քանի

առիթով հիմնվել են դատարանները, չի կարող ենթադրյալ վտանգների համար բավարար հիմնավորում համարվել:

Վերոնշյալի լույսի ներքո՝ Դատարանը գտել է, որ այն պատճառաբանությունները, որոնց հիման վրա Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի ու Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից դիմումատուի կալանավորման, կալանքի ժամկետը երկարաձգելու և գրավով չազատելու մասին որոշումներ են ընդունվել, չեն եղել «հիմնավոր և բավարար»: Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

Դատարանը վերահաստատել է, որ իշխանությունները, անձի կալանավորման կամ ազատման վերաբերյալ որոշում կայացնելիս, պարտավոր են հաշվի առնել այլընտրանքային միջոցներ նրա՝ դատարան ներկայանալու համար: Իսկապես, այդ հոդվածը սահմանում է ոչ միայն «ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու» իրավունք, այլև նախատեսում է, որ «ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով» (տես՝ *Jablonski v. Poland*, no. 33492/96, § 83, 21 դեկտեմբերի, 2000):

Դատարանն այնուհետև նշել է, որ նախկինում գտել է 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում մի շարք գործերում, որտեղ գրավի միջնորդությունն ինքնաբերաբար մերժվել է՝ օրենքի վկայակոչմամբ (տես՝ *Caballero v. the United Kingdom [GC]*, թիվ 32819/96, § 21, ECHR 2000-II, և *S.B.C. v. the United Kingdom*, թիվ 39360/98, §§ 23-24, 19 հունիսի, 2001):

Տվյալ գործում դիմումատուի՝ գրավով ազատվելու միջնորդությունը նմանապես մերժվել է այն հիմնավորմամբ, որ նա մեղադրվում է ծանր հանցագործության մեջ, և՛ ՔԴՕ-ի 143-րդ հոդվածի 1-ին մասն արգելում է գրավի կիրառում նման դեպքերում: Դատարանը գտնում է, որ դիմումատուի գրավի միջնորդության նման ինքնաբերաբար մերժումը՝ առանց նրա կալանքի կոնկրետ հանգամանքների նկատմամբ դատարանի հսկողության, համահունչ չի եղել 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքներին: Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 44068/07

Վճիռ - 20.12.2011թ.

2007թ. փետրվարի 15-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի և 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և հայտարարվել է հետախուզում:

Նույն օրը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննել և բավարարել է դիմումատուին նախնական կալանքի տակ պահելու մասին քննիչի միջնորդությունը և սահմանել կալանք՝ 2 ամիս ժամկետով, որը պետք է հաշվվի դիմումատուին կալանքի տակ վերցնելու օրվանից:

2007թ. ապրիլի 13-ին դիմումատուն ձերբակալվել է և տեղափոխվել Արարատի մարզի ոստիկանության բաժին, որտեղ էլ տեղեկացել է 2007թ. փետրվարի 15-ի որոշման մասին:

2007թ. մայիսի 31-ին դիմումատուն գրավի դիմաց կալանքից ազատվելու միջնորդություն է ներկայացրել Արարատի մարզի առաջին ատյանի դատարան:

2007թ. հունիսի 5-ին նախաքննությունն ավարտվել է:

2007թ. հունիսի 8-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը, քննելով 2007թ. մայիսի 31-ին ներկայացված միջնորդությունը, որոշել է մերժել դիմումատուին ազատ արձակելու վերաբերյալ պահանջը՝ գտնելով, որ առկա է դիմումատուի՝ քննությունից թաքնվելու վտանգ և հետևաբար պատասխանատվությունից և պատժից խուսափելու վտանգ՝ հաշվի առնելով այն փաստը, որ նա նախկինում թաքնվել է նախաքննությունից:

2007թ. հունիսի 12-ին քրեական գործն ուղարկվել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարան:

2007թ. հունիսի 13-ին դիմումատուին կալանքի տակ պահելու 2007թ. փետրվարի 15-ի որոշմամբ սահմանված ժամկետը սպառվել է:

Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել հունիսի 8-ի որոշման դեմ, ինչպես նաև դիմել է «Նուբարաշեն» քերականարողական հիմնարկի պետին իրեն ազատ արձակելու պահանջով, սակայն դիմումատուի պահանջը մերժվել է այն հիմնավորմամբ, որ գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան:

Նույն հիմնավորմամբ 2007թ. հուլիսի 6-ին Վերաքննիչ դատարանն առանց քննության է թողել դիմումատուի բողոքը: Քրեականարողական հիմնարկի պետի որոշումը դիմումատուն բողոքարկել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 2007թ. հուլիսի 2-ին մերժել այն հիմնավորմամբ, որ բողոքարկվող որոշումն օրինական է և համապատասխանում է քր. դատ. օր. պահանջներին: Դիմումատուն սույն որոշման դեմ բողոք է ներկայացրել վերաքննիչ դատարան, որը մերժվել է նույն հիմնավորմամբ:

2007թ. հուլիսի 2-ին դատավորը որոշել է դիմումատուի վերաբերյալ հարուցված քրեական գործը 2007թ. հուլիսի 12-ին նշանակել դատական քննության: Նույն որոշմամբ հաստատվել է, որ դիմումատուի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու անհրաժեշտություն չկա:

Դատարան ներկայացված իր գանգատում դիմումատուն, ի թիվս այլնի, բողոքում էր, որ ձերբակալությունից հետո իրեն չեն ներկայացրել դատարան: Այս հարցի կապակցությամբ դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ ձերբակալված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ (տես՝ *Kandzhov v. Bulgaria*, թիվ 68294/041, պարբ. 65, 6 նոյեմբեր 2008թ.): Այս հոդվածը պարտավորեցնում է դատավորին կամ այլ պաշտոնատար անձին լսել դատարան ներկայացված անձին (տես՝ *Schiesse y. Switzerland*, 4 դեկտեմբեր 1979թ., պարբ. 31, Սերիա Ա թիվ 34): Ավելին, սույն հոդվածն անձին ձերբակալելուց կամ կալանավորելուց հետո անհապաղ դատարանի կամ այլ պաշտոնատար անձի մոտ տանելու պահանջից հնարավոր բացառություն չի նախատեսում: Այլ կերպ որոշելը կհակասի հոդվածի իմաստային բովանդակությանը (տես՝ *Landent v. Poland*, թիվ 11036/03, պարբ. 75, 18 մարտ 2008թ.): Սույն գործով դիմումատուն կասկածվում էր հանցագործության կատարման մեջ: 2007թ. փետրվարի 15-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանն

անձի նկատմամբ կալանք նշանակելու մասին որոշում էր կայացրել դիմումատուի բացակայությամբ, քանի որ ենթադրվում էր, որ վերջինս գտնվում էր հետախուզման մեջ:

Դատարանը նշել է, որ դատարանի հնարավորությունները արդարադատությունից խուսափող անձի ձերբակալման որոշման հարցը լուծելիս *in absentia* չի հակասում Կոնվենցիայի դրույթներին (տես՝ *Garabayev v. Russia*, թիվ 38411/02, պարբ. 101, 7 հունիսի 2007թ.): Այնուամենայնիվ, 2007թ. ապրիլի 13-ին ոստիկանության կողմից ձերբակալվելուց հետո և, հետևաբար, վերոնշյալ որոշման հիման վրա կալանավորվելուց հետո նա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով երբևէ չի տարվել դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ:

Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

Մախասայանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 6729/07

Վճիռ - 26.06.2012թ.

2006թ. դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 301-րդ հոդվածի հատկանիշներով՝ իշխանությունը բռնի զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու հիմքով:

Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ՝ պնդելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը ներգրավված անձանց նկատմամբ: Դիմումատուն պնդել է, որ քննիչը դատարան է ներկայացրել միայն իր ելույթի վերձանումը, բայց ոչ դրա ձայնագրությունը, նույնիսկ այն դեպքում, երբ նման ձայնագրությունը գտնվում էր քննիչի տրամադրության տակ: Նույն օրը դատարանը, քննելով քննիչի միջնորդությունը, բավարարել է այն:

2006թ. դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ, պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված: 2006թ. դեկտեմբերի 26-ին դիմումատուն լրացրել է իր բողոքը, պնդելով *inter alia*, որ քննիչը դատարան որևէ ապացույց չի ներկայացրել, ի հիմնավորումն իր պնդմանն այն մասին, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ դատարանի որոշումը՝ նրա հանցանք կատարելու վերաբերյալ, պետք է հիմնված լիներ հիմնավոր կասկածի վրա:

Նույն օրը Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը քննել և մերժել է բողոքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քննիչը բավար արապացույցներ է ներկայացրել, ինչպիսիք են՝ դիմումատուի 2006 թվականի դեկտեմբերի 10-ի և 12-ի հարցաքննությունների արձանագրությունները, որոնք դիմումատուին կապում են քննարկվող հարցի հիմքում ընկած իրադարձությունների հետ, ինչպես նաև ենթադրում են հիմնավոր կասկածի առկայությունը:

2006թ. դեկտեմբերի 27-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ փորձելով գրավի դիմաց ազատ արձակվել:

2007թ. հունվարի 26-ին առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ այն հիմքով, որ վերջինս, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: Նույն օրը դիմումատուն բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ՝ պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված:

2007թ. փետրվարի 15-ին Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ համարելով, որ բավարար հիմքեր չկան դիմումատուին գրավի դիմաց ազատ արձակելու համար՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ միևնույն քրեական գործի շրջանակներում դիմումատուի հանցակից Վ. Ա.-ն կասկածվել, այնուհետև կալանավորվել է խոշոր չափերով զենք և ռազմամթերք ապօրինաբար կրելու (պահելու) համար, ինչպես նաև հաշվի առնելով դիմումատուին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանգավորության աստիճանը:

Անդրադառնալով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմանը՝ դատարանը նշել է, որ ներպետական դատարանները, սանկցավորելով դիմումատուի կալանավորումը և դրա ժամկետի երկարացումը, հիմնվել են վերջինիս՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու ռիսկի վրա, ինչպիսին է, վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելը:

Դատարանը նկատել է, որ և՛ առաջին ատյանի, և՛ վերաքննիչ դատարանները իրենց որոշումներում սահմանափակվել են այս հիմքերը վերացարկված և կարծրատիպային եղանակով կրկնելով, առանց մատնանշելու որևէ պատճառ այն մասին, թե ինչու են նրանք հիմնավոր համարում իրենց պնդումներն այն մասին, թե դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ անօրինական ազդեցություն գործադրել վկաների նկատմամբ:

Նրանք նաև չեն փորձել հերքել դիմումատուի ներկայացրած փաստարկները:

Դիմումատուին մեղսագրվող արարքի ծանր հանցագործություն լինելու ընդհանուր վկայակոչումը չի կարող բավարար հիմնավորում համարվել ենթադրյալ ռիսկերի համար: Հստակ չէ նաև, թե ինչպե՞ս կարող էր դիմումատուի գործով մյուս մեղադրյալի կալանավորված լինելու փաստը, որի վրա հիմնվել է վերաքննիչ դատարանը՝ գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը մերժելիս հիմնավոր լինել քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի թաքնվելու ռիսկն արդարացնելու համար:

Վերոնշյալի լույսի ներքո Դատարանը համարել է, որ այն պատճառները, որոնց վրա իրենց որոշումներում հիմնվել են առաջին ատյանի և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանը՝ դիմումատուի կալանավորման և դրա ժամկետի երկարացման հետ կապված, «հիմնավոր» և «բավարար» չէին:

Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի

Գանձադր - 12895/06

Վճիռ - 05.05.2012թ.

2002թ. հունիսի 24-ին դիմումատուի դեմ հարուցվել է թիվ 12207102 քրեական գործը, նույն օրը Երևանում կատարված մի քանի անձանց դիտավորյալ սպանության փաստի առթիվ: Դիմումատուն, ում գտնվելու վայրն անհայտ էր, կասկածվում էր այդ սպանությունների կատարման մեջ:

2002թ. հուլիսի 5-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն դիմումատուին մեղադրանք է առաջադրվել ապօրինի կերպով զենք պահելու համար, որից հետո քննիչի կողմից դիմումատուին կալանավորելու միջնորդություն է ներկայացվել: Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը դիմումատուի բացակայության պայմաններում բավարարել է միջնորդությունը և նրան երկամսյա կալանավորման մասին որոշում է կայացրել, իսկ քանի որ դիմումատուի գտնվելու վայրն անհայտ էր՝ հայտարարել է հետախուզում:

2002թ. հոկտեմբերի 25-ին դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի վարույթը կասեցվել է, քանի որ նրա գտնվելու վայրը հնարավոր չի եղել պարզել:

Չպարզված ժամանակահատվածում Ուկրաինայում հարուցվել է թիվ 01710009 քրեական գործը 2001թ. մարտի 31-ին Ուկրաինայում կատարված մի անձի սպանության հիմքով:

2004թ. ապրիլի 12-ին Ուկրաինայի իշխանությունները որոշում են կայացրել դիմումատուին հանձնել Հայաստանին և քրեական գործը փոխանցել Հայաստանին՝ հետագա քննության համար: Հայաստանին հանձնելուց հետո 2004թ. մայիսի 18-ին դիմումատուն քննիչի միջնորդությամբ կալանավորվել է՝ երկու ամիս ժամկետով: Այնուհետև, 2004 թ. հուլիսի 12-ի որոշմամբ նրա կալանքը երկարացվել է ևս երկու ամիս ժամկետով: Նախաքննության ավարտից և դիմումատուի գործը դատարան փոխանցելուց հետո՝ 2004թ. հոկտեմբերի 6-ին, առաջին ատյանի դատարանը իր նախաձեռնությամբ և ՔԴՕ-ի 293-րդ հոդված 2-րդ մասով սահմանված կարգով երկարացրել է կալանքի ժամկետը: Ավելի քան մեկ տարվա դատական վարույթից հետո՝ 2005թ. հոկտեմբերի 14-ին, գործը քննող դատարանը որոշել է գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Նույն որոշմամբ դատարանը որոշել է դիմումատուին պահել կալանքի տակ: Վերաքննիչ դատարանը և Վճռաբեկ դատարանը սույն որոշումը հաստատել են 2005թ. համապատասխանաբար նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 16-ին: 2005թ. դեկտեմբերի 26-ին գործի նյութերն ուղարկվել են գլխավոր դատախազություն և 2005թ. դեկտեմբերի 27-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել կալանքը երկու ամսով երկարացնելու վերաբերյալ: Միջնորդության մեջ նշվել է, որ դիմումատուի կալանքը ավարտվելու է 2005թ. դեկտեմբերի 30-ին: 2005թ. դեկտեմբերի 29-ին դատարանը բավարարել է միջնորդությունը:

Անդրադառնալով դիմումատուի կողմից գանգատում նշված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտմանը՝ Դատարանը նշել է, որ դիմումատուի մինչդատական կալանքը տևել է 2004թ. մայիսի 18-ից մինչև իր դատապարտումը՝ 2007թ. սեպտեմբերի 24-ը, այն է՝ 3 տարի, 4 ամիս և 6 օր: Այս առումով դատարանը կրկնել է, որ կալանքի ժամկետի տևողության ողջամտությունը ամեն դեպքի համար առանձին պետք է գնահատվի՝ հաշվի առնելով դրանց բնորոշ առանձնահատկությունները: Յուրաքանչյուր գործով շարունակական կալանքը կարող է

արդարացվել միայն իրավական հանրային շահի առկայության դեպքում, որը չնայած անմեղության կանխավարկածին գերակշռում է ազատության իրավունքի նկատմամբ: Առաջին հերթին ազգային դատական մարմիններն են կոչված քննելու այդ պարտադիր շահի առկայության կողմ կամ դեմ խոսող հանգամանքները և դրանք ամրագրել ազատ արձակելու մասին միջնորդությունների կապակցությամբ կայացված իրենց որոշումներում: Հիմնականում այս որոշումներում նշված պատճառների և դիմումատուի բողոքներում սահմանված փաստերի հիման վրա է Դատարանը որոշում, թե արդյոք եղել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում: Ողջամիտ կասկածի առկայությունը, որ ձերբակալված անձը կատարել է իրավախախտում, հանդիսանում է sine qua non պայման՝ շարունակվող կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն արդեն բավարար չէ: Կոնվենցիայի նախադեպային իրավունքը զարգացրել է մինչև դատավճիռը անձին կալանքի տակ պահելու չորս հիմնական ընդունելի հիմքեր. մեղադրյալի՝ դատաքննության չներկայանալու վտանգը, վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը կամ կկատարի նոր իրավախախտումներ կամ կխախտի հասարակական կարգը: Եթե սահմանված հիմքերը «վերաբերելի են» ու «բավարար» Դատարանը պետք է նաև պարզի, թե արդյոք իրավասու ազգային մարմինները վարույթի ընթացքում ցուցաբերել են «հատուկ ջանասիրություն»: Քննության ծավալը և առանձնահատկություններն այս առումով գործոններ են, որոնք պետք է հաշվի առնվեն: Դատարանն ընդունում է, որ իրավախախտումները իրենց բնույթով շատ լուրջ էին և պատժվում էին խստագույն կերպով, այն է՝ ցմահ ազատազրկմամբ: Այնուհանդերձ, անձին մեղսագրվող ծանր հանցանքների կատարման հիմնավոր կասկածի առկայությունը թեև վերաբերելի գործոն է, սակայն չի կարող ինքնին արդարացնել մինչդատական վարույթում երկարաժամկետ կալանքը: Ինչ վերաբերում է դիմումատուի փախուստի դիմելու վտանգին, ապա Դատարանը նշում է, որ այս հիմքը անուղղակիորեն նշված է եղել 2002թ. հուլիսի 5-ի առաջին դատական որոշման մեջ, որով դիմումատուի նկատմամբ նշանակվել է կալանք: Այնուհանդերձ հաջորդ անգամ Հայաստանի դատարաններն ուղղակիորեն անդրադարձել են այս հիմքին 2006թ. փետրվարին՝ 2004թ. մայիսին դիմումատուի ձերբակալումից երկու տարի անց: Դատարանը համարում է, որ ներպետական դատարանների կողմից հիմնավորումների տրամադրումը նման մեծ ընդհատումներով չի կարող համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով դիմումատուի շարունակական կալանքը հիմնավորելու պահանջներին:(...) Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմումատուի ազատությունից զրկված լինելը, իշխանությունները պետք է գործեին հատուկ ջանասիրությամբ, ինչը նրանք չեն կատարել: Այս առումով դատարանը նշել է, որ վարույթի էական և անհարկի ձգձգումը վերագրելի է իշխանությունների վարքագծին: Վերջապես ոչ մի պատճառաբանություն չի տրվել 2006թ. հունիսի 2-ից մինչև հոկտեմբերի 16-ի չորս ամսվա ընդմիջման համար, որի ընթացքում բացարձակապես ոչ մի վարույթ չի իրականացվել: Այսպիսով, իշխանությունների կողմից ջանասիրության բացակայության պատճառով դիմումատուի կալանքը ընդհանուր առմամբ նվազագույնը մեկ ու կես տարով ձգձգվել է: Վերոնշյալ նկատառումները բավարար են

Դատարանի կողմից եզրահանգելու համար, որ դիմումատուն պահվել է շարունակական կալանքի տակ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտմամբ:

Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի

Գանգադ - 629/11

Վճիռ - 20.10.2016թ.

2010թ. օգոստոսի 2-ին դիմումատուն կամավոր ներկայացել էր ոստիկանության բաժին և խոստովանել, որ մարմնական վնասվածք էր հասցրել մեկ այլ անձի, որն իրեն սպառնացել է ատրճանակով: Դիմումատուն հանձնել էր նաև դանակն ու զենքը, որով սպառնացել էին իրեն: Նույն օրը քննիչը քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով հարուցել էր քրեական գործ և դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել չեռանալու մասին ստորագրությունը այն հիմնավորմամբ, որ գործի նյութերը բավարար հիմք են տվել ենթադրելու, որ դիմումատուն չէր թաքնվի վարույթն իրականացնող մարմնից, չէր խոչընդոտի և նոր հանցանք չէր կատարի:

2010թ. օգոստոսի 9-ին առաջադրված մեղադրանքը փոխարինել էր ՔՕ-ի 112-րդ հոդվածով՝ հիմք ընդունելով դատաբժշկական փորձաքննության արդյունքները, որոնց համաձայն՝ պատճառված վնասը եղել էր ծանր և կյանքին վտանգ սպառնացող:

Նույն թվականին քննիչը միջնորդություն էր ներկայացրել դատարան դիմումատուի նկատմամբ կալանք կիրառելու պահանջով, այն հիմնավորելով միայն հանցագործության բնույթով և վտանգավորության աստիճանով: Դիմումատուն առարկել էր միջնորդության դեմ՝ հիմնավորելով, որ կալանավորման համար կարծրատիպային պատճառաբանություն է ներկայացվել կամ պատժի խստության վրա հիմնվելը հակասում էր կոնվենցիայի 5-րդ հոդվածին:

2010թ. օգոստոսի 10-ին Լոռու մարզային դատարանը, լսելով դիմումատուին, բավարարել էր քննիչի միջնորդությունը՝ նույնպես հիմնվելով հանցագործության ծանրության վրա:

2010թ. օգոստոսի 12-ին դիմումատուն ներկայացրել էր վերաքննիչ բողոք՝ նշելով, որ իր կալանավորումը հակասում էր կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին: Մարզային դատարանը հաշվի չէր առել այն փաստը, որ քննիչի միջնորդության մեջ նշված չէր որևէ գործողություն, որը նա ընդհանուր առմամբ կարող էր կատարել: Դիմումատուն նշել էր, որ ներկայացել էր կամավոր՝ խոստովանական ցուցմունքով, ու օգնել քննությանը՝ ամեն անգամ ներկայանալով քննություն իրականացնող մարմնի կանչով, մասնակցելով տարբեր քննչական գործողություններին ու առերեսումներին, մարմիններին հայտնի էր եղել նրա ինքնությունը և բնակության վայրը: Հետևաբար դիմումատուն պնդում էր, որ խափանման միջոցը փոխելու և կալանք նշանակելու միակ պատճառն իր նկատմամբ առաջադրված մեղադրանքն ավելի ծանր մեղադրանքով փոխարինելն է եղել:

2010թ. սեպտեմբերի 3-ին Վերաքննիչ քրեական դատարանը որոշել էր անփոփոխ թողնել Մարզային դատարանի որոշումը:

2010թ. սեպտեմբերի 24-ին դիմումատուին ներկայացրել էր վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. հոկտեմբերի 29-ի որոշմամբ վարույթ չէր ընդունվել՝ հիմքերի բացակայության պատճառով:

2010թ. սեպտեմբերի 23-ին քննիչը միջնորդություն էր ներկայացրել՝ պահանջելով դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2010թ. հոկտեմբերի 9-ին, երկարացնել երկու ամսով՝ հիմնավորելով, որ դեռևս անհրաժեշտ էր կատարել մի շարք քննչական գործողություններ, բացի այդ, չէին վերացել դիմումատուի կողմից քննությունը խոչընդոտելու և նոր հանցագործություն կատարելու ռիսկերը: Դիմումատուին առարկել էր միջնորդության դեմ և պահանջել գրավի դիմաց ազատ արձակել իրեն: Մարզային դատարանը, 2010թ. հոկտեմբերի 4-ին քննության առնելով քննիչի միջնորդությունը, բավարարել էր այն, իսկ դիմումատուին մերժել: Դիմումատուին դատարանի որոշումը հոկտեմբերի 7-ին բողոքարկել էր վերաքննիչ դատարան: Հոկտեմբերի 20-ին վերաքննիչ դատարանը անփոփոխ էր թողել մարզային դատարանի որոշումը՝ գտնելով, որ այն հիմնավորված է և օրինական:

Դիմումատուին ներկայացրել էր վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2010թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ վարույթ չէր ընդունվել՝ հիմքերի բացակայության պատճառով:

2010թ. նոյեմբերի 8-ին դիմումատուին միջնորդություն էր ներկայացրել Լոռու մարզային դատարան՝ գրավով ազատ արձակելու պահանջով: 2010թ. նոյեմբերի 19-ին Մարզային դատարանը որոշել էր մերժել միջնորդությունը՝ գտնելով, որ դիմումատուի կալանավորման հիմքերը, ինչպես նշված էր իր նախորդ որոշման մեջ, դեռևս առկա էին: Այդ որոշումը ենթակա է եղել բողոքարկման Վերաքննիչ քրեական դատարան՝ տասնօրյա ժամկետում:

2010թ. նոյեմբերի 24-ին քննիչը ներկայացրել էր միջնորդություն՝ պահանջելով դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնել երկու ամիս ժամկետով: Դատարանը, դեկտեմբերի 3-ին քննելով միջնորդությունը, մասամբ բավարարել էր այն և կալանքի ժամկետը երկարացրել 15 օրով, իսկ գրավի դիմաց ազատելու դիմումատուի պահանջը մերժել՝ գտնելով, որ կալանքի տակ պահելու հիմքերը դեռևս չէին վերացել: Որոշումը ենթակա է եղել բողոքարկման վերաքննիչ դատարան:

2010թ. դեկտեմբերի 10-ին քննիչը միջնորդություն էր ներկայացրել դատարան կալանքի ժամկետը երկարաձգելու պահանջով, այն հիմնավորմամբ, որ մեղադրական եզրակացությունը դեռևս պատրաստ չէր, բացի այդ, չէին վերացել կալանքի տակ պահելու հիմքերը: Դատարանը դեկտեմբերի 15-ին քննության առնելով միջնորդությունը մասամբ բավարարել էր այն՝ երկարաձգելով կալանքի ժամկետը 15 օրով և եկել էր այն եզրակացության, որ այն «հնարավոր է համարել [դիմումատուի] նկատմամբ նշանակված կալանքը գրավով փոխարինելը»:

2010թ. դեկտեմբերի 16-ին դիմումատուին ազատ էր արձակվել՝ վճարելով Մարզային դատարանի կողմից նշանակված գրավի գումարը:

2011թ. հունվարի 25-ին քննիչը որոշել էր դադարեցնել դիմումատուի քրեական հետապնդումը, վերացնել գրավը և ավարտել քրեական գործով վարույթը այն հիմնավորմամբ, որ առողջությանը ծանր վնաս պատճառելը եղել էր ինքնապաշտպանության արդյունքում:

Դիմումատուն գանգատում նշել էր, որ տեղական դատարաններն իր կալանավորման համար չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով:

Դատարանը, քննության առնելով գանգատը, սույն գործով ևս, ինչպես նախորդ որոշումներում, անդրադարձել է կալանավորման ընդհանուր սկզբունքներին՝ նշելով, որ հիմնավոր կասկածը բավարար է անձի կալանավորման համար, սակայն որոշ ժամանակ անց անհրաժեշտ են լրացուցիչ հիմնավորումներ, դատարանը նշել է նաև, որ ազատությունից զրկելը օրինական կհամարվի, եթե ներկայացված պայմանները «հիմնավոր» և «բավարար» են, անդրադարձել է նաև վարույթն իրականացնող մարմինների պատշաճ ջանասիրության դրսևորման անհրաժեշտությանը: Դատարանը նաև վճռել է, որ կալանքի ցանկացած ժամկետի համար հիմնավորումը՝ անկախ դրանց կարճ լինելու հանգամանքից, պետք է համոզիչ ձևով ապացուցվի մարմինների կողմից: Ողջամիտ կասկածի առկայությունից բացի, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կալանավորման համար «հիմնավոր» և «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ կիրառվում է նախնական կալանք նշանակելու մասին առաջին որոշումը կայացնելու ժամանակ, այսինքն՝ ձերբակալելուց «անմիջապես» հետո (տե՛ս Բուլգարիա ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [ՄՊ] [Buzadji v. the Republic of Moldova [GC]], թիվ 23755/07, §§87 և 102, 2016 թվականի հուլիսի 5):

Կանխավարկածը միշտ պետք է գործի հօգուտ ազատ արձակման, իսկ ազատ արձակելուն կողմ և դեմ փաստարկները չպետք է լինեն ընդհանուր և վերացական: Մեղադրյալի թաքնվելու վտանգը չի կարող գնահատվել միայն նրան սպառնացող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատել՝ վկայակոչելով մի շարք այլ վերաբերելի գործոններ, որոնք կարող են կամ հաստատել թաքնվելու վտանգի առկայությունը կամ կարող են այնքան չնչին դարձնել, որ այն չի կարող հիմնավորել մինչդատական կալանքը (տես՝ ի թիվս այլ վճիռների, Letellier v. France, վերևում հիշատակված, Փիրուլյանի գործը, վերևում հիշատակված, §95):

Վարույթի պատշաճ իրականացումը մեղադրյալի կողմից խոչընդոտելու վտանգը չի կարող որպես հիմք ընդունվել in abstracto (վերացական ձևով), այն պետք է հիմնավորել փաստացի ապացույցներով (տես՝ Տրզասկան ընդդեմ Լեհաստանի [Trzaska v. Poland], թիվ 25982/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11):

Վերը ներկայացված սկզբունքերը կիրառելով քննարկվող գործի նկատմամբ՝ դատարանը եզրահանգել է, որ Մարգային դատարանը, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, որպես դիմումատուի կալանավորումը հիմնավորող հիմք է համարել դիմումատուի՝ թաքնվելու ու տուժողի և (կամ) վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով քննությունը խոչընդոտելու ռիսկը: Այնուամենայնիվ, Դատարանը նշել է, որ Մարգային դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական և կարծրատիպային ձևով այս հիմքերը նշելով՝ չներկայացնելով որևէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով և հիմնականում իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով ՔԴՕ-ի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ: Չի

տրվել որևէ բացատրություն այն հարցի վերաբերյալ, թե ինչու է քննիչի միջնորդությունը հիմնավորված և ինչու է անհրաժեշտ ստորագրությունը փոխարինել կալանքով, չնայած այն հանգամանքին, որ այդ միջնորդությունը հակասում էր քննիչի՝ ավելի վաղ արված այն եզրահանգմանը, որ դիմումատուն ամենայն հավանականությամբ չի կատարի որևէ անթույլատրելի արարք՝ ներառյալ թաքնվելը կամ քննությունը խոչընդոտելը: Մարզային դատարանը հաշվի չի առել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են քննության ընթացքում դիմումատուի վարքագիծը և անձնական բնույթի հանգամանքները, ինչպես նաև ցանկացած այլ վերաբերելի գործոն, չի դիտարկել նաև նրան գրավով ազատ արձակելու հնարավորությունը:

Դատարանը նշել է, որ դիմումատուի բողոքները և ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև քննիչի հետագա միջնորդությունները, որով պահանջում էր երկարացնել դիմումատուի կալանքի ժամկետը, դատարանների կողմից քննվել են միևնույն ձևով, միայն բացառություն է կազմել այն հանգամանքը, որ Վերաքննիչ քրեական դատարանը վկայակոչել է պատժի խստությունը՝ որպես ոչ պատշաճ վարքագծի հետ կապված ռիսկերը հիմնավորող հիմք: Այնուամենայնիվ, Դատարանի կարծիքով, միայն սա բավարար չէ՝ դիմումատուի կալանավորումը հիմնավորելու համար:

Դատարանը նաև նշում է, որ ի վերջո՝ չորս ամսից ավելի կալանքի տակ գտնվելուց հետո, դիմումատուն գրավով ազատ է արձակվել, սակայն չի ներկայացվել որևէ հիմնավորում այն մասին, թե ինչու հնարավոր չի եղել այդ միջոցն ավելի վաղ կիրառել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարել է, որ տեղական դատարանները, ողջամիտ կասկածների առկայությունից բացի, չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ՝ դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելու և դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար:

ՄԻԵԴ վճռի օրինակ, երբ դիմումատուի նկատմամբ տևական կալանավորումը Եվրոպական դատարանի կողմից դիտվել է Կոնվենցիայի 5(3)-րդ հոդվածի պահանջներին համահունչ

Մինասյանն ընդդեմ Հայաստանի

Գանգադ - 44837/08

Վճիռ - 08/04/14թ.

Այս գործով դիմումատուն բողոքել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել իր շարունակական կալանքի հիմքերը և պարզապես մեջբերել են համապատասխան իրավական դրույթներ՝ առանց իր գործի հատուկ հանգամանքների գնահատման:

Տվյալ գործով, գնահատելով դիմումատուի շարունակական կալանքի հիմքերը, Դատարանը նշել է, որ իրավասու դատական մարմինները առաջ են քաշել դիմումատուի ազատ արձակումը մերժելու չորս հիմնական պատճառ, մասնավորապես՝ 1) շարունակել են մնալ լուրջ կասկածներ դիմումատուի կողմից այն հանցագործությունը կատարելու վերաբերյալ, որի համար նրա դեմ մեղադրանք է առաջադրվել, 2) տվյալ իրավախախտման լուրջ բնույթը, 3) այն

փաստը, որ ազատ արձակվելու դեպքում դիմումատուն, հավանական է, որ կթաքնվեր վարույթն իրականացնող մարմին և կփոխեր արդարադատության իրականացման ընթացքը՝ հաշվի առնելով այն պատիժը, որը կնշանակվեր նրա նկատմամբ մեղավոր ճանաչվելու դեպքում, 4) դեռևս կար վտանգ, որ դիմումատուն նոր հանցագործություն կկատարեր:

Դատարանն ընդունում է, որ դիմումատուին առաջադրվող հիմնավոր, անհերքելի ապացույցների վրա հիմնված կասկածն այն հանցանքի համար, որի կատարման մեջ նա մեղադրվում է, առկա է եղել նրան կալանքի տակ պահելու ամբողջ ժամանակահատվածում: Դատարանը նաև համաձայնում է, որ չնայած նրան, որ դատախազն այնուհետև հանցագործությունը որակել է որպես ավելի թեթև ծանրության հանցանք, վարույթի ընթացքում հանցագործության վերաբերյալ փաստերը մնացել են անփոփոխ:

Ինչ վերաբերում է դիմումատուի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգին, Դատարանը նշում է, որ դատական մարմինները հիմնվել են այն հավանականության վրա, որ խիստ պատիժ կնշանակվեր դիմումատուի նկատմամբ՝ հաշվի առնելով հանցանքի ծանր բնույթը: Ներպետական դատարանները հիմնվել են նաև այն փաստի վրա, որ հանցանքից անմիջապես հետո դիմումատուն թաքնվել է և նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Մինչդեռ ճշմարիտ է այն, որ ներպետական դատարանները դիմումատուի կալանքի ամբողջ ժամանակահատվածում օգտագործել են այս հիմքի վերաբերյալ նույն պատճառաբանությունը և ժամանակի ընթացքում այս հիմքն անխուսափելիորեն դարձել է ավելի քիչ վերաբերելի, բայց դատարանը չի կարող միայն այս հիմքով եզրակացնել, որ համապատասխան մարմինները նրան կալանքի տակ պահելու համար չեն ունեցել հիմնավոր պատճառներ՝ նրա կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը կանխելու համար:

Ինչ վերաբերում է մյուս հիմքին՝ նոր հանցանք կատարելու վտանգին, Դատարանը նշում է, որ դիմումատուին առաջադրվել են սպանության և հրազենի գործադրմամբ անձանց երկու խմբերի միջև կռվի արդյունքում լուրջ վնասվածքներ պատճառելու մեղադրանքներ: Դատարանն այնուհետև նշում է, որ ներպետական դատարանները հիմնվել են երկու կողմերի միջև շարունակական թշնամանքի, ինչպես նաև այն փաստի վրա, որ դիմումատուի գույքը հրկիզվել էր նրա՝ կալանքի տակ պահվելու ընթացքում:

Ներպետական դատարաններն այս հանգամանքներն ամբողջությամբ վերցրած դիտել են որպես ռիսկի լուրջ ցուցանիշ, այն առումով, որ դիմումատուն, ազատության մեջ լինելով, կարող էր նոր հանցագործություն կատարել զոհի ընկերների և հարազատների նկատմամբ:

Վերջապես դատարանը դիտարկում է, որ դիմումատուի գործը որոշակի աստիճանի բարդություն ուներ, որը ներառում էր փաստերը պարզելու և մեղադրյալներից յուրաքանչյուրի ենթադրյալ պատասխանատվության աստիճանը որոշելու դժվարին խնդիր, ինչպես նաև դատաբժշկական ապացույցների հետազոտությունը՝ ներառյալ մի շարք փորձագետների եզրակացությունը:

Կողմերի ներկայացրած նյութերից պարզ է դառնում, որ քննության ինն ու կես ամսվա ընթացքում դատախազները ստացել են բազմաթիվ փորձագետների եզրակացություններ, հարցաքննել են դիմումատուին, կատարել են առերեսումներ նրա և վկաների միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռներով արձանագրված՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումների և իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք առավելապես պայմանավորված են ինչպես կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս, այնպես էլ դրա ժամկետը երկարացնելիս խափանման տվյալ միջոցը կիրառելու բավարար հիմնավորումների բացակայությամբ: Թեև Եվրոպական դատարանը, Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռներում հիմնականում անդրադարձել է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատական ակտերի պատճառաբանվածությանը, սակայն գաղտնիք չէ, որ դատական ակտերի ոչ բավարար չափով պատճառաբանվածությունը հետևանք է նաև դատարան պատշաճ հիմնավորումներ չպարունակող միջնորդություններ ներկայացնելու: Ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդությունների ոչ բավարար չափով պատճառաբանվածությունը հետևանք է:

ա) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերի պարզմանն ու հիմնավորմանն ուղղված բավարար միջոցներ չձեռնարկելու,

բ) նման փաստական տվյալների տիրապետելու դեպքում, անհետևողականության կամ չիմացության պատճառով խափանման միջոց կալանավորում կիրառելու բավարար հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քննիչի կողմից դրանք միջնորդության մեջ չարտացոլելու և չվերլուծելու,

Այսպես, առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթի քննչական բաժնի քննիչ Մ.Սահակյանը թիվ 11137715 քրեական գործով վարույթն իրականացնող մարմնից թաքնվող մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառել կալանավորումը: Ավելի քան 10 օր անց մեղադրյալի կողմից կամովին վարույթն իրականացնող մարմին ներկայանալուց հետո, նրա դեմ ցուցմունք տվող վկան հրաժարվել է առերեսմանը մասնակցելուց՝ ցուցմունքով հայտնելով իր նկատմամբ ապօրինի ներգործության մասին, որն արտահայտվել էր մեղադրյալի դեմ ցուցմունք չտալու համար նրան համոզելով և սպառնալով:

Հարցաքննության հաջորդ օրը քննիչ Մ.Սահակյանը միջնորդություն է ներկայացրել դատարան որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերահաստատելու վերաբերյալ, որը բառ անգամ չի պարունակել կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու նոր հիմքի առկայության մասին և չի անդրադարձել նաև նախկին հիմքին, որի հիման վրա վերահաստատվող որոշումը կայացվել էր: Այդ միջնորդությունը, որի քննարկման արդյունքում խափանման միջոցը փոխվել է, պարունակել է պատճառաբանություններ առավելապես այն մասին, թե ինչու է խափանման միջոց կալանավորումը կիրառվելուց հետո այն վերահաստատվում մեղադրյալի ներկայանալուց հետո և վերացական պնդում, որ խափանման միջոց կալանավորում կիրառելու հիմքերը չեն վերացել:

Ծանր հանցագործության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Հ.Աբրահամյանը՝ թիվ 49164416 քրեական գործով մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկու ամիս ժամանակով երկարացնելու մասին միջնորդությունը կից միջնորդությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել դատարան, բացի այդ, դատական նիստի ընթացքում նույնպես, քննիչը, հրապարակելով իր միջնորդությունը, չի ներկայացրել այն հիմնավորող նյութեր: Քննարկելով ներկայացված միջնորդությունը՝ դատարանն արձանագրել է, որ զրկված է հնարավորությունից՝ հետևություններ անելու առ այն, թե առկա՞ է արդյոք հիմնավոր կասկած, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, ազատության մեջ հայտնվելու դեպքում հավանական է արդյոք, որ նա կկատարի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը և նախաքննության մարմինը գործե՞լ է արդյոք պատշաճ ջանասիրությամբ: Ավելին, դատարանը նշել է, որ նույնիսկ զրկված է հնարավորությունից՝ դատողություններ անելու այն մասին, թե հանցագործության դեպքով հարուցվե՞լ է արդյոք քրեական գործ, ո՞վ է իրականացնում նախաքննությունը, ինչպիսի՞ մեղադրանք է առաջադրվել անձին և այլն: Արդյունքում դատարանը մերժել է քննիչի միջնորդությունը, իսկ մեղադրյալը կալանավորված անձանց պահելու վայրի վարչակազմի կողմից ազատ է արձակվել և նրա նկատմամբ ընտրվել է ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց:

գ) Կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ միջնորդությունը բացառապես քննությունը շարունակելու անհրաժեշտությամբ հիմնավորելու՝ մեղադրյալի պատշաճ վարքագիծը միայն կալանքի հետագա կիրառմամբ ապահովելու անհրաժեշտության վերաբերյալ փաստական տվյալներ չներկայացնելով և միջնորդության մեջ դրանք չվերլուծելով:

Հիմք ընդունելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի վերաբերյալ Եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումները՝ իրավակիրառ պրակտիկան կատարելագործելու և ի հայտ եկած թերացումները բացառելու համար.

ԿՈՆԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և կալանավորման ժամկետը երկարացնելու վերաբերյալ հիմնավոր միջնորդությունների պատրաստման և դատարան ներկայացնելու, մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի սկզբանական և շարունակական կալանավորման իրավաչափությանը ներկայացվող հետևյալ նվազագույն պահանջները.

1) Նախքան կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նշված հիմքերի առկայությունը պարզելու և հիմնավոր միջնորդություն ներկայացնելու

նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան դատավարական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Մասնավորապես.

ա. ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ պատշաճ ծանուցումը,

բ. կապի միջոցով կասկածյալին կամ մեղադրյալին ծանուցելու դեպքում գրավոր արձանագրել ծանուցման փաստը,

գ. կասկածյալի կամ մեղադրյալի բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնել ընտանիքի չափահաս անդամին, գրավոր արձանագրել ծանուցագիրը հանձնելու փաստը և ամրագրել վերջինիս ստորագրությամբ,

դ. անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել հնարավոր սեղմ ժամկետում անձին կրկնակի ծանուցելու ուղղությամբ,

ե. միջոցներ ձեռնարկել դատավարության այլ մասնակիցների նկատմամբ կասկածյալի կամ մեղադրյալի (այդ թվում՝ մինչև համապատասխան դատավարական կարգավիճակ ձեռք բերելը) կողմից հնարավոր ներգործություն կիրառելու դեպքերը պարզելու ուղղությամբ: Այս հանգամանքները պարզել ինչպես քննչական գործողությունների, այնպես էլ օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով,

զ. օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումների միջոցով պարզել մինչև հանցագործության կատարումը կասկածյալի կամ մեղադրյալի, տուժողի, վերջիններիս մերձավոր ազգականների միջև լարված, թշնամական հարաբերությունների առկայության հանգամանքը,

է. պարզել հանցանք կատարած անձի՝ նախկինում դատվածություն ունենալու, վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ թաքնվելու փորձ կատարելու հանգամանքները,

ը. պարզել հանցանք կատարած անձի՝ բնակության մշտական վայր, ընտանիք ունենալու հանգամանքը,

թ. օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական եղանակներով պարզել հանցանք կատարած անձի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս ունեցած կապերը, այն է՝ այլ պետությունում գույքի և ֆինանսական միջոցների, բարեկամական և ընկերական կապերի առկայությունը: Այդ մասին հարցադրումներ կատարել կասկածյալի կամ մեղադրյալի, նրա մերձավորների հարցաքննությունների ընթացքում, պարզել վերջին մի քանի տարվա ընթացքում տվյալ անձի սահմանահատումների քանակը և մեկնման ուղղությունները:

2) Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություններում մեղադրյալին մեղսագրվող արարքի հստակ ձևակերպումից զատ անհրաժեշտ է ներկայացնել այն փաստական տվյալները (մինչ այդ պահը ձեռք բերված ապացույցներ, օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալներ), որոնք առերևույթ հաստատում են մեղադրյալի առնչությունը (կապը) իրեն մեղսագրված հանցագործությանը: Ելնելով նախաքննության գաղտնիքի պահպանման, քննության վարման տակտիկական առանձնահատկություններից՝ միջնորդությանը կից նյութերը ենթակա են ներկայացման այն ծավալով, որ անաչառ դիտորդի

մոտ մեղսագրված հանցագործության հետ մեղադրյալի առերևույթ առնչությունը կասկածի տեղիք չտա, սակայն, մյուս կողմից, չվտանգվի վարույթի նորմալ ընթացքը:

3) Անհրաժեշտ է բացառել այն իրավիճակները, երբ **կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդություն** ներկայացնելիս հանցանք կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածը (մեղսագրվող հանցագործությանը անձի առնչությունը) հիմնավորվում է **բացառապես անանուն վկայի (տուժողի) ցուցմունքով**, երբ բացակայում են նման ցուցմունքը հաստատող՝ գործով ձեռք բերված այլ փաստական տվյալներ:

4) Վերագրվող հանցագործությանը մեղադրյալի առնչությունը հիմնավորող փաստական տվյալները ոչ միայն պետք է կցվեն կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությանը և ներկայացվեն դատարան, այլև անհրաժեշտ է **դրանք հնարավորինս մանրամասն վերլուծել նաև միջնորդության մեջ՝** ցույց տալու համար հիմնավոր կասկածի առկայությունը հիմնավորելիս դրանց ապացուցողական արժեքը:

5) Անհրաժեշտ է բացառել այն իրավիճակները, երբ առաջին անգամ անձին կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը հիմնավորվում է **բացառապես հանցանքը կատարելու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությամբ՝** առանց հիմնավորելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված խափանման միջոցի կիրառման հիմքերը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված կալանավորման հիմքերը փաստական տվյալներով հիմնավորելու հետ միաժամանակ անհրաժեշտ է բերել հիմնավոր պատճառաբանություններ առ այն, որ **այլ խափանման միջոցներն ի գորու չեն ապահովելու մեղադրյալի պատշաճ վարքագիծը:**

6) Անհրաժեշտ է բացառել այն իրավիճակները, երբ հանցագործության կատարման մեջ փաստացի կասկածվող անձի հետ վկայի կարգավիճակում տևական ժամանակ դատավարական գործողություններ կատարելուց հետո վերջինիս կալանավորման միջնորդություն է ներկայացվում դատարան՝ պայմանավորված **բացառապես նրան մեղադրանք առաջադրելու հանգամանքով:**

7) Անհրաժեշտ է բացառել այն մեղադրյալի կալանավորումը, ում նկատմամբ կիրառված է եղել ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց, եթե կալանավորումը պայմանավորված է **բացառապես նրա մեղադրանքի խստացմամբ:**

8) Անհրաժեշտ է բացառել այն իրավիճակները, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը, հիմնավոր կասկածի առկայությունը ներկայացնելուց բացի, փաստարկվում է **բացառապես** մեղսագրվող արարքի ծանրությամբ, սպասվող պատժի խստությամբ կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված՝ խափանման միջոցի կիրառման հիմքերի օրենսդրական ձևակերպումների **մեխանիկական մեջբերմամբ:**

9) Անհրաժեշտ է բացառել այն իրավիճակները, երբ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը պատճառաբանվում է **բացառապես քննությունը շարունակելու անհրաժեշտությամբ՝** առանց փաստական տվյալների վկայակոչմամբ հիմնավորելու, որ

մեղադրյալը կարող է խոչընդոտել հետագա քննությանը կամ կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այլ արարք:

10) Մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացվող միջնորդության մեջ անհրաժեշտ է հանգամանալից վերլուծության ենթարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված հիմքերը հիմնավորող հանգամանքները՝ հստակ հղում կատարելով դրանց հիմքում ընկած փաստական տվյալներին և մատնանշելով, թե կոնկրետ որ փաստական տվյալը կալանավորման կիրառման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որ հիմքն է հաստատում:

11) Մեղադրյալի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով մեղադրյալի կողմից մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հանգամանքը միջնորդության մեջ անհրաժեշտ է պատճառաբանել նաև (հղում կատարելով մեջբերված որոշումներին)՝

- ա. առկայության դեպքում, մեղադրյալի՝ «հանցավոր աշխարհի» հետ ունեցած կապերի վերաբերյալ փաստական տվյալների մատնանշմամբ, վարույթի նկատմամբ այդ հանգամանքի ունեցած ազդեցության վերաբերյալ համակողմանի վերլուծությամբ (տես՝ *Sopin v. Russia* գործով (57319/10) որոշումը, որտեղ այս հիմնավորմամբ ՄԻԵԴ-ը հոդված 5(3)-ի խախտում չի ճանաչել),

- բ. առկայության դեպքում, մեղադրյալի զգալի ֆինանսական կարողության՝ գործի քննության բնականոն ընթացքի վրա հնարավոր բացասական ազդեցության ռիսկով (տես՝ *Sopin v. Russia* գործով (57319/10) որոշումը, որտեղ այս հիմնավորմամբ ՄԻԵԴ-ը հոդված 5(3)-ի խախտում չի ճանաչել):

12) Նկատի ունենալով, որ քրեական վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու հավանականության մասին կարող է վկայել վերջինիս մոտ կեղծ փաստաթղթերի հայտնաբերումը, միջնորդություններում անհրաժեշտ է պատշաճ վերլուծել նման իրավիճակները (տես՝ *Topekhin v. Russia* գործով (78774/13) որոշումը, որտեղ այս հիմնավորմամբ ՄԻԵԴ-ը հոդված 5(3)-ի խախտում չի ճանաչել):

13) Եթե մեղադրյալին մեղսագրվում է մի խումբ անձանց հետ կամ կազմակերպված խմբի կազմում հանցանքի կատարում, նրա կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու ճանապարհով մինչդատական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու հանգամանքը հիմնավորելիս միջնորդության մեջ անհրաժեշտ է հիմնավորել կատարված հանցագործության քննության բարդությունը, դրան մեկից ավելի անձանց ներգրավվածությունը, մեղադրյալների կամ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձանց (կամ նրանց մի մասի) ինքնությունն անհայտ լինելը, վարույթն իրականացնող մարմնից նրանց թաքնվելը:

Միջնորդության մեջ պետք է հիմնավորվի, որ գործի բարդությամբ պայմանավորված՝ տևական քննություն է անհրաժեշտ հանցագործությանը ներգրավված բոլոր մասնակիցների ինքնությունը և մասնակցության աստիճանը պարզելու համար և պայմանավորված հնարավոր ճնշումների առկայության պայմաններում խմբի յուրաքանչյուր անդամի դերակատարումը

պարզելու անհրաժեշտությամբ, վերջիններիս միմյանց նկատմամբ հնարավոր ազդեցությունը բացառելը առավել քան կարևոր է (տես՝ *Amirov v. Russia* գործով (51857/13) որոշումը, որտեղ այս հիմնավորմամբ ՄԻԵԴ-ը հողված 5(3)-ի խախտում չի ճանաչել):

14) Մեղադրյալի կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու հանգամանքը անհրաժեշտ է հիմնավորել՝ հիմք ընդունելով մեղադրյալի նախկինում կամ տվյալ պահին զբաղեցրած պաշտոնը, հասարակական դիրքը, դրանով պայմանավորված՝ կայուն սոցիալական կապերը, որոնց միջոցով վերջինս կարող է անօրինական ազդեցություն գործադրել դատավարությանը մասնակցող անձանց վրա, ինչպես նաև այլ կերպ խոչընդոտել վարույթն իրականացնող մարմնի կողմից ապացույցների հավաքմանը:

15) Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը պետք է բովանդակի գործի քննությունն ապահովելու ուղղությամբ քննության մարմնի դրսևորած պատշաճ ջանասիրությունը հիմնավորելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ ցույց տալով արդեն իսկ կատարված դատավարական գործողությունների ծավալը, ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել կատարվելիք գործողությունների մասին տվյալներ այն ծավալով, որը մարտավարական նկատառումների հաշվառմամբ չի խոչընդոտի քննության նորմալ ընթացքը: Ընդ որում, միջնորդությունը պետք է նաև բովանդակի հիմնավորումներ առ այն, թե նշված դատավարական գործողություններն ինչու ավելի վաղ կամ մինչ այդ պահը չէին կարող կատարվել, ինչպես նաև տեղեկություններ պաշտպանության կողմի ներկայացրած միջնորդությունների բավարարման արդյունքում կատարված դատավարական գործողությունների վերաբերյալ:

16) Հիմք ընդունելով առաջին ատյանի դատարանում կալանավորման միջնորդության քննարկման ընթացքում պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկները և հաշվի առնելով, որ առաջին ատյանի դատարանի կողմից միջնորդությունը բավարարելու դեպքում այդ փաստարկներն արտացոլվելու են վերաքննիչ բողոքում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննությունը ներկայացված փաստարկները հերքող փաստական տվյալներ ձեռք բերելու և բողոքի քննության ընթացքում վերաքննիչ դատարանին պաշտպանության կողմի ներկայացրած փաստարկներն ու պատճառաբանությունները հերքող հիմնավորումներ ներկայացնելու համար:

17) Մեղադրյալի՝ տևական ժամանակ կալանավորված լինելու դեպքում վերջինիս գրավի կիրառմամբ ազատ արձակելու միջնորդության քննարկման ժամանակ, եթե քննիչը կամ դատախազը չեն առարկում անձին գրավով ազատելու դեմ, անհրաժեշտ է պատճառաբանել, թե ինչու գրավով ազատելը հնարավոր չէր նախկինում:

18) Եթե մեղադրյալի կալանավորումը պայմանավորված է բացառապես վերջինիս թաքնվելու հավանականությամբ, անհրաժեշտ է չառարկել կալանքը գրավով փոխելու միջնորդության դեմ, եթե խափանման այդ միջոցը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը:

19) Կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդություններում անհրաժեշտ է բացառել բացառապես քրեական գործը դատարան ուղարկելու նպատակով կալանավորման ժամկետը երկարացնելու անհրաժեշտության (որպես կանոն՝ ուղղված մեղադրյալի կալանքի ժամկետը լրացուցիչ 15 օրով երկարացնելուն) վերաբերյալ պատճառաբանությունները:

2. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին (նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազներին)՝

1) ձեռնարկել դատախազական հսկողության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու յուրաքանչյուր դեպքում ապահովելու համար սույն որոշման 1-ին կետում նշված պահանջների անշեղ կատարումը,

2) անհապաղ կալանքից ազատել անհիմն կամ ապօրինի կալանքի տակ գտնվող անձանց:

3. Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազներին՝

1) մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացվելուց հետո ներկայացված միջնորդության և դատական ակտի ուսումնասիրության արդյունքում.

ա) սեղմ ժամկետում բողոքարկել առաջին ատյանի դատարանի անհիմն կամ ապօրինի դատական ակտը, նախաձեռնել վերաքննիչ դատարանի դատական ակտի բողոքարկումը,

բ) սույն որոշման առաջին կետում նշված պահանջների չպահպանման հետևանքով դատարանի կողմից միջնորդությունը հիմնավոր մերժվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում վարույթ իրականացնող քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել:

Վերը նշվածի վերաբերյալ անհապաղ, ըստ համապատասխան իրավասության սահմանների, հայտնել ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն կամ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն, իսկ ստանալուց հետո անհապաղ ուղարկել կայացված դատական ակտի պատճենը:

2) Մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը՝ միջնորդության հետ միասին, ուղարկել ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչություն

կամ ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն:

4. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության ու կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետերին՝

սույն որոշման 3-րդ կետում նշված դատավարական փաստաթղթերի պատճենները ստանալուց հետո՝ անհապաղ ուսումնասիրել դրանց հիմքերը և արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

5. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչությունների պետերին՝

1) մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացվելուց հետո ներկայացված միջնորդության և դատական ակտի ուսումնասիրության արդյունքում.

ա) սեղմ ժամկետում բողոքարկել առաջին ատյանի դատարանի անհիմն կամ ապօրինի դատական ակտը, նախաձեռնել վերաքննիչ դատարանի դատական ակտի բողոքարկումը,

բ) սույն որոշման առաջին կետում նշված պահանջների չպահպանման հետևանքով դատարանի կողմից միջնորդությունը հիմնավոր մերժվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում վարույթ իրականացնող քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել:

2) Ուսումնասիրել մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ միջնորդությունը և դրա քննության արդյունքում կայացված դատական ակտը և արդյունքները ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

6. Կայազորների զինվորական դատախազներին՝

մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացվելուց հետո ներկայացված միջնորդության, դատական ակտի ուսումնասիրության արդյունքում.

ա) սեղմ ժամկետում բողոքարկել առաջին ատյանի դատարանի անհիմն կամ ապօրինի դատական ակտը, նախաձեռնել վերաքննիչ դատարանի դատական ակտի բողոքարկումը,

բ) սույն որոշման առաջին կետում նշված պահանջների չպահպանման հետևանքով դատարանի կողմից միջնորդությունը հիմնավոր մերժվելու կամ մասնակի բավարարվելու

դեպքում վարույթ իրականացնող քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել:

Վերը նշվածի վերաբերյալ անհապաղ հայտնել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժին, իսկ ստանալուց հետո՝ անհապաղ, ուղարկել կայացված դատական ակտի պատճենը:

2) Մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ միջնորդության քննության արդյունքում կայացված դատական ակտը՝ միջնորդության հետ միասին ուղարկել ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժին:

7. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի պետին՝

սույն որոշման 3-րդ կետում նշված դատավարական փաստաթղթերի պատճենները ստանալուց հետո՝ անհապաղ ուսումնասիրել դրանց հիմքերը և արդյունքները ներկայացնել ՀՀ զինվորական դատախազին:

8. ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության՝ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում քննվող գործերով բաժնի պետին՝

1) մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտ կայացվելուց հետո ներկայացված միջնորդության, դատական ակտի ուսումնասիրության արդյունքում.

ա) սեղմ ժամկետում բողոքարկել առաջին ատյանի դատարանի անհիմն կամ ապօրինի դատական ակտը, նախաձեռնել վերաքննիչ դատարանի դատական ակտի բողոքարկումը,

բ) սույն որոշման առաջին կետում նշված պահանջների չպահպանման հետևանքով դատարանի կողմից միջնորդությունը հիմնավոր մերժվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում վարույթ իրականացնող քննիչի նկատմամբ ծառայողական քննություն իրականացնելու միջնորդություն ներկայացնել:

2) Ուսումնասիրել մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ միջնորդությունը և դրա քննության արդյունքում կայացված դատական ակտը և արդյունքները ներկայացնել ՀՀ զինվորական դատախազին:

9. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը մերժելու, նշված միջնորդությունը մասնակի բավարարելու մասին ընդհանուր իրավասության առաջին ատյանի կամ վերաքննիչ

դատարանի դատական ակտերը բողոքարկելու հիմքերի բացակայության դեպքում, ինչպես նաև երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ անգամ մեղադրյալի նկատմամբ ընտրված կալանավորման ժամկետն առանց բավարար հիմքերի և հիմնավորումների երկարացնելու դեպքերում, վեր հանել գործը քննող քննիչի և հսկող դատախազի կողմից թույլ տրված թերացումները և արդյունքները զեկուցագրով ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2. «Արդար դատաքննության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների արդյունավետ կիրառման հարցը»

Ձեկուցող՝

ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյան:

Արտահայտվեցին Ա.Դավթյանը, Ա.Ասատրյանը, Մ.Համբարձումյանը և Թ.Պետրոսյանը:

Լսելով և քննարկելով Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ Գ.Բաղդասարյանի զեկույցը՝ ՀՀ դատախազության կոլեգիան նշում է.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության» մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

3.Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

(...):»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով երաշխավորված հակընդդեմ հարցման իրավունքը արդար դատաքննության հիմնարար իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկն է: Արդար դատաքննության իրավունքի ապահովման համատեքստում դրա կարևորությունը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից այդ իրավունքի իրացումն ապահովող պայմանների հետևողական խստացումը պայմանավորում են ՀՀ քրեական դատավարությունում դրա երաշխավորմանն ուղղված միջոցներն ավելի արդյունավետ դարձնելուն ուղղված գործուն քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

1.Եվրոպական դատարանի իրավունքը

Վկա հասկացության ինքնավարությունը

«Վկա» հասկացությունը Կոնվենցիայի համակարգում ունի ինքնավար նշանակություն՝ անկախ ներպետական իրավունքում դրա դասակարգումից: Այն դեպքում, երբ ցուցմունքները կարող են որպես հիմք ծառայել անձի դատապարտման համար, դրա նկատմամբ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված երաշխիքները կիրառելի են (*Damir Sibgatullin v. Russia*, § 45; *S.N. v. Sweden*, § 45, *Kaste and Mathisen v. Norway*, § 53; *Lucà v. Italy*, § 41):

Այդ հասկացությունն իր մեջ ներառում է մեղադրյալին (*Trofimov v. Russia*, § 37), տուժողին (*Vladimir Romanov v. Russia*, § 97, *A.H. v. Finland*, § 41), փորձագետ-վկային (*Doorson v. the Netherlands*, §§ 81-82), անձին, ով թեև չի հարցաքննվել գործով, բայց նրա կողմից տրված փաստաթղթերը դրվել են մեղադրանքի հիմքում (*Chap LTD v. Armenia*):

Բացի այդ, դատարանի իրավունքում ակնհայտ միտում կա, որ քննարկվող դրույթը հնարավորինս կիրառելի է նաև փաստաթղթային ապացույցների նկատմամբ: Դատարանն արդեն իսկ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի ներքո քննարկել է փաստաթղթային ապացույցների (*Perna v. Italy*, § 25-32), բնօրինակ փաստաթղթերի և համակարգչային տեղեկությունների (*Georgios Papageorgiou v. Greece*, § 7), և օպերատիվ միջոցառմանը վերաբերող փաստաթղթերի (*Mirilashvili v. Russia*, § 158-159) մատչելիության հարցերը:

Հիմնական սկզբունքը և բացառությունները

Նկատի ունենալով այն տեղը, որն ունի արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում, պաշտպանության կողմի իրավունքները սահմանափակող միջոցները պետք է լինեն ծայրահեղ անհրաժեշտ (*Van Mechelen and Others v. the Netherlands*, § 58): Ամբաստանյալի հնարավորությունը՝ հակընդդեմ հարցման ենթարկել վկային դատարանի ներկայությամբ, արդար դատաքննության կարևոր տարրն է: (*Tarău v. Romania*, § 74; *Graviano v. Italy*, § 38).

Բոլոր ապացույցները, սովորաբար, պետք է ներկայացվեն հրապարակային լսումների ժամանակ՝ մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցության սկզբունքով փաստարկներ ներկայացնելու համար: Այս սկզբունքից բացառություններ հնարավոր են, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության իրավունքները, համաձայն որոնց, որպես կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին տրվի վիճարկելու եւ իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու համարժեք եւ պատշաճ հնարավորություն կամ նրա կողմից ցուցմունք տալու ժամանակ, կամ հետագա փուլերում: (*Khodorkovskiy and Lebedev v. Russia*, § 707; *Hümmer v. Germany*, § 38; *Lucà v. Italy*, § 39; *Solakov v. the former Yugoslav Republic of Macedonia*, § 57):

Վերոհիշյալ ընդհանուր սկզբունքից բխում են երկու պահանջներ.

1. վկայի չներկայանալու համար պետք է լինի հիմնավոր պատճառ,
2. երբ դատապարտումը բացառապես կամ որոշիչ չափով հիմնված է ցուցմունքների վրա, որոնք տրվել են անձի կողմից, որին ամբաստանյալը քննելու հնարավորություն չի ունեցել թե՛ նախաքննության ընթացքում և թե՛ դատաքննության ժամանակ, պաշտպանության կողմի

իրավունքները կարող են սահմանափակվել այն աստիճան, որն անհամատեղելի է 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների հետ («միակ կամ որոշիչ կանոն») (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], § 119*):

Հարգելի և հիմնավոր պարճառ՝ վկայի չներկայանալու համար.

Պետությունները պարտավոր են դրական քայլեր ձեռնարկել՝ ապահովելու, որպեսզի մեղադրյալը կարողանա հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկային: Եթե իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու մեղադրյալի իրավունքը հնարավոր չէ ապահովել վկայի բացակայության պատճառով, պետությունները պետք է ողջամիտ ջանքեր գործադրեն նրա ներկայությունն ապահովելու համար (*Karpenko v. Russia, § 62; Damir Sibgatullin v. Russia, § 51; Pello v. Estonia, § 35; Bonev v. Bulgaria, § 43; Trofimov v. Russia, § 33; Sadak and Others v. Turkey, § 67*): Դատարանը վերահաստատում է, որ ընդհանուր առմամբ ցուցաբերել է ողջամիտ մոտեցում՝ որոշելու համար՝ արդյոք ներպետական դատարանն ունեցել է հիմնավոր փաստական կամ իրավական հիմքեր՝ դատաքննությանը վկայի ներկայությունը չապահովելու համար: **Այն գտել է, որ վկայի բացակայությունն այն երկրից, որտեղ անցկացվել է վարույթը, ինքնին բավարար հիմք չէ դատաքննությունից նրա բացակայության փաստը հիմնավորելու համար** (*Seton v. the United Kingdom, § 61*): Մասնավորապես, վկայի գտնվելու վայրը հայտնի չլինելու դեպքում Դատարանը գտել է, որ իշխանությունները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» եւ ձեռնարկեն «բոլոր ողջամիտ միջոցները վկայի ներկայությունն ապահովելու համար» (*Lučić v. Croatia, § 79*):

Երբեմն, գործի հանգամանքներով պայմանավորված՝ անհրաժեշտ է լինում հիմնվել նախաքննական ցուցմունքների վրա, երբ օրինակ, վկան մահացել է, օգտվում է լռելու իրավունքից կամ երբ իշխանությունների ողջամիտ ջանքերը նրան ներկայացնելու ուղղությամբ արդյունք չեն տվել: (*Lucà v. Italy, § 40*), *Mika v. Sweden, § 37; Ferrantelli and Santangelo v. Italy, § 52*) (*Vidgen v. the Netherlands, § 47; Sofri and Others v. Italy; Craxi v. Italy, § 86*), (*Mirilashvili v. Russia, § 217*).

Վախի պատճառով բացակայությունը պահանջում է ավելի խորը քննություն: Պետք է տարբերել երկու տեսակի վախ. վախ, որը վերագրելի է ամբաստանյալի կամ նրա անունից գործող այլ անձանց կողմից կատարված սպառնալիքներին կամ այլ գործողություններին և ընդհանուր վախ, թե ինչ կպատահի, երբ վկան ցուցմունք տա դատավարության ժամանակ:

Երբ վկայի վախը վերագրելի է ամբաստանյալին կամ նրա անունից գործող անձանց, ապա ճիշտ է թույլ տալ, որ այդ վկայի ցուցմունքը ներկայացվի դատավարությանը առանց վկայի կողմից կենդանի վկայություն տալու կամ ամբաստանյալի կամ նրա ներկայացուցիչների կողմից քննվելու անհրաժեշտության, եթե նույնիսկ այդ վկայությունը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ և որոշիչ վկայությունն է: Թույլ տալ, որ ամբաստանյալն օգտվի վկաների մեջ առաջացրած վախից, անհամատեղելի է տուժողի և վկաների իրավունքների հետ: Ոչ մի դատարան չպետք է թույլ տա, որ իր դատաքննության արդարությունը խաթարվի նման կերպ: **Հետևաբար, ամբաստանյալին, որը նման կերպ է վարվել, պետք է դիտարկել որպես անձ,**

ով հրաժարվել է վկային քննելու՝ 6-րդ հոդվածի 3 (դ) կետով սահմանված իր իրավունքից: Նույն եզրակացությունը պետք է կիրառել, երբ սպառնալիքները կամ գործողությունները, որոնք հանգեցնում են նրան, որ վկան վախենա վկայություն տալ, կատարվում են անձանց կողմից, ովքեր գործում են ամբաստանյալի անունից կամ նրա իմացությամբ և հավանությամբ:

Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ վկաները հիմնականում ունենում են վկայություն տալու ընդհանուր վախ և ոչ թե վախ, որը ուղղակիորեն վերագրելի է սպառնալիքներին, որոնք արվում են ամբաստանյալի կամ նրա գործակալների կողմից: Ուստի, կարիք չկա, որ վկայի վախը ուղղակիորեն վերագրելի լինի ամբաստանյալի կողմից արված սպառնալիքներին որպեսզի վկան ազատվի դատավարության ընթացքում վկայություն տալուց: Ավելին, մեկ այլ անձի մահվան կամ մարմնական վնասվածքի կամ ֆինանսական կորստի վախը տեղին նկատառումներ են որոշելիս՝ արդյոք վկայից պետք է պահանջել տալ բանավոր վկայություն: Սակայն, սա չի նշանակում, որ վկայի ցանկացած սուբյեկտիվ վախ կբավականացնի: Գործը քննող դատավորը պետք է իրականացնի պատշաճ հարցում նախ պարզելու՝ արդյոք այդ վախն ունի օբյեկտիվ հիմքեր և հետո որոշելու՝ արդյոք կան այդ օբյեկտիվ հիմքերի մասին վկայող ապացույցներ:

(...)

Նկատի ունենալով, թե ինչպես է վկայի բացակայությունը բացասաբար անդրադառնում պաշտպանության կողմի իրավունքների վրա՝ Դատարանը շեշտում է, որ երբ վկան չի քննվել դատաքննության ցանկացած առաջնային փուլում, վկայի գրավոր ցուցմունքը դատավարության ժամանակ կենդանի վկայության փոխարեն թույլատրելի պետք է լինի վերջին ու ծայրահեղ միջոց: Մինչ վկան կազատվի վկայություն տալուց վախի հիմքով, գործը քննող դատավորը պետք է համոզվի, որ բոլոր առկա այլընտրանքները, ինչպիսիք են վկայի անանունությունը և այլ հատուկ միջոցառումներ, անհարմար են կամ անարդյունավետ (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*):

Կոնվենցիայով երաշխավորված իրավունքն իրականացնելուց հրաժարումը պետք է լինի ուղղակի, հստակ և աներկբա (*Colozza v. Italy*, § 28):

«Միակ կամ որոշիչ» կանոն

Միակ կամ որոշիչ կանոնի արմատները *Unterpertinger-ի* գործով որոշման մեջ են, որտեղ դատարանը նկատի էր առել, որ մեղադրանքը հիմնվել է նաև այլ ապացույցների վրա՝ վիճարկվողներից բացի (*Unterpertinger v. Austria* § 33): Բայց դատարանն ավելի ուշ ավելի մանրամասն է անդրադարձել այդ կանոնին:

Վկայի ցուցմունքները, որոնք ստացվել են այնպիսի պայմաններում, երբ պաշտպանության իրավունքները չեն ապահովվել այնպես, ինչպես Կոնվենցիան է պահանջում, պետք է քննարկվեն հատուկ ուշադրությամբ (*S.N. v. Sweden*, § 53; *Doorson v. the Netherlands*, § 76).

Եթե վկային հնարավոր չի եղել դատարանում խաչաձև հարցաքննել հարգելի պատճառով, ներպետական դատարանները կարող են հիմնվել նրանց մինչդատական

ցուցմունքների վրա, եթե դրանք հաստատվում են այլ ապացույցներով (*Mirilashvili v. Russia, Scheper v. the Netherlands, Calabrò v. Italy and Germany*;; *Ferrantelli and Santangelo v. Italy*):

«Միակ կամ որոշիչ կանոնի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալի դատապարտումը բացառապես կամ հիմնականում հիմնված է այն վկաների տված ցուցմունքների վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի որեւէ փուլում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են: «Միակ» բառը ամբաստանյալի դեմ ուղղված միակ վկայության իմաստով (*Saidi v France*), ըստ էության, դժվարություններ առաջ չի բերում: Առավել բարդ է «որոշիչ» հասկացության մեկնաբանությունը: «Որոշիչ»–ը այս համատեքստում նշանակում է ավելին, քան «ապացուցողական նշանակություն ունեցող»: Այն նաև նշանակում է ավելին, քան, որ առանց տվյալ ապացույցի դատապարտման հնարավորությունները կնվազեն, իսկ արդարացմանը կմեծանան: «Որոշիչ» բառը պետք է ընկալվի նեղ իմաստով՝ որպես միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է հիմնավորող ապացույցների ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ: Քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի վարույթի արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, «միակ կամ որոշիչ» կանոնը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

(...)

Եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքն ամբաստանյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ ապացույցն է, ապա այն որպես ապացույց ճանաչելը մեխանիկորեն չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միևնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ որոշիչ հիմք են հանդիսանում քննությունից բացակայող վկաների ցուցմունքները, ապա Դատարանը գործը պետք է առավել մանրազնին քննության ենթարկի: Այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուց բխող վտանգներից ելնելով՝ դա շատ կարևոր գործոն է հավասարակշռությունն ապահովելու հարցում, եւ դրա համար անհրաժեշտ են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ ծանրակշիռ ընթացակարգային երաշխիքների առկայություն: Յուրաքանչյուր գործում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ այդ ապացույցների հավաստիության արդարացի եւ պատշաճ գնահատումը թույլատրող միջոցներ: Դա կարող է թույլ տալ դատապարտման հիմքում դնել այդպիսի ապացույցներ միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի են՝ գործի համար դրանց կարևորությունից ելնելով (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*):

Երկու պահանջների արժեքը և քննարկման հերթականությունը:

Բացակա վկայի չներկայանալու պատճառն այն առաջնային հարցն է, որը պետք է քննել մինչ որոշելը, թե արդյոք այդ վկայությունը միակն է և որոշիչը: Նույնիսկ այն դեպքում, երբ բացակա վկայի ցուցմունքը չի եղել միակը և որոշիչը, դատարանն արձանագրել է 6-րդ հոդվածի 1-ին և 3 (դ) կետերի խախտում, **երբ վկային քննել չկարողանալու հիմնավոր պատճառ չի եղել** (*Ludi v. Switzerland, Bonev V. Bulgaria, Mild and Virtane v Finland, Pelon v Estonia*): Սա պայմանավորված է նրանով, որ, որպես կանոն, վկաները պետք է վկայություն տան դատավարության ընթացքում և, որ ողջամիտ ջանքեր պետք է ներդրվեն երաշխավորելու նրանց ներկայությունը: Ուստի, երբ վկաները չեն ներկայանում կենդանի վկայություն տալու համար, անհրաժեշտ է տեղեկանալ՝ արդյոք այդ բացակայությունն արդարացված է, թե ոչ: **Վկայի չներկայանալու մի շարք պատճառներ կարող են լինել, բայց սույն դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել միայն մահվան կամ վախի պատճառով բացակայությունը:** (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom [GC], § 119*).

Շաչաշվիլի գործով Դատարանը սահմանել է, որ վկայի՝ քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին որոշիչ լինել դատաքննությունն անարդարացի համարելու հարցում՝ չնայած այն շատ կարեւոր գործոն է ընդհանուր արդարացիության գնահատման ժամանակ հավասարակշռության մեջ դիտարկելու համար և կարող է որոշիչ կերպով փոխել այդ հավասարակշռությունը 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելիս: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն էր պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, թե՛ ոչ, այն պետք է ուսումնասիրեր ոչ միայն բավականաչափ հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում քննությունից բացակայող վկայի ցուցմունքը միակ կամ որոշիչ հիմքն է հանդիսացել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաեւ այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը եղել է միակ եւ որոշիչ հիմքը, թե՛ ոչ, սակայն դրա հետ մեկտեղ համոզվել է, որ այն կարեւոր նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը կարող է նշանակալիորեն սահմանափակել պաշտպանության իրականացման հնարավորությունը: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է քննությունից բացակայող վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարեւոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարեւոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (*Seton v. the United Kingdom, § 59, Schatschaschwili v. Germany § 111-131*):

Անանուն վկաներ կամ չհետազոտված ապացույցներ

Մեղադրական դատավճիռ կայացնելիս անանուն վկաներից ստացված վկայությունների օգտագործումը չի կարող բոլոր դեպքերում համարվել անհամատեղելի Կոնվենցիայի հետ: Թեև վկաների իրավունքների պաշտպանությունը ներառված չէ 6-րդ հոդվածում, սակայն նրանց

կյանքը, ազատությունն ու անվտանգությունը կարող են վտանգի ենթարկվել, ինչը որպես կանոն ընկնում է 8-րդ հոդվածի պաշտպանության տակ:

Վկաների և տուժողների այդպիսի շահերի պաշտպանությունն իրականացվում է, սկզբունքորեն, կոնվենցիայի այլ հոդվածներով, համաձայն որոնց պայմանավորվող պետությունները պետք կազմակերպեն իրենց քրեական դատավարություն այնպես, որ այդ շահերը չվտանգվեն: Այդ պայմաններում արդար դատաքննության սկզբունքները պահանջում են նաև, որ համապատասխան դեպքերում պաշտպանության շահերը համաչափ լինեն այն վկաների և տուժողների շահերին, որոնց հրավիրել են դատարան ցուցմունք տալու: Սակայն, եթե մեղադրանքի վկաների անանունությունը պահպանվում է, պաշտպանությունը բխվում է այնպիսի դժվարությունների հետ, որոնք քրեական գործերի քննության ժամանակ որպես կանոն չպետք է լինեն:

Այդպիսի դեպքերում 6-րդ հոդվածի 1-ին կետը և և 3-րդ կետի դ) ենթակետը պահանջում են, որ այդ դժվարությունները բավարար չափով հավասարակշռվեն դատական ընթացակարգերով: Եվ վերջապես, պետք է հիշել, որ **մեղադրական դատավճիռը չի կարող հիմնվել միայն կամ որոշիչ չափով անանուն պնդումների վրա** (*Doorson v. the Netherlands*):

Չնայած անանուն և բացակա վկաների խնդիրները նույնը չեն, բայց երկու իրավիճակները սկզբունքորեն տարբեր չեն, քանի որ, դրանցից յուրաքանչյուրը հանգեցնում է պաշտպանյալի համար հնարավոր վտանգի: Հիմնական սկզբունքն այն է, որ պաշտպանյալը պետք է քրեական դատավարության ժամանակ ունենա իր դեմ ուղղված վկայությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն: Այս սկզբունքը ոչ միայն պահանջում է, որ պաշտպանյալը պարզապես իմանա իրեն մեղադրողների ինքնությունը, որպեսզի կարողանա վիճարկել նրանց անաչառությունը, այլև պահանջում է, որ պաշտպանյալը կարողանա ստուգել նրանց վկայության ճշմարտացիությունը և վստահելիությունը, իր ներկայությամբ նրանց բանավոր քննելով վկայի՝ վկայություն տալու ժամանակ կամ էլ դատավարության հետագա այլ փուլերում: (*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom*)

Ամբաստանյալին մեղադրող վկայությունը կամ այլ հայտարարություններ կարող են միտումնավոր անճշմարտացի կամ պարզապես սխալ լինել և պաշտպանության կողմը դժվար թե կարողանա դա ցույց տալ, եթե վերջինս չունի տեղեկություն, որով կարելի կլիներ ստուգել հեղինակի վստահելիությունը կամ կասկածի տակ դնել նրա արժանահավատությունը: Այսպիսի իրավիճակներում առկա վտանգներն ակնհայտ են:

Չնայած գործը քննող դատարանները զգուշություն են ցուցաբերել վիճարկվող գրավոր վկայությունները գնահատելիս, սա դժվար թե համարվեր ուղղակի զննման պատշաճ փոխարինում: Այսպիսով՝ այն եզրակացրել է, որ վկայության օգտագործումը ներառում է պաշտպանության կողմի իրավունքների սահմանափակումներ, որոնք անհամատեղելի են 6-րդ հոդվածում ամրագրված երաշխիքների հետ (*Kostovska v. the former Yugoslav Republic of Macedonia*):

Դատարանը պատճառ չի տեսնում հեռանալու Կոստովսկու գործով վճռի եզրակացությունից, համաձայն որի ամբաստանյալի դեմ ուղղված մեղադրական վկայությունը

կարող է լինել «միտումնավոր անճշմարտացի կամ պարզապես սխալ»: Ավելին, երդման ներքո չտրված վկայությունները, որոնք արվել են վկաների կողմից, որոնք չեն կարող հարցաքննվել, հաճախ նրանց անառարկելի կամ համոզիչ են թվում և, ինչպես դատավոր Սեդլին է նշել, «գայթակղիչ լինելու աստիճանի հեշտ» է եզրակացնել, որ ամբաստանյալը չի կարող դատապարտվել: Փորձը ցույց է տալիս, որ վկայության վստահելիությունը, այդ թվում՝ այն վկայության, որը կարող է անառարկելի կամ համոզիչ թվալ, կարող է բոլորովին այլ կերպ երևալ, երբ որ ենթարկվի մանրամասն քննման: **Վտանգները, որոնք առկա են չստուգված ասեկոսե ապացույց ներկայացնելը թույլ տալու մեջ, շատ ավելի են մեծանում, եթե այդ ապացույցը ամբաստանյալի դեմ ներկայացված միակ կամ որոշիչ ապացույցն է** (*AL-Khawaja and Tahery v. the United Kingdom*)

Դատարանը նշել է, արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությամբ վկաներին առերես հարցաքննելու հնարավորություն, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ եւ այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար (*Hanu v. Romania*, § 40)

2. Ներպետական իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի՝

(...)

4) իր դեմ ցուցմունք տվող անձանց հարցման ենթարկելու իրավունք, կամ որ այդ անձինք ենթարկվեն հարցման, ինչպես նաև, որ իր օգտին ցուցմունք տվող անձինք կանչվեն և հարցաքննվեն նույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված անձինք.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի համաձայն՝

1. Վկան ցուցմունքներ տալու նպատակով կողմի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կանչված այն անձն է, ում կարող է հայտնի լինել տվյալ գործով պարզելու ենթակա որևէ հանգամանք:

(...)

3. Վկան պարտավոր է՝

1) ցուցմունքներ տալու, քննչական և այլ դատավարական գործողությունների կատարմանը մասնակցելու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

(...)

4. Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատարանի կողմից պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց նրա ինքնության մասին տվյալների հրապարակման, կարող է կատարվել կեղծանվան օգտագործմամբ: Պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել դատական նիստերի դահլիճից ամբաստանյալի և պաշտպանության կողմի ներկայացուցչին հեռացնելուց հետո:

2. Անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի հարցաքննությունը կարող է կատարվել այնպիսի պայմաններում, որոնք բացառում են անձի ինքնության ճանաչումը: Այդ նպատակով կարող են օգտագործվել դիմակ, շպար, պաշտպանվող անձի ձայնը փոփոխող սարք և օրենքին չհակասող պաշտպանության այլ միջոցներ:

3. Պաշտպանվող անձի հարցաքննությունը, առանց դատավարության մյուս մասնակիցների ակներև տեսանելիության, կարող է կատարվել տեսաձայնային և տեխնիկական այլ միջոցների (շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) օգնությամբ՝ դատավարության սահմանափակ շրջանակով մասնակիցների մասնակցությամբ՝ գաղտնիության պահպանման մասին նախազգուշացումով:

4. Բացառիկ դեպքերում դատարանը կարող է պաշտպանվող անձին ազատել դատական նիստին մասնակցելու պարտականությունից՝ նրա կողմից նախկինում տրված ցուցմունքի գրավոր հաստատման առկայության դեպքում:

5. Անհրաժեշտության դեպքում դատական նիստի նախագահողը կարող է դատաքննության ընթացքում արգելել տեսաձայնային և այլ միջոցներով հարցաքննության տեսաձայնագրառումը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի համաձայն՝ «1.Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝

«1.Դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատաքննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտում գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա՝ դատարան ներկայանալու հնարավորությունը, եւ երբ էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քրեական գործը դատարանի կողմից քննելիս մեղադրողը լիազորված է՝

(...)

4) ներկայացնել ապացույցներ, հետաքննության մարմնին նրա համար պարտադիր հանձնարարություններ տալ ապահովելու դատարանին ապացույցներ ներկայացնելը»

(...):

ՀՀ վճռաբեկ դատարանը *Համայակ Սահակյանի* վերաբերյալ գործով որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ «(...) հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ: Սակայն, հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում: Այլ կերպ՝ չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից: Այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով:

22. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները պարզաբանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավական դիրքորոշումներ հայտնել այն դեպքերի կապակցությամբ, երբ անձը դատապարտվում է բացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա, որի կապակցությամբ սակայն հնարավորություն չի ստացել իրացնել հակընդդեմ հարցման (*կոնֆրոնտացիայի*) իրավունքը («Մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(դ) ենթակետ):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, կիրառելով և մեկնաբանելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(դ) ենթակետը, եկել է այն ընդհանուր հետևության, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքնության իրավունքից (տե՛ս Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի, գանգատ թիվ 9120/80, 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33-րդ կետեր): *Իսկ Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1)* գործով վճռում Եվրոպական դատարանը զարգացրել է Ունտերպերտինգերի գործով ամրագրված իրավական դիրքորոշումը և սահմանել, որ **անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել** (տե՛ս Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1), գանգատներ թիվ 29900/96 և այլն, 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռ, 65-րդ կետ):

Ունտերպերտինգերի և Սադակի գործերով Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները ոչ թե կոնկրետ գործի փաստերով պայմանավորված դատողություններ են, այլ Եվրոպական դատարանի կայուն նախադեպային պրակտիկայի արտահայտություն: Դրա մասին է վկայում այն, որ նշված իրավական դիրքորոշումները հետագայում բազմիցս վերահաստատվել ու կիրառվել են, մասնավորապես, հետևյալ գործերով. *Հուլիսի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի*, գանգատ թիվ 28490/95, 2003 թվականի հունիսի 19-ի վճիռ, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի, գանգատ թիվ 47986/99, 2007 թվականի հունվարի 9-ի վճիռ, 54-55-րդ կետեր, *Բալսիպե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի*, գանգատ թիվ 72596/01, 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռ, 86-րդ կետ, *Չական ընդդեմ Ալբանիայի*, գանգատ թիվ 44023/02, 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռ, 102-րդ կետ, *Խամեշինն ընդդեմ Ռուսաստանի*, գանգատ թիվ 18487/03, 2010 թվականի մարտի 4-ի վճիռ, 32-րդ կետ, *Ա.Ս.-ն ընդդեմ Ֆինլանդիայի*, գանգատ թիվ 40156/07, 2010 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ, 62-րդ կետ, և այլն:

23. Հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակընդդեմ հարցման (*կոնֆրոնտացիայի*) իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ կերպ՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում: Ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ: (*Համայակ Ջալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ L Դ/0212/01/10 որոշման 21-24-րդ կետերը*)

Զարգացնելով նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը *Սարիբեկ Հարությունյանի* վերաբերյալ գործով որոշմամբ սահմանել է, որ «(...)քրեական դատավարությունում արդար դատաքննության հիմնարար իրավական արժեքի բաղադրատարրերից է պաշտպանության կողմի իրավունքը հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) ենթարկել մեղադրական բովանդակությամբ ցուցմունք տված վկաներին: Ընդ որում, նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որպեսզի պաշտպանության կողմին տրվի մեղադրյալի դեմ հանդես եկած անձանց ցուցմունքները վարույթի որևէ փուլում վիճարկելու, նրան հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդհանուր առմամբ բովանդակում է պաշտպանության կողմի հակընդդեմ հարցման իրավունքը նաև նախաքննության փուլում կենսագործելու համար անհրաժեշտ իրավական մեխանիզմներ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քննիչն իրավունք ունի կատարել նախօրոք հարցաքննված երկու այն անձանց առերեսում, որոնց ցուցմունքներում էական հակասություններ կան: Քննիչը պարտավոր է կատարել առերեսում, եթե էական հակասություններ կան մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում»:

Մեջբերված քրեադատավարական նորմի, ինչպես նաև առերես հարցաքննության անցկացման կարգը սահմանող այլ դրույթների համադրված վերլուծությունից ակնհայտ է, որ առերեսումը քննչական գործողություն է, որի առաջնային նպատակը ապացույց ձեռք բերելն է այն պայմաններում, երբ առկա են էական հակասություններ երկու անձանց ցուցմունքների միջև: Մյուս կողմից, սակայն, առերեսումը նախաքննության փուլում միակ դատավարական միջոցն է, որի օգնությամբ վարույթն իրականացնող մարմինը կարող է հնարավորություն տալ անձին վիճարկել իր դեմ տրված ցուցմունքները՝ դրանով իսկ ապահովելով պաշտպանության կողմի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (դ) ենթակետով երաշխավորված իրավունքը: Այլ խոսքով՝ առերես հարցաքննությունն իրականացվում է ոչ միայն գործով ճշմարտությունը բացահայտելու նպատակով, այլև հանդիսանում է նախաքննության փուլում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման միջոց: **Հետևաբար, անթույլատրելի է առերես հարցաքննության հնարավորությունը բացառել միայն այն պատճառով, որ կասկածյալը կամ մեղադրյալը, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալ:**

28. Հիմք ընդունելով սույն որոշման 27-րդ կետում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առերես հարցաքննության անցկացման կարգը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի ունենալ, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի (կասկածյալի)՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը: Ուստի, խնդրո առարկա հարցի կապակցությամբ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի հակընդդեմ

հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Այս առումով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը: Այն դեպքում, երբ վկան մեղադրական բովանդակությամբ ցուցմունք է տալիս որևէ անձի դեմ, իսկ վերջինս օգտվում է իր լռելու իրավունքից, ապա վարույթն իրականացնող մարմինն այս օբյեկտիվ իրավիճակը կարող է գնահատել որպես փաստացի տրված երկու ցուցմունք, որոնց միջև առկա է էական հակասություն և այդ ընկալումն արձանագրել առերեսում անցկացնելու մասին որոշմամբ՝ իրական և պատշաճ հնարավորություն տալով պաշտպանության կողմին հարցաքննել վկային և վիճարկել նրա հայտնած փաստական տվյալների ճշմարտացիությունը: Այս պայմաններում անցկացված առերես հարցաքննությունն ինքնին չի հանգեցնի քրեադատավարական օրենքի էական խախտման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով»: (Սարիբեկ Հարությունյանի վերաբերյալ ԵԱՔԴ/0189/01/12 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշումը)

Հարություն Սարգսյանի վերաբերյալ գործով որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը կոնֆրոնտացիայի իրավունքի երաշխավորման եվրոպական չափանիշները կիրառել է գործի կոնկրետ հանգամանքների նկատմամբ և արձանագրել, որ «Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկներին, որ Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու արդյունքում խախտվել է Հ.Սարգսյանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված՝ դատապարտման հիմքում դրված ապացույցների կապակցությամբ պաշտպանության կողմի հակընդդեմ հարցում իրականացնելու (կոնֆրոնտացիայի) իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

ա) (...) Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ անդրադառնալով Մ.Ղուկասյանի նախաքննական ցուցմունքն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ վերաքննիչ բողոքի փաստարկներին, պատճառաբանել է, որ Առաջին ատյանի դատարանը, հրապարակելով Մանյա Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը, չի խախտել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը, քանի որ քրեական գործի նյութերում առկա ՀՀ «Ճերմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 19.06.2013թ. գրության համաձայն՝ Մանյա Ղուկասյանը, առողջական վիճակից ելնելով, չի կարող ներկայանալ դատական նիստին, ինչպես նաև Գյումրու քաղաքապետարանի 23.07.2013թ. տեղեկանքի համաձայն՝ Մանյա Ղուկասյանը բացակայում է քաղաքից, ուստի նրան դատական նիստին ապահովելու հնարավորություն չի ունեցել (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մ.Ղուկասյանի վատառողջ լինելու վերաբերյալ բժշկական հաստատության գրությունը թվագրված է «19.06.2013թ.», մինչդեռ սույն

գործով Առաջին աստիճանի դատարանի կողմից դատավճիռը կայացվել է 2014 թվականի մարտի 12-ին, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ 2014 թվականի օգոստոսի 4-ին: Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանում առկա չէ առողջական վիճակի պատճառով շուրջ մեկ տարի (ինչպես Առաջին աստիճանի, այնպես էլ Վերաքննիչ դատարաններում վարույթի ընթացքում) դատարան ներկայանալու անհնարինության մասին վկայող համապատասխան տվյալ: Ինչ վերաբերում է «Ճերմակ հիվանդանոց» ՍՊԸ-ի 19.06.2013թ. գրությանը, ապա դրանում բացակայում է Մ.Ղուկասյանի ապաքինման համար անհրաժեշտ հստակ ժամանակահատվածը, սակայն դա չի կարող արդարացված հիմք համարվել շուրջ մեկ տարի ժամանակահատվածի համար Մ.Ղուկասյանի առողջական վիճակի մասին եզրահանգումներ անելու և համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար, ավելին՝ գործի նյութերում առկա է և Վերաքննիչ դատարանի կողմից վկայակոչվել է «23.07.2013թ.» թվագրված (բժշկական հաստատության գրության թվագրումից շուրջ մեկ ամիս հետո) տեղեկանք Մ.Ղուկասյանի՝ քաղաքից բացակայելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է քաղաքից բացակայելու հիմքով Մ.Ղուկասյանի ներկայությունը դատական նիստին ապահովելու անհնարինության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ հանգամանքը վկայի՝ դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառ չի կարող գնահատվել այն պայմաններում, երբ դատարանների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա գտնվելու վայրը պարզելու և ներկայությունն ապահովելու ուղղությամբ (*որպես համեմատություն՝ տե՛ս Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի ապրիլի 10-ի վճիռը, գանգատ թիվ 8088/05, կետեր 83-84-րդ և 87-րդ, որով Եվրոպական դատարանը գտել է, որ խախտվել է դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու իրավունքը, այն պայմաններում, երբ վկաները բացակայել են երկրից, իսկ պետությունը բավարար միջոցներ չի ձեռնարկել (այդ թվում՝ միջազգային օգնությանը դիմելու միջոցը) նրանց գտնվելու վայրը պարզելու և նրանց բացակայության արդարացվածությունը ճշտելու համար):*

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով, որ գործի նյութերում առկա չէ Մ.Ղուկասյանի կողմից դատարան չներկայանալու պատճառների վերաբերյալ այլ տեղեկություններ՝ Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում բողոքաբերի փաստարկներն այն մասին, որ վկա Մ.Ղուկասյանի նախաքննական ցուցմունքը որպես ապացույց օգտագործելու արդյունքում չի ապահովվել ամբաստանյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքը, հետևաբար, այն չի կարող դրվել Հ.Սարգսյանի մեղադրական դատավճռի հիմքում:

բ) Վ.Ղուկասյանի ցուցմունքի անթույլատրելիության վերաբերյալ բողոքաբերի ներկայացրած փաստարկի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով դրան, պատճառաբանել է, որ այն թույլատրելի է և ձեռք է բերվել քրեադատավարական օրենքի նորմերի պահպանմամբ (տե՛ս սույն որոշման 6-րդ կետը): Մինչդեռ գործի նյութերի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտպանության կողմը գործի քննության ողջ ընթացքում զրկված է եղել

Վ.Ղուկասյանին հարցաքննելու իրավունքից: Հետևաբար՝ նշված ապացույցը նույնպես չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը բողոքաբերի քննարկվող փաստարկները հիմնավորված է համարում և գտնում, որ ստորադաս դատարանները, Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելով, թույլ են տվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում: Ուստի, Վճռաբեկ դատարանը նշված ցուցմունքները հանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով Հ.Սարգսյանի մեղադրանքի հիմքում դրված ապացույցների շարքից:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից թույլ տրված դատական սխալը գործի ելքի վրա չի ազդել, քանի որ գործի նյութերում առկա են Մ.Ղուկասյանի և Վ.Ղուկասյանի ցուցմունքներում պարունակվող տվյալները հաստատող այլ ապացույցներ (մասնավորապես՝ վկաներ Գուրգեն Վարդիկյանի, Գևորգ Ղուկասյանի, Սամվել Սարգսյանի, Անահիտ Նիկոլյանի և քրոջ՝ Մելանյա Սարգսյանի ցուցմունքները): (Հարույթուն Սարգսյանի վերաբերյալ ՇԴ/0172/01/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի որոշումը)

3. Եվրոպական իրավունքի կիրառումը Հայաստանի վերաբերյալ գործերով իրավիճակները

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 8088/05

Վճիռ – 10.04.12թ.

Սույն գործով դիմումատուն մեղավոր էր ճանաչվել պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված կոչեր անելու համար: Այդ կոչերը հանդիսանում էին առևտրի կենտրոնում թռուցիկներ բաժանելու ընթացքում նրա կողմից ենթադրաբար մի շարք անձանց հասցեագրված ցույցին մասնակցելու իր բազմազան հայտարարությունները: Այդ անձինք, մասնավորապես Ն.Ա.-ն, Մ.Մ.-ն, Վ.Զ.-ն, Օ.Վ.-ն և Ս.Կ.-ն հանդես են եկել դիմումատուի գործով որպես վկաներ: Չնայած ոստիկանության երկու ձերբակալող սպաներ՝ Գ.Ա.-ն և Դ.Դ.-ն, նույնպես հայտարարություններ են արել, որոնք հաշվի են առնվել ներպետական դատարանների կողմից, սակայն նրանց հայտարարությունները ծառայել են բացառապես որպես հանգամանքների ապացույց, քանի որ ոստիկաններից ոչ ոք չի պնդել, որ լսել է դիմումատուի կողմից առևտրի կենտրոնում արված հայտարարությունները: Այսպիսով, դիմումատուի դեմ ամբողջ քրեական գործը հիմնված է եղել վերը նշված հինգ վկաների ցուցմունքների վրա:

Դատարանը նշել է, որ վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի չներկայանալու պատճառն իրենց ենթադրյալ բացակայությունն էր Հայաստանից: Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ գործի հատուկ հանգամանքների դեպքում սա կհանդիսանար հարգելի պատճառ, որը կարդարացներ այդ վկաներին չհարցաքննելը և իրենց ցուցմունքները չներկայացնելը:

(...)

Դատարանը պատրաստ է ընդունել, որ ներպետական դատարանները գործադրել են որոշակի ջանքեր՝ վկաներ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի բացակայության պատճառների մասին տեղեկանալու և նրանց ներկայությունն ապահովելու համար: Ինչպես պարզվում է, նրանց չներկայանալուց հետո առաջին ատյանի դատարանը դիմել է ոստիկանության օգնությանը, մինչդեռ Վերաքննիչ դատարանը որոշել է հարկադրել նրանց ներկայանալ դատարան՝ հետաձգելով 2004թ. հունիսի 30-ի և հուլիսի 6-ի դատական նիստերը և հանձնարարելով ոստիկանությանն ապահովել նրանց ներկայությունը հաջորդ նիստին: Այնուամենայնիվ, հայտնի չէ, թե բացի մշտական բնակության վայրից նրանց բացակայության մասին տեղեկանալուց, ինչպիսի այլ ջանքեր էր գործադրվել ոստիկանության կողմից այդ վկաների գտնվելու վայրը պարզելու համար: **Չկա որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, արդյոք ոստիկանությունը երբևէ փորձել է գտնել նրանց բնակության նոր հասցեները կամ տեղեկանալ նրանց բացակայության մանրամասներին, ներառյալ՝ արդյոք դա մշտական, թե ժամանակավոր բնույթ էր կրում և արդյոք Օ.Վ.-ն և Ս.Կ.-ն ապագայում նպատակ ունեին այցելել կամ վերադառնալ տուն: Չնայած այդպիսի տեղեկատվության բացակայությանը, առաջին ատյանի դատարանը հրապարակեց նրանց ցուցմունքները:**

Ճիշտ է, որ դիմումատուն առաջին ատյանի դատարանում համաձայնվել է, որ Օ.Վ.-ի և Ս.Կ.-ի մինչդատական ցուցմունքները հրապարակվեն: **Սա, այնուամենայնիվ, բավարար չէ, որպեսզի դատարանն եզրակացնի, որ նա դրանով հրաժարվել է վկային հարցաքննելու իր իրավունքն իրականացնելուց: Դատարանը կրկնում է, որ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքն իրականացնելուց հրաժարվելն այնքանով, որքանով այդպիսի հրաժարումը թույլատրված է ներպետական օրենսդրությամբ, պետք է միանշանակորեն արտահայտված լինի:**

Դատարանը նշում է, որ դիմումատուն բողոքարկել է ինչպես Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում, այնպես էլ վճռաբեկ դատարանում, որ նա չի կարողացել հարցաքննել վկաներ Օ.Վ.-ին և Ս.Կ.-ին: Այնուհետև, նա ուղղակիորեն խնդրել է Վերաքննիչ դատարանում, որպեսզի այդ վկաները ներկայանան դատարան՝ պնդելով, որ նրանց ցուցմունքներն արժանահավատ չեն: Այն փաստը, որ Վերաքննիչ դատարանը փորձել է ձեռնարկել միջոցներ, չնայած և անհաջող, նրանց ներկայությունն ապահովելու համար, նույնպես ենթադրում է, որ դիմումատուն չէր պատրաստվում հրաժարվել նրանց հարցաքննելու իր իրավունքի իրականացումից: Վերը նշված դիտարկումները բավարար են Դատարանին միանշանակ եզրակացնելու, որ դատապարտման հարցը լուծելիս առանց հիմնավորման սահմանափակվել է դիմումատուի՝ վճռորոշ դեր ունեցող վկաներին հարցաքննելու իրավունքը: Նա չէր կարող նրանց արժանահավատ լինելու հանգամանքը ենթարկել մանրակրկիտ ստուգման կամ կասկածի տակ դնել նրանց գրավոր ցուցմունքները: Սա, հատկապես, անհանգստացնող է, հաշվի առնելով, որ նշված վկաներն անձամբ ծանոթ չեն եղել դիմումատուին և վարույթի ոչ մի փուլում երբևէ նրանցից չի պահանջվել ճանաչել դիմումատուին:

Ասատրյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 3571/09

Վճիռ - 27.04.2017

Ասատրյանն ընդդեմ Հայաստանի գործը վերաբերվել է դիմումատու Սիլվա Ասատրյանի դատաքննությանը և գործարար ու նախկին պատգամավոր Մ.Գ.-ի դեմ կատարված սպանության փորձի համար դատապարտմանը: Միեւնույն գործով ամբաստանյալ Յ.Վ.-ն քննվել էր դատապարտվել է հանցանքը կատարած անձին օժանդակելու համար:

Դիմումատուն իր բողոքները հիմնավորել է հետեւյալ երկու փաստերով: Նախ, նա պնդել է, որ Վերաքննիչ դատարանը չի հրապարակել և չի հետազոտել դատավճռի հիմքում դրված՝ վկաներ Լ.Գ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ա.Աթ.-ի նախաքննական ցուցմունքները, դրանք չի հետազոտել նաև առաջին ատյանի դատարանը: Երկրորդ, նա իր բողոքներում նշել է, որ իրեն չի տրվել այդ վկաներին հարցաքննելու հնարավորություն, սակայն նրանց նախաքննական ցուցմունքները հետագայում Վերաքննիչ դատարանի կողմից օգտագործվել են որպես իր դեմ ապացույց:

ՀՀ Կառավարությունը պնդել է, որ խնդրո առարկա ցուցմունքները դիմումատուին դատապարտելիս վճռորոշ չեն եղել:

Դատարանն այս առնչությամբ նշում է, որ Վարչական շրջանի դատարանի դատավճռում, որն անփոփոխ է թողնվել Վերաքննիչ դատարանի կողմից այնքանով, որքանով այն վերաբերում էր դիմումատուի դատապարտմանը, անշուշտ նշվել են դիմումատուի մեղավորությունն ուղղակիորեն հաստատող այլ ապացույցներ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարել հիմք ընդունել նաև վկաներ Լ.Գ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի և Ա.Աթ.-ի նախաքննական ցուցմունքները՝ հաստատելու համար Վարչական շրջանի դատարանի եզրահանգումն այն մասին, որ դիմումատուն՝ հակառակ իր արդարացումներին, Մ.Գ.-ին սպանելու շարժառիթ է ունեցել, Դատարանը գտնում է, որ այդ ցուցմունքները նշանակություն են ունեցել գործի համար: Ինչ վերաբերում է այդ ապացույցներին, ապա Վերաքննիչ դատարանը պարտավոր էր մեղադրյալին իր պաշտպանությունը պատշաճորեն կազմակերպելու և իր բոլոր համապատասխան փաստարկները ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

(...)

Այն փաստը, որ Վերաքննիչ դատարանն անձամբ չի քննել այն վկաներին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, կարող էր մեծապես ազդել դիմումատուի պաշտպանության իրավունքների վրա: Միևնույն ժամանակ, Դատարանը նշում է, որ վկա Լ.Գ.-ն, լինելով դիմումատուի դուստրը, ներպետական օրենսդրության համաձայն ունեցել է ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունք և օգտվել է այդ իրավունքից: Ուստի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի համաձայն վերլուծելու տեսանկյունից՝ Լ.Գ.-ն, օգտվելով մերձավոր ազգականի՝ դիմումատուի դեմ ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իր օրինական իրավունքից, դիմումատուի

վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայացած մյուս երեք վկաներից տարբեր կարգավիճակ է ունեցել: Այնուամենայնիվ, չնայած այն փաստին, որ Լ.Գ.-ն օգտվել է ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու՝ օրենքով սահմանված իր իրավունքից, Վերաքննիչ դատարանը հիմնվել է նրա նախաքննական ցուցմունքների վրա, որոնք նա տվել էր այն փուլում, երբ դիմումատուն վարույթում դեռեւս մեղադրյալի կարգավիճակ չուներ: Ինչ վերաբերում է վկաներ Ա.Ա.-ին, Ա.Բ.-ին եւ Ա.Աթ.-ին, ապա Դատարանը նշում է, որ այդ վկաները Վերաքննիչ դատարանի կողմից չեն հարցաքննվել: Նրանք նաև չեն հարցաքննվել առաջին ատյանի դատարանի կողմից և ոչ էլ ընդգրկվել են դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակում: Վերաքննիչ դատարանը, այնուամենայնիվ, հիմնվել է նախաքննության ընթացքում նրանց տված ցուցմունքների վրա, երբ մեղադրյալին դեռ որևէ մեղադրանք առաջադրված չի եղել, ինչի արդյունքում դիմումատուն զրկված է եղել նրանց ցուցմունքները վիճարկելու հնարավորությունից, մինչդեռ քրեական դատավարության ներպետական օրենսդրության համաձայն՝ Վերաքննիչ դատարանը չէր կարող հիմնվել վերաքննիչ վարույթին չներկայացած և առաջին ատյանի դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքների վրա:

Դատարանի համար պարզ չէ՝ արդյոք վկաներ Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ա.Աթ.-ի ցուցմունքները միակը և վճռորոշն են եղել, սակայն այն այդուհանդերձ համոզված է, որ դրանք նշանակալի դեր են ունեցել, և դրանք որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Դատարանը նշում է, որ պաշտպանության կողմի հնարավորությունների սահմանափակումը փոխհատուցելու համար որևէ դատավարական երաշխիք չի եղել: **Մասնավորապես, դիմումատուն նախաքննության ընթացքում այդպես էլ հնարավորություն չի ունեցել նշված վկաների ցուցմունքների թույլատրելիությունը վիճարկելու և հիմնավոր պատճառով չէր կարող այդպիսի պահանջ ներկայացնել դատական քննության ժամանակ, քանի որ այդ վկաները չէին ընդգրկվել դատական նիստին կանչվելու ենթակա անձանց ցուցակում: Ավելին, քանի որ խնդրո առարկա ապացույցները չէին հետազոտվել դռնբաց դատական քննության ժամանակ, պաշտպանության կողմը տեղյակ չէր անգամ, որ Վերաքննիչ դատարանը դիմումատուի մեղավորությունը հաստատելու համար հիմնվելու է այդ ապացույցների վրա:**

Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 27866/10

Վճիռ - 27.10.2016

Դիմումատուն Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից դատապարտվել է Ղազախստանի Հանրապետության տարածքում սպանություն կատարելու համար, որտեղ քրեական գործի նախաքննությունը կատարվել է առանց դիմումատուի մասնակցության: Սպանությունը կատարվել է հասարակական վայրում միջոցառման ժամանակ՝ մի շարք անձանց ներկայությամբ: Վկաներ Խ.Հ.-ն, Գ.Թ.-ն, Օ.Դ.-ն, Վ.Հ.-ն եւ Գ.Ա.-ն, Ղազախստանի Հանրապետությունում գործով վարույթի ընթացքում հարցաքննության ժամանակ դիմումատուին և Բ.Մ.-ին մատնանշել են որպես տուժողին դանակով հարվածողների: Մյուս

ականատեսները, մասնավորապես՝ Ա.Օ.-ն, Ա.Գ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն եւ Ե.Բ.-ն, որոնք նույնպես հարցաքննվել են Ղազախստանի Հանրապետության քննչական մարմինների կողմից, տեղի ունեցածը նկարագրել են առանց դիմումատուին մատնանշելու՝ որպես արարքը ենթադրաբար կատարողի, մինչդեռ Լ.Տ.-ն ճանաչել է նրան, երբ իրեն ցույց են տվել նրա լուսանկարը:

Դատարանն արձանագրել է, որ այդ տասնմեկ վկաներից ոչ մեկը չի ներկայացել դիմումատուի դատական քննությանը: Առաջին ատյանի դատարանը չի պատճառաբանել չներկայացած վկաների ցուցմունքները որպես ապացույց ճանաչելը, իսկ Վերաքննիչ դատարանը հիմնվել է նրանց ներկայանալը չապահովելու վերաբերյալ այն պատճառաբանության վրա, որ նրանք պատշաճ կարգով ծանուցվել են առաջին ատյանի դատարանի կողմից, սակայն նշել են, որ չեն կարող ներկայանալ ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան և աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով:

Այնուամենայնիվ, Դատարանը համոզիչ չի համարում այն, որ դա կարող էր հիմնավոր պատճառաբանություն լինել այդ վկաներին չհարցաքննելու և նրանց ցուցմունքները որպես ապացույց ճանաչելու համար: Մասնավորապես, այն փաստը, որ ներպետական դատարանները չեն կարողացել պարզել տվյալ վկայի գտնվելու վայրը կամ այն փաստը, որ վկան բացակայել է այն երկրից, որտեղ իրականացվել է գործով վարույթը, ինքնին բավարար չեն համարվել՝ ապահովված համարելու համար 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի պահանջները, որոնց համաձայն՝ Պայմանավորվող պետությունները պետք է դրական քայլեր ձեռնարկեն՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության: Այդ քայլերը Պայմանավորվող պետությունների կողմից կատարման ենթակա այն պարտավորությունների մաս են կազմում, որոնք ուղղված են 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքներից արդյունավետորեն օգտվելու հնարավորությունն ապահովելուն: Հակառակ դեպքում՝ վկայի չներկայանալը պետք է վերագրել ներպետական իշխանություններին:

Դատարանն ընդունում է, որ առաջին ատյանի դատարանը որոշակի քայլեր է ձեռնարկել՝ վկաների ներկայանալն ապահովելու համար: (...) Ղազախստանի Հանրապետության համապատասխան մարմինների կողմից կատարված նախաքննության ժամանակ հարցաքննված տասնմեկ վկաները կանչվել են առաջին ատյանի դատարանի առնվազն երեք նիստի: Այնուամենայնիվ, միայն վկաներ Լ.Տ.-ն, Օ.Դ.-ն և Խ.Հ.-ն են ստացել մեկ կամ ավելի դատական ծանուցագիր: Դատարանը նշում է, որ տասնմեկ վկաներից ութն առաջին ատյանի դատարան են ներկայացրել Ղազախստանում նոտարական կարգով վավերացված գրավոր հայտարարություններ, որոնցում նշել են իրենց՝ դատական քննությանը չներկայանալու մի շարք պատճառներ և խնդրել են դատարաններին որպես ապացույց ճանաչել նախաքննության ժամանակ տված իրենց ցուցմունքները: Մասնավորապես, վկաներ Վ.Հ.-ն և Ե.Բ.-ն նշել են, որ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն կարող ներկայանալ դատական քննությանը, վկա Օ.Դ.-ն նշել է ընտանեկան հանգամանքների հետ կապված պատճառ, իսկ վկաներ Ա.Գ.-ն, Գ.Թ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն և Կ.Հ.-ն նշել են, որ չեն կարող

ներկայանալ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառով: Բացի աշխատանքային հանգամանքներից՝ վկաներ Լ.Տ.-ն եւ Կ.Հ.-ն նշել են նաև ֆինանսական միջոցների բացակայությունը: Բավարար չափով պարզ չէ, թե դատական ծանուցագրեր չստացած վկաներից մի քանիսն ինչպես են ծանուցվել դիմումատուի դատական քննության վերաբերյալ և ներկայացրել համապատասխան հայտարարությունները: Այնուամենայնիվ, Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ առնվազն ութ վկա ծանուցվել է Հայաստանում դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության վերաբերյալ, իսկ վկա Խ.Վ.-ն, ստանալով դատական ծանուցագիրը, չի ներկայացրել դատական քննությանը և չի ներկայացրել այնպիսի հայտարարություն, ինչպիսին ներկայացվել է մյուսների կողմից: Դատարանը համոզված չէ, որ բոլոր հնարավոր միջոցները կարելի է համարել ձեռնարկված՝ վկաներ Խ.Հ.-ի, Կ.Հ.-ի, Գ.Թ.-ի, Օ.Դ.-ի, Վ.Հ.-ի, Գ.Ա.-ի, Ա.Օ.-ի, Ա.Գ.-ի, Վ.Կ.-ի, Լ.Տ.-ի և Ե.Բ.-ի ներկայանալն ապահովելու համար: Առաջին ատյանի դատարանը կարող էր հիմնվել միջազգային իրավական օգնության վրա՝ 1993 թվականի հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային համապատասխան, որին մասնակցում են և՛ Հայաստանի Հանրապետությունը, և՛ Ղազախստանի Հանրապետությունը: Ավելին, Հայաստանի Հանրապետության դատարանները հեշտությամբ ընդունել են ութ վկաների կողմից ներկայացված հայտարարություններում նշված պատճառները, այսինքն՝ այն, որ նրանք չեն կարողացել ներկայանալ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառներով՝ առանց նույնիսկ քննելու նրանց ճանապարհի և կեցության ծախսերը հատուցելու հնարավորությունը, որը նախատեսվում է վերոնշյալ Մինսկի կոնվենցիայով: Այսպիսով, չի կարելի ասել, որ վկաներ Խ.Հ.-ին, Կ.Հ.-ին, Գ.Թ.-ին, Օ.Դ.-ին, Վ.Հ.-ին, Գ.Ա.-ին, Ա.Օ.-ին, Ա.Գ.-ին, Վ.Կ.-ին, Լ.Տ.-ին և Ե.Բ.-ին չհարցաքննելու համար հիմնավոր պատճառներ են եղել: Սակայն, հարցը միայն նրանց՝ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չէ: Միայն այս հանգամանքն ինքնին չի վկայում քրեական դատավարության անարդարացի լինելու մասին, թեև այն շատ կարևոր գործոն է՝ մյուս համապատասխան հանգամանքների հետ ընդհանուր հավասարակշռությունը որոշելու համար:

Ինչ վերաբերում է թեստի երկրորդ փուլին, ապա Դատարանը նշում է, որ դիմումատուի մեղավորությունը հիմնավորելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտորեն հղում է կատարել չներկայացած տասնմեկ վկաների ցուցմունքներին: Կասկած չի հարուցում այն, որ, ինչպես նշել է Կառավարությունը, այդ ցուցմունքները միակ ապացույցը չեն եղել, որի վրա հիմնվելով՝ առաջին ատյանի դատարանը կայացրել է դատավճիռը: Դատարանն այդ պատճառով պետք է պարզի՝ արդյոք չներկայացած վկաների ցուցմունքները «վճռորոշ» են եղել դիմումատուի համար: Ելնելով այն հանգամանքից, որ ներպետական դատարաններն այս հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը չեն հայտնել, Դատարանը պետք է ինքը գնահատի այդ վկաների ցուցմունքների նշանակությունը՝ հաշվի առնելով մեղավորությունը հաստատող առկա լրացուցիչ ապացույցները: Դատարանն այս առնչությամբ նշում է, որ մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցները, որոնք առաջին ատյանի դատարանը հիմք է ընդունել դիմումատուին

դատապարտելիս, ներառում են տուժողի իրավահաջորդի՝ առաջին ատյանի դատարանում տված ցուցմունքները, դիմումատուի հանցակցի վերաբերյալ Կոստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճիռը, Ղազախստանի Հանրապետությունում վերջինիս վերաբերյալ գործով դատական քննության ժամանակ փորձագետների տված ցուցմունքները, փորձաքննությունների եզրակացությունները, Ղազախստանի Հանրապետությունում կատարված մի շարք քննչական գործողությունների արձանագրությունները և միջոցառման նկարահանման տեսաերիզները: Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ միայն վկաներ Խ.Հ.-ն, Կ.Հ.-ն, Գ.Թ.-ն, Օ.Դ.-ն, Վ.Հ.-ն, Գ.Ա.-ն, Ա.Օ.-ն, Ա.Գ.-ն, Վ.Կ.-ն, Լ.Տ.-ն և Ե.Բ.-ն են եղել հանցագործության ականատեսները, մինչդեռ տուժողի իրավահաջորդը, թեև հարցաքննվել է դիմումատուի վերաբերյալ գործով դատաքննության ժամանակ, անձամբ ականատես չի եղել հանցագործությանը: Առկա մյուս ապացույցներով չի հաստատվել այն փաստը, որ Ս.Մ.-ին դանակահարել է դիմումատուն: Դատարանն այդ պատճառով կարծում է, որ դիմումատուի դատապարտման համար «վճռորոշ» են եղել չներկայացած վկաների ցուցմունքները:

Դատարանն ի վերջո պետք է որոշի՝ արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացիորեն և պատշաճորեն գնահատել չներկայացած վկաների տված ցուցմունքների հավաստիությունը:

Դատարանը նշում է, որ դիմումատուն գործով վարույթի որևէ փուլում տվյալ վկաներին հարցաքննելու հնարավորություն չի ունեցել: Ճիշտ է, դիմումատուն չի մասնակցել Ղազախստանի Հանրապետությունում իր դեմ հարուցված քրեական գործի քննությանն այնպիսի պատճառներով, որոնք չի կարելի վերագրել իշխանություններին: Այդ պատճառով նա հնարավորություն չի ունեցել խաչաձեւ հարցաքննելու վկաներին ո՛չ մինչդատական փուլում, երբ նրանք ցուցմունք են տվել, ո՛չ էլ Ղազախստանի Հանրապետությունում գործի քննության հետագա փուլերում: Դատարանն, այնուամենայնիվ, նշում է, որ դիմումատուն ի վերջո զրկվել է այդ վկաներին Հայաստանում իր դեմ հարուցված քրեական գործի քննության, այդ թվում՝ դատական քննության ընթացքում հարցաքննելու հնարավորությունից: Դատարանը նաև նշում է, որ դատավարական որեւէ միջոցառում չի ձեռնարկվել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը որեւէ կերպ լրացնելու համար: Ավելին, **առաջին ատյանի դատարանը պատշաճ կարգով չի գնահատել այն, թե որքանով կարելի է վստահել չներկայացած վկաներին եւ հավաստի համարել նրանց ցուցմունքները, և դրանք պարզապես դասել է այն ապացույցների թվին, որոնք հաստատում են դիմումատուի մեղավորությունը: Վերոնշյալ դատողությունները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ այն վկաներին հարցաքննելու իրավունքը, որոնց վկայությունները վճռորոշ դեր են ունեցել իր դատապարտման հարցում:** Ըստ այդմ, այս առումով տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ համատեղ:

Ավերիսյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 13479/11

Վճիռ - 10.11.2016թ.

2009 թվականի ապրիլի 27-ին դիմումատուն իր ընկեր Դ. Թ.-ի և երկու այլ անձանց՝ Դ. Օ.-ի և Մ. Ս.-ի հետ գնացել է Գորիս քաղաք՝ իր ընկեր Մ. Խ.-ին տեսակցելու, որն այնտեղ քրեակատարողական հիմնարկում կրում էր իր պատիժը: Ժամանելուց հետո քրեակատարողական հիմնարկի վարչակազմը հրաժարվել է թույլ տալ նրանց տեսնել Մ. Խ.-ին: Այնուամենայնիվ, նրանց թույլ են տվել հանձնել ծանրոց՝ նրան փոխանցելու համար: Դիմումատուն Դ. Թ.-ին, Դ. Օ.-ին և Մ. Ս.-ին գումար է տվել՝ Մ. Խ.-ի համար ուտելիք գնելու համար, իսկ ինքը մնացել է քրեակատարողական հիմնարկում՝ պաշտոնական ընթացակարգերը կատարելու համար: Նա ստորագրել է նախազգուշացում՝ դատապարտյալին արգելված իրեր փոխանցելու համար նախատեսված պատասխանատվության մասին: Դ. Թ.-ն, Դ. Օ.-ն և Մ. Ս.-ն բերել են տորթ, որը գնել էին տեղի խանութներից մեկից: Տորթը հանձնել են վարչակազմին որպես ծանրոց՝ Մ. Խ.-ին փոխանցելու համար: Ծանրոցի հետագա զննման արդյունքում պարզվել է, որ տորթի մեջ եղել է հեղուկով լի մեկանգամյա օգտագործման ներարկիչ:

Դիմումատուն, պնդել է, որ իրեն զրկել են արդար դատաքննության իրավունքից, քանի որ ինքը դատապարտվել է այն վկաների նախաքննական ցուցմունքների հիման վրա, որոնց ինքը հնարավորություն չի ունեցել հարցաքննելու:

1. Արդյոք վկաների՝ դատաքննությանը չներկայանալու համար առկա են հիմնավոր պատճառներ

Դատարանը նշում է, որ վկաների ներկայանալը չապահովելու համար ներկայացված պատճառաբանությունը, որի վրա հիմնվել է առաջին ատյանի դատարանի դատավորը, և որն այնուհետև ընդունվել է նաև Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, այն է, որ վկաներ Մ. Ս.-ն և Դ. Օ.-ն գտնվել են արտերկրում, իսկ Դ. Թ.-ն բուժում է ստացել մայրաքաղաքում: Հաշվի առնելով Դատարանի որդեգրած խիստ մոտեցումը նախորդ գործերով՝ Դատարանը չի կարծում, որ բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկվել են՝ տվյալ վկաների ներկայանալն ապահովելու համար: Ճիշտ է, որ առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վկաներ Մ. Ս.-ին և Դ. Թ.-ին ոստիկանության աջակցությամբ բերման ենթարկելու մասին: Այս միջոցը, այնուամենայնիվ, որևէ արդյունք չի տվել: Այդպիսի պայմաններում առաջին ատյանի դատարանը կարող էր դիմել միջազգային իրավական օգնությանը՝ ապահովելու համար վկաներ Մ. Ս.-ի և Դ. Օ.-ի ներկայանալը, որոնք ենթադրաբար բացակայում էին երկրից: Ավելին, առաջին ատյանի դատարանը նույնիսկ չի փորձել պարզել, թե Դ. Թ.-ն երբ է դուրս գրվելու հիվանդանոցից, որպեսզի կարողանա ներկայանալ դատական քննությանը: Առաջին ատյանի դատարանը հեշտությամբ ընդունել է վկաների բացակայության համար ոստիկանության կողմից տրված պատճառաբանությունները, որոնք, ընդ որում, հիմնված են եղել ոչ թե ոստիկանության՝ վկաների գտնվելու վայրը պարզելուն ուղղված գործողությունների, այլ այդ վկաների բարեկամների տված ցուցմունքների վրա:

Սակայն հարցը միայն վկաների՝ դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չէ: Միայն այս հանգամանքն ինքնին չի վկայում քրեական դատավարության արդարացի չլինելու մասին, թեև այն շատ կարևոր գործոն է մյուս համապատասխան հանգամանքների հետ ընդհանուր հավասարակշռությունը որոշելու համար:

(...) *Ինչ վերաբերում է (...) այն հարցին, թե արդյոք չներկայացած այն վկայի ցուցմունքը, որի ցուցմունքները որպես ապացույց են ճանաչվել, միակ կամ վճռական հիմքն է հանդիսացել ամբաստանյալին դատապարտելու համար, ապա (...) Դատարանը նշում է, որ ներպետական դատարանների վճիռներում վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները նշվել են որպես **դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներ՝ առանց այդ ապացույցների հավաստիությունը գնահատելու**, որը կօգներ Դատարանին որոշել՝ արդյոք դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել միայն վկաների՝ նախաքննության ընթացքում տված ցուցմունքների վրա կամ արդյոք դրա համար այդ ցուցմունքները վճռորոշ են եղել:*

(...) Այդ պատճառով Դատարանը պետք է ինքը գնահատի չներկայացած վկաների կողմից տրված ցուցմունքների նշանակությունը՝ մեղավորությունը հաստատող առկա լրացուցիչ ապացույցները հաշվի առնելով (...) Դատարանն այս առնչությամբ նշում է, որ դիմումատուի մեղավորությունը հաստատվել է հետևյալ ապացույցների հիման վրա. քրեակատարողական հիմնարկի աշխատակիցներ Գ. Բ.-ի և Ա. Ա.-ի դատական քննության ժամանակ տված ցուցմունքները, վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի նախաքննական ցուցմունքները, այն փաստը, որ համապատասխան փաստաթղթերը, որպես ծանրոցն ուղարկող, ստորագրել է դիմումատուն և նրան զգուշացվել է բանտարկյալին անօրինական իրեր ուղարկելու արգելքի մասին, տորթի մեջ գտնված իրերի հայտնաբերման և առգրավման մասին արձանագրությունը և դատական փորձագետի եզրակացությունը, որի համաձայն հայտնաբերված նյութերը եղել են թմրամիջոցներ:

(...) Հաշվի առնելով այս ապացույցները՝ Դատարանը չի կարող չնշել, որ վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները միակ ապացույցներն են եղել, որոնցով հաստատվել է, որ տորթի մեջ թմրամիջոցները դրել է դիմումատուն: Մ. Ս.-ն ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին՝ նշելով, որ տեսել է, թե ինչպես է նա ներարկիչը դնում տորթի մեջ, մինչդեռ Դ. Թ.-ն և Դ. Օ.-ն նշել են, որ իրենք տորթը տվել են դիմումատուին՝ մինչև այն վարչակազմին փոխանցելը: Ամեն դեպքում չներկայացած բոլոր երեք վկաների ցուցմունքներով հերքվում է դիմումատուի առարկությունն այն մասին, որ նա ձեռք չի տվել տորթին՝ մինչև այն քրեակատարողական հիմնարկի վարչակազմին փոխանցելը: Առկա մյուս ապացույցները, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկի երկու աշխատակիցներ Գ. Բ.-ի և Ա. Ա.-ի ցուցմունքները, երկրորդական և ոչ կարևոր բնույթ են կրում, իսկ մյուս ապացույցները բավարար չեն՝ դիմումատուի կողմից հանցագործությունը կատարելու փաստը հաստատելու համար: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Դատարանը կարծում է, որ չներկայացած վկաների ցուցմունքները դիմումատուի դատապարտման համար վճռորոշ են եղել:

Արդյո՞ք եղել են բավարար «հակակշռող գործոններ».

Ի վերջո, Դատարանը պետք է որոշի՝ արդյոք եղել են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացիորեն և պատշաճ կերպով գնահատել չներկայացած վկաների տված ցուցմունքների հավաստիությունը: Այս համատեքստում կարևոր է հետևյալը՝ առաջին ատյանի մոտեցումը չստուգված ցուցմունքների նկատմամբ, մեղավորությունը հաստատող այլ ապացույցների առկայությունն ու դրանց հավաստիությունը և դատավարական գործողությունները, որոնք ձեռնարկվել են դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար:

Դատարանը վերստին նշում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ բառացի, և ո՛չ էլ իմաստային մեկնաբանությունը չեն արգելում անձին իր կամքով, ուղղակի կամ անուղղակի կերպով հրաժարվել արդար դատաքննության երաշխիքներ ունենալու իրավունքից: Այնուամենայնիվ, այդպիսի հրաժարումը պետք է, եթե այն կնպաստի Կոնվենցիայի նպատակներին, ընդունվի անվերապահորեն, այն չպետք է հակասի հանրության կարևոր շահերին և պետք է ունենա իր կարևորությանը համապատասխան նվազագույն երաշխիքները:

Դատարանը նշում է, որ 2010 թվականի մարտի 9-ի դատական նիստի ժամանակ դիմումատուի փաստաբանը համաձայնվել է շարունակել դատական քննությունը՝ հաշվի առնելով ոստիկանության նամակն այն մասին, որ վկաների ներկայանալն ապահովել հնարավոր չէ: Ավելին, դիմումատուն ինքը նշել է, որ համաձայն է, որ դատական քննությունը շարունակվի, սակայն նշել է, որ իր կինը դատական նիստից երեք օր առաջ տեսել է Մ. Ս.-ին՝ դրանով իսկ վիճարկելով Մ. Ս.-ի՝ քաղաքից բացակայելու մասին տեղեկությունը: Այս առնչությամբ տվյալ գործը տարբերվում է Դատարանի կողմից քննված մյուս գործերից, որոնց դեպքում քրեական գործով ամբաստանյալը հրաժարվել էր խաչաձև հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին: Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ համաձայնվելով շարունակել դատական քննությունը՝ դիմումատուն անվերապահորեն՝ անուղղակի կամ ուղղակի կերպով հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքներից: Ընդհակառակը, առաջին ատյանի դատարանի և ոստիկանության կողմից տվյալ վկաների ներկայանալը բազմիցս չապահովելու արդյունքում այլընտրանք չունենալով՝ դիմումատուն համաձայնվել է շարունակել դատական քննությունը նրանց բացակայության պայմաններում և այդ հարցը բարձրացրել է իր հետագա բողոքներում:

(...)

Ինչ վերաբերում է դատավարական այն գործողություններին, որոնք ձեռնարկվել են՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար, ապա Դատարանը նշում է, որ նախաքննության ընթացքում դիմումատուի և վկա Մ. Ս.-ի միջև կատարվել է առերեսում: Թեև Մ. Ս.-ն կարող է համարվել մեղադրանքի կողմի հիմնական վկան՝ հաշվի առնելով, որ նա ուղղակիորեն մեղադրել է դիմումատուին, Դ.Թ.-ի և Դ.Օ.-ի ցուցմունքները Մարզային դատարանի համար հավասար հիմք են ծառայել հանցագործությունը կատարելու մեջ դիմումատուի մեղավորությունը հաստատված համարելու համար, և Մ. Ս.-ի ցուցմունքին հատուկ

նշանակություն չի տրվել: **Դատարանը նաև նշում է, որ դիմումատուին նախաքննության փուլում վկաներ Դ. Թ.-ին և Դ. Օ.-ին հարցաքննելու որևէ հնարավորություն չի տրվել:**

Դիմումատուն պնդել է, որ ծանոթ չլինելով Մ.Ս.-ի՝ նախկինում տված ցուցմունքներին, նա չի կարողացել վիճարկել դրանց հավաստիությունն առերեսման ժամանակ: Դատարանը, այնուամենայնիվ, նշում է, որ Մ. Ս.-ն ամեն դեպքում պնդել է իր ցուցմունքներն առերեսման ժամանակ, և դիմումատուն ծանոթացել է դեպքերի՝ Մ.Ս.-ի մեկնաբանմանը, հետևաբար նա ունեցել է նրան հարցեր ուղղելու հնարավորություն: Դատարանը մյուս կողմից նշում է, որ դիմումատուն բողոքում անդրադարձել է նաև առերեսումն անցկացնելու եղանակին՝ պնդելով, որ իր հարցերից մի քանիսը պատշաճ կերպով չեն արձանագրվել, իսկ բողոքները մնացել են անպատասխան: Դատարանը նաև նշում է, որ առաջին ատյանի դատարանն իր վճռի մեջ միայն նշել է, որ Մ. Ս.-ն առերեսման ժամանակ հաստատել է նախկինում տված իր ցուցմունքները, սակայն իր գնահատականը չի տվել դիմումատուի և Մ. Ս.-ի միջև առերեսման արդյունքների վերաբերյալ՝ Մ.Ս.-ի ցուցմունքների հավաստիությունը գնահատելու համար: Այդպիսի հանգամանքներում **Դատարանը կարծում է, որ չներկայացած երեք վկաներից միայն մեկի հետ կատարված առերեսումը, որը նաև չի ազդել նրանց վկայությունների գնահատման վրա, բավարար չի եղել՝ դատական քննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար:**

Հաշվի առնելով չներկայացած վկաների չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների բացակայությունը և դիմումատուի վերաբերյալ գործի դատական քննության ժամանակ վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի բացակայությանը հակակշռող ընթացակարգային երաշխիքների անբավարարությունը՝ Դատարանը կարծում է, որ քրեական գործով **վարույթն ընդհանուր առմամբ անարդարացի է եղել այն պատճառով, որ այդ չներկայացած վկաների նախաքննական ցուցմունքները ճանաչվել են որպես ապացույց:**

Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի

Գանգալ - 35688/11

Վճիռ - 24.11.2016թ.

Դիմումատու Սպարտակ Մանուչարյանը մեղադրվել և դատապարտվել է Կ.Ս-ի սպանության համար, ինչին ականատես է եղել վերջինիս ընկերուհի Ք. Մ.-ն, ով դատարանում չի հարցաքննվել: Ք.Մ.-ն նախաքննության ընթացքում չի առերեսվել մեղադրյալի հետ քանի որ նրանց ցուցմունքներն սկզբում չեն հակասել միմյանց:

2. Արդյոք վկաների՝ դատաքննությանը չներկայանալու համար առկա են հիմնավոր պատճառներ

Դատարանը նշում է, որ մարզային դատարանը և Վերաքննիչ դատարանը դիմումատուի գործը քննել են վկա Ք. Մ.-ի բացակայությամբ, որը հանդիսացել է սպանության միակ ականատես վկան, և որը նույն օրը ոստիկանության կողմից հարցաքննվելու ժամանակ տվել է

դիմումատուի մեղավորությունն ուղղակիորեն հաստատող ցուցմունք: Մարզային դատարանը մի քանի անգամ հետաձգել է լսումները՝ փորձելով ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դիմումատուի գործով դատաքննությանը, ինչպես նաև այդ հարցում դիմել է ոստիկանության աջակցությանը: Վերաքննիչ դատարանն իր հերթին, փորձել է ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դատաքննությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ:

Դատարանն այնուհետև նշում է, որ ոստիկանությանն անընդմեջ չի հաջողվել կատարել մարզային դատարանի կարգադրությունները՝ Ք. Մ.-ի կողմից դատաքննությանը հարկադրաբար ներկայանալու վերաբերյալ, սակայն, ըստ ոստիկանության, հնարավոր չի եղել պարզել նրա գտնվելու վայրը, և ենթադրվում է, որ նա մեկնել է երկրից

(...)

Սույն գործում Դատարանի համար համոզիչ չէ այն հանգամանքը, որ գործադրվել են բոլոր ողջամիտ ջանքերը՝ դիմումատուի գործով դատաքննությանը վկա Ք. Մ.-ի ներկայությունն ապահովելու համար: Ճշմարիտ է այն հանգամանքը, որ ինչպես արդեն նշվել է, մարզային դատարանը փորձել է ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դատավարությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ՝ մի քանի անգամ հետաձգելով լսումները և դիմելով ոստիկանության օգնությանը՝ դատաքննությանը նրա հարկադրաբար ներկայանալն ապահովելու համար: Այնուամենայնիվ, այդ միջոցները եղել են ապարդյուն՝ հաշվի առնելով դատարանի կարգադրությունը ոստիկանության կողմից կատարելու անընդմեջ ձախողումը: **Այն իրավիճակում, երբ ոստիկանությունը զուտ մի քանի անգամ այցելել է Ք. Մ.-ի տուն և տեղեկանալով, որ նա արտասահմանում է գտնվում, ո՛չ ստուգել է այդ տեղեկատվության հավաստիությունը և ո՛չ էլ փորձել է պարզել վերջինիս գտնվելու վայրը, ինչը հնարավորություն կտար դատարանին դիմելու միջազգային իրավական օգնության, Դատարանը չի կարող համարել, որ իշխանություններն «ակտիվորեն փնտրել են վկային» և ձեռնարկել «բոլոր ողջամիտ միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար»:** Այնուամենայնիվ, խնդիրը չի սահմանափակվում միայն Ք. Մ.-ի՝ դիմումատուի գործով դատաքննությանը չներկայանալու հիմնավոր պատճառի բացակայությամբ: Միայն այդ պնդումն ինքնին չի վկայում քրեական դատավարության անարդարացի լինելու մասին, թեև այն շատ կարևոր գործոն է մյուս համապատասխան պնդումների հետ ընդհանուր հավասարակշռության մեջ դիտարկելու հարցում:

2) Արդյոք քննությունից բացակայող վկայի ցուցմունքը «միակը և որոշիչն» է եղել

«55. Դատարանի դիտարկմամբ մարզային դատարանի և Վերաքննիչ դատարանի վճիռներում Ք. Մ.-ի մինչդատական ցուցմունքն ընդունվել է որպես դիմումատուի մեղավորությունը հաստատող ապացույց՝ առանց գնահատելու այդ ապացույցի ապացուցողական արժեքը: Հետևաբար, Դատարանը պետք է սեփական գնահատականը տա քննությունից բացակայող վկայի ցուցմունքի ծանրակշիռ լինելու հանգամանքին՝ հաշվի առնելով մեղավորությունը հաստատող մյուս առկա ապացույցները:

ինչպես արդեն նշվել է, Ք. Մ.-ն եղել է հանցագործության միակ ակնատես վկան: Նա ճանաչել է դիմումատուին, ով եղել է իր հարևանը, և մատնացույց է արել նրան ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ: Կասկածի տակ չի կարող դրվել այն հանգամանքը, որ Ք. Մ.-ի ցուցմունքը միակ ապացույցը չէ, որի վրա հիմնվել է դիմումատուի դատապարտումը: Այնուամենայնիվ, վկայի մինչդատական ցուցմունքը միակ ուղղակի ապացույցն է, որը հիմնավորում է այն հայտարարությունը, որ դիմումատուն է կրակ արձակել Կ. Ս.-ի ավտոմեքենայի վրա: Այդ իմաստով դիմումատուի գործում Ք. Մ.-ն կարող է դիտարկվել որպես մեղադրող կողմի հիմնական վկա: Ինչ վերաբերում է ապացույցների մնացած մասին, Ս. Ս.-ի ցուցմունքը զուտ ապացուցում է, որ Կ. Ս.-ի և դիմումատուի միջև առկա են եղել լարված հարաբերություններ, մինչդեռ Ք. Մ.-ի ծնողների՝ Ա. Մ.-ի և Ս. Մ.-ի ցուցմունքները հիմնված են եղել դեպքերի մասին Ք. Մ.-ի տված ցուցմունքների վրա: Ճշմարիտ է այն հանգամանքը, որ Վ. Ջ.-ի ցուցմունքը, որը նա վերահաստատել է առերես հարցաքննության ժամանակ, հակասում է դիմումատուի պաշտպանական ցուցմունքին այն մասին, որ հանցագործության կատարման ժամանակ նա եղել է Վ. Ջ.-ի տանը: Այնուամենայնիվ, միայն Վ. Ջ.-ի ցուցմունքն առանձին չի ապացուցում, որ ավտոմեքենայի վրա կրակ արձակողը եղել է դիմումատուն և ոչ թե նրա եղբայրը, ինչպես նշել էր դիմումատուն իր խոստովանական ցուցմունքից հրաժարվելուց հետո:

Կառավարությունը չի կարողացել հիմնավորել, որ մնացած բոլոր ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունը բավարար են որոշիչ կերպով պնդելու համար, որ հանցագործությունը կատարվել է դիմումատուի և ոչ թե մեկ այլ անձի, օրինակ՝ նրա եղբոր կողմից: Օրինակ, ներպետական դատարանների վճիռներից չի բխում, որ դեպքի օրը դիմումատուի հագին եղած հագուստի վրա կրակոցի՝ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատված հետքերն ապացուցում են, որ կրակոցների հեղինակը եղել է նա: Վերոնշյալից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուի դատապարտման համար որոշիչ են եղել քննությունից բացակայող վկա Ք. Մ.-ի ցուցմունքները:

3. Արդյոք առկա են եղել բավարար «հակակշռող գործոններ»

Այս համատեքստում վերաբերելի են հետեյալ տարրերը. դատաքննություն իրականացնող դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դրանց ապացուցողական ուժը, ինչպես նաև դատաքննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները:

Դատարանը նշում է, որ մարզային դատարանի վճիռը չի պարունակում իրեն ներկայացված ապացույցների վերլուծություն, ինչպես նաև ավելի փոքր նշում այն մասին, որ դատարանը տեղյակ է եղել վկայի չստուգված ցուցմունքների, այդ թվում՝ Ք. Մ.-ի ցուցմունքի նվազ ապացուցողական արժեքի մասին: Բոլոր ապացույցները պարզապես ներկայացվել են որպես դիմումատուի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ

դատաքննություն անցկացնող դատարանը պատշաճ կարգով չի քննել Ք. Մ.-ի ցուցմունքի հավաստիության հարցը:

Դատարանն այնուհետև նշում է, որ, ինչպես արդեն վերևում նշվել է, մարզային դատարանն ունեցել է դիմումատուի մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույց: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, լրացուցիչ ապացույցը, ի տարբերություն Ք. Մ.-ի ցուցմունքի, ինքնին չի խաթարել դիմումատուի պաշտպանության իրականացումն այն մասով, որ իր մահացած եղբայրն է կատարել սպանությունը:

Ի վերջո, Դատարանը նշում է, որ դատավարական որևէ միջոց չի ձեռնարկվել՝ իր գործով դատաքննության ժամանակ Ք. Մ.-ին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն չի ունեցել հարցաքննելու Ք. Մ.-ին վարույթի որևէ փուլում: Ավելին, դիմումատուն Վերաքննիչ դատարանից պահանջել է Ք. Մ.-ի ցուցմունքը հայտարարել անընդունելի, սակայն իր պահանջը որևէ կերպ չի բավարարվել:

Վերոնշյալ պնդումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ վկա Ք. Մ.-ին հարցաքննելու իրավունքը, ում վկայությունները որոշիչ դեր են ունեցել իր դատապարտման հարցում:

«Չապ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի

Գանձապար - 15485/09

Վճիռ - 04.05.2017թ.

«Էնգելի չափանիշների» հիման վրա գտնելով, որ «Չապ» ՍՊԸ-ի վերաբերյալ հարկերի գործով վարույթի նկատմամբ կիրառելի է եղել կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը, դատարանն անդրադարձել է «դ» ենթակետի խախտման հարցին:

Դատարանը նշել է, որ Հարկային պետական ծառայության կողմից պահանջն ստանալուց հետո Գր. Ա.-ն՝ որպես Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ, տրամադրել է դիմումատու ընկերության հեռարձակման գործունեության վերաբերյալ որոշակի փաստաթղթեր: Ճիշտ է, որ Գր. Ա.-ն դիմումատու ընկերության վերաբերյալ որևէ բանավոր կամ գրավոր հայտարարություն չի արել և որ իր պաշտոնավարման ընթացքում տրամադրել է համապատասխան փաստաթղթերը, քանի որ նման պահանջ էր ստացել հարկային մարմինների կողմից: Այդուհանդերձ, նրա կողմից տրամադրված փաստաթղթերը ՀՊԾ-ի հաշվետվության մեջ օգտագործվել են դիմումատու ընկերության դեմ՝ դրա հարկային պարտավորությունը սահմանելու համար, և հետագայում դրանց հղում է կատարվել Վարչական դատարանի կողմից կայացված վճռում: Ավելին, Գր. Ա.-ին կանչելու մասին իր միջնորդության մեջ դիմումատու ընկերության ներկայացուցիչը հստակ նշել էր, որ ինքը ցանկանում է նրան հարցեր ուղղել միմիայն նրա կողմից տրամադրված տեղեկությունների և փաստաթղթերի վերաբերյալ: Նա նաև, ըստ էության, վիճարկել է Գր. Ա.-ի կողմից տրամադրված տեղեկությունների հավաստիությունը: Այդ հանգամանքներում այն փաստը, որ Գր. Ա.-ն դիմումատու ընկերության դեմ որևէ հայտարարություն չի արել, որևէ նշանակություն

չունի: Փոխարենը, Գր. Ա.-ի կողմից տրամադրված փաստաթղթերում առկա տեղեկությունները հարկային մարմինների և դատարանների համար համարվել են այնպիսի ապացույց, որի նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված երաշխիքները:

Ինչ վերաբերում է վկաներ Գր. Ա.-ին, Ա. Զ.-ին, Ս. Ա.-ին, Ս. Մ.-ին, Հ. Պ.-ին, Գ. Ս.-ին, Գ. Ա.-ին և Հ. Մ.-ին, ապա Վարչական դատարանը հրաժարվել է բավարարել նրանց [դատարան] կանչելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը՝ համարելով, որ նրանց ցուցմունքները վերաբերելի չէին, և, հետևաբար, նրանց չներկայանալու հարգելի պատճառների հարցն անգամ չի բարձրացվել:

Դատարանն այնուհետև նշում է, որ Գր. Ա.-ի տրամադրած փաստաթղթերը և Ա. Զ.-ի, Ս. Ա.-ի, Ս. Մ.-ի, Հ. Պ.-ի, Գ. Ս.-ի, Գ. Ա.-ի և Հ. Մ.-ի կողմից արված հայտարարությունները Վարչական դատարանում վարույթի ընթացքում ընդունվել են որպես դիմումատու ընկերության դեմ ներկայացված ապացույց: Այդ վկաների կողմից տրված ցուցմունքները, անկասկած, չեն եղել դիմումատու ընկերության դեմ ներկայացված միակ ապացույցը: Այնուամենայնիվ, դիմումատու ընկերության նկատմամբ հարկային պարտավորություն սահմանելիս և դիմումատու ընկերության հաշիվներն ստուգելուց հետո ՀՊԾ-ի՝ դրա հաշվետվության մեջ ներառված հաշվարկներն ընդունելիս Վարչական դատարանը հիմնվել է դրա վրա (տե՛ս վերելում՝ 23-րդ պարբերությունը): Հետևաբար, կարելի է ենթադրել, որ տվյալ վկաների կողմից տրված ցուցմունքները որոշիչ են եղել դիմումատու ընկերության նկատմամբ լրացուցիչ հարկեր սահմանելիս:

Վերջապես, Դատարանը նշում է, որ տվյալ վկաներին հարցաքննելու հնարավորություն չունենալու հետևանքով դիմումատու ընկերության հնարավորությունների սահմանափակումը փոխհատուցելու համար որևէ դատավարական երաշխիք չի եղել: Վարչական դատարանը, որը եղել է գործն ըստ էության քննող միակ դատարանը, հրաժարվել է բավարարել դիմումատու ընկերության՝ այդ վկաներին կանչելու մասին միջնորդությունը՝ համարելով, որ նրանց ցուցմունքները վերաբերելի չեն՝ չնայած այն փաստին, որ հետագայում իր վճիռը կայացնելիս հիմնվել է հենց այդ նույն ցուցմունքների վրա: Ավելին, Վարչական դատարանը մերժել է դիմումատու ընկերության՝ այն ընկերությունների և անհատ գործարարների հարկային փաստաթղթերն ուսումնասիրելու պահանջը, որոնք պնդել են, որ դիմումատու ընկերության կողմից չեն ստացել պատշաճ ձևով փաստաթղթավորված ծառայություններ, ինչը կարող էր հնարավորություն տալ գնահատելու նրանց հայտարարությունների արժանահավատությունը:

52. Վերոնշյալ փաստարկները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատու ընկերության՝ իր դեմ հարուցված վարույթի ընթացքում վկաներ Գր. Ա.-ին, Ա. Զ.-ին, Ս. Ա.-ին, Ս. Մ.-ին, Հ. Պ.-ին, Գ. Ս.-ին, Գ. Ա.-ին և Հ. Մ.-ին հարցաքննելու իրավունքը:

53. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ համատեղ:

4. Համադրված վերլուծություն

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի վերաբերյալ Եվրոպական դատարանի մեկնաբանությունների վերլուծությունը վկայում է, որ դրանք աստիճանաբար խստանում են պաշտպանության կողմի հնարավորություններն ընդլայնելու միտումով, ինչն ուղիղ համեմատական է քննության հնարավորությունների սահմանափակմանը:

Այդ միտումն արտահայտվում է նախ և առաջ մեջբերված նորմի իմաստով «վկա» հասկացության մեկնաբանություններում: Եվրոպական դատարանն, արձանագրելով, որ վկա հասկացությունն ինքնավար է և պետք է մեկնաբանվի անկախ դրա ներպետական բնորոշումից, այդ հասկացության շրջանակներում իսկզբանե ներառել է տուժողին, գործով այլ մեղադրյալներին և փորձագետին: Բայց, եթե վկա հասկացության սկզբնական մեկնաբանությունները ներառել են վկայություն տված անձանց անկախ ներպետական իրավունքում նրանց դատավարական կարգավիճակից, ապա ներկայում այն ավելի է ընդլայնվել և ներառում է ցանկացած անձի, ով հանդիսացել է մեղադրանքի հիմքում դրված տվյալի սկզբնաղբյուր, անկախ նրանից՝ այդ տվյալն ինչ կերպ է արտացոլվել կամ ամրագրվել:

Ավելին, ծանոթանալու և վիճարկելու իրավունքը հավասարապես կիրառելի է նաև փաստաթղթային՝ ոչ անձնական ապացույցների նկատմամբ: Այս առումով ուշագրավ է օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացմանն առնչվող փաստաթղթերին ծանոթանալու մեղադրյալի հնարավորության մասին դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ դրանց ամբողջական կամ մասնակի գաղտնիության վերաբերյալ օրենսդրական նորմն ինքնին բավարար չէ յուրաքանչյուր դեպքում այդ փաստաթղթերը չբացահայտելու համար: Դատարանը գտել է, որ ցանկացած դեպքում դատարանները պետք է գնահատեն հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը և հիմնավորեն, որ պաշտպանության կողմի համար արժեքավոր որևէ տեղեկության չբացահայտումը եղել է օրենքով նախատեսված և կոնկրետ դեպքում անհրաժեշտ՝ մասնավոր շահը հավասարակշռող հանրային շահի ապահովման համար:

Հակընդդեմ հարցման իրավունքի գլխավոր կանոնը Եվրոպական դատարանի պրակտիկայում ըստ էության հստակ է և անփոփոխ. մեղադրանքի հիմքում դրվող բոլոր ապացույցները պետք է հետազոտվեն դատավորի ներկայությամբ, մրցակցության պայմաններում, որտեղ մեղադրյալը պետք է կարողանա վիճարկել իր դեմ ցուցմունք տված անձանց հայտնած տեղեկությունները և հարցեր տալ նրանց, իսկ դատարանը պետք է կարողանա գնահատել ցուցմունքները՝ հաշվի առնելով նաև հարցվողների վարքագիծը:

Այս կանոնից բացառության երկու պայմաններ կան, որոնք փոխլրացնում են միմյանց: Դրանցից առաջինը ենթադրում է, որ պետք է լինի **հարգելի և հիմնավոր** պատճառ՝ վկայի դատարան չներկայանալու համար: Վկայի չներկայանալը հարգելի կարող է համարվել սահմանափակ դեպքերում, մասնավորապես, եթե նա մահացել է կամ եթե ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար միջոցներ դատարանում վկայի ներկայությունն ու հարցաքննությունն ապահովելու համար, սակայն այն ապահովել հնարավոր չի եղել:

Ինչ վերաբերում է դատարան ներկայանալու պատճառների հիմնավորվածությանը, ապա դատարանը յուրաքանչյուր դեպքում քննարկում է արդյոք դատարան չներկայանալու հարգելի պատճառն իսկապես առկա է, այսինքն արդյոք վկային դատարան ներկայացնելն անհնարին է: Եվրոպական դատարանն այս կապակցությամբ բազմիցս անդրադարձել է վկայի ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ պետության ցուցաբերած ջանասիրությանը և նշել, որ դատարանն ու քրեական հետապնդման մարմինները չեն կարող սահմանափակվել անձին դատարան ներկայանալու անհրաժեշտության մասին տեղեկացնելով և պարզ գրագրությամբ այն մասին, որ վերջինս որևէ շարքային պատճառով չի կարող ներկայանալ դատարան, կամ որ դատական ծանուցագրերը չեն ստացվում նրա կողմից: Ավելին, դատարանի բացասական արձագանքին են արժանացել այն դեպքերը, երբ կանչվող վկայի հարևանքների հայտնած տեղեկությունները բավարար են դիտվել փաստելու, որ վկան որևէ պատճառով դատարան ներկայանալ չի կարող: Դատարանն անընդունելի է համարել վկայի բացակայության կամ դրա պատճառի մասին դատարանում ստացված տեղեկությունները հեշտությամբ ընդունելն ու դրանց հետ համաձայնվելը և պահանջել, որ դրանք պատշաճ կերպով ստուգվեն: Դատարանն անհարգելի է համարել նաև վկայի չներկայանալու այն պատճառաբանությունը, որ վերջինս գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս: Այս առումով եվրոպական դատարանն ուղղակի մատնանշում է իրավասու մարմինների անթույլատրելի անգործությունն այն պարագայում, երբ միջազգային իրավական օգնության հնարավորությունները հասանելի են եղել, սակայն չեն օգտագործվել կամ օգտագործվել են պակաս արդյունավետությամբ:

Դատարանում վկայի ներկայությունն ու նրան հարցաքննելու հնարավորությունը քննարկելիս Եվրոպական դատարանն անդրադարձել է այն դեպքերին, երբ անձն ինքն է հրաժարվում հակընդդեմ հարցման իրավունքից և այդ պարագայում այդ իրավունքն ապահովված չլինելը չի կարող դիտվել որպես կոնվենցիայի խախտում: Դրանցից առաջինը հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքից հրաժարվելու մասին ուղղակի հայտարարությունն է, որը պետք է լինի հստակ և աներկբա: Այս առումով կարևոր է նաև Հայաստանի դեմ գործերով վճիռներում Դատարանի ընդգծումը, որ չներկայացված վկաներին դատարանում չհարցաքննելուն և նրանց ցուցմունքների հրապարակմանը մեղադրյալի համաձայնությունը չի ենթադրում հակընդդեմ հարցման իրավունքից հրաժարում:

Եվրոպական դատարանի իրավունքում այդուհանդերձ առանձնացվել է նաև հակընդդեմ հարցման իրավունքից մեղադրյալի անուղղակի հրաժարման դեպքը՝ սահմանելով, որ մեղադրյալի դրսևորած կամ նրա նախաձեռնությամբ, համաձայնությամբ, կամ թողտվությամբ այլոց դրսևորած այն վարքագիծը, որն ուղղված է վկայի մոտ վախ առաջացնելուն, ենթադրում է հրաժարում համընդդեմ հարցման իրավունքից: Այս հանգամանքի հաստատմանը, սակայն, դատարանը հատուկ ապացուցողական չափանիշ է ներկայացնում: Վախի վերաբերյալ ցանկացած հայտարարություն չի կարող բավարար լինել հակընդդեմ հարցման իրավունքը չեզոքացնելու համար: Հակընդդեմ հարցումն ապահովելու պարտականությունից չի ազատում

նաև ապացուցված բայց ընդհանուր վախը, այսինքն՝ անհանգստությունն ու անհարմարությունը կապված ընդհանուր միջավայրի հետ:

Վկաներին դատարանում հարցաքննելու կանոնից բացառության մյուս պայմանը «**Միակ կամ վճռորոշ» կանոնն է**: Այն ենթադրում է, որ հակընդդեմ հարցմամբ չապահովված ապացույցը չի կարող դրվել մեղադրանքի հիմքում, եթե այն միակը կամ վճռորոշն է: Ավելի պարզ՝ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու մեղադրյալի իրավունքն իրացված չլինելու դեպքում, անկախ նրանից այդ վկայի դատարան չներկայանալու հարգելի և հիմնավոր պատճառ եղել է թե ոչ, վերջինիս ցուցմունքը չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում, եթե այն միակն է կամ վճռորոշը: Միակ դեպքը, երբ հակընդդեմ հարցման իրավունքը փաստացի իրացված չէ, այսինքն մեղադրյալը փաստացի չի հարցաքննել իր դեմ վկայած անձին և վկայի՝ միակը կամ վճռորոշը հանդիսացող ցուցմունքը կարող է հիմք ընդունվել, այն է, երբ մեղադրյալը ուղղակի կամ անուղղակի հրաժարվել է հակընդդեմ հարցման իրավունքից:

«**Միակ կամ վճռորոշ»** կանոնում «միակ» բառը ենթադրում է տառացի իմաստ և նշանակում, որ մեղադրյալի կողմից նրան մեղսագրված արարքը կատարելու վերաբերյալ ապացույցը միայն մեկն է: Ուշադրության է արժանի, որ ապացույցի միակը լինելը պետք է մեկնաբանել դրանով հաստատվող հանգամանքի համատեքստում և միայն այն, որ գործով այլ ապացույցներ ևս կան, չի կարող նշանակել, որ ապացույցը միակը չէ: Ապացույցը միակն է, երբ դեպքը կամ անձի առնչությունը դրան հաստատվում են միայն այդ ապացույցով: Դեպքը հիմնավորող բազմաթիվ ապացույցների պայմաններում անձի առնչությունը հաստատող մեկ ապացույցը շարունակում է լինել միակը:

Ինչ վերաբերում է «**վճռորոշ»** հասկացությանը, ապա այն գնահատելն ավելի բարդ է: Ապացույցը վճռորոշ է, եթե այն կրում է հիմնական ապացուցողական բեռը, որպիսի հանգամանքը ենթակա է գնահատման մյուս ապացույցների ապացուցողական ուժի համատեքստում: Այս հասկացությունը մեկնաբանելիս ավելի հեշտ է այն դիտարկել ներպետական իրավունքում սահմանված «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշի համատեքստում: Եթե հակընդդեմ հարցմամբ չապահովված ցուցմունքը ապացույցների շարքից պայմանականորեն հանելու դեպքում մյուս ապացույցները չեն բացառում անձի անմեղության ողջամիտ հավանականությունը, այսինքն այդ հավանականությունը բացառվում, նույնն է թե հիմնավոր կասկածից վեր չափանիշը ապահովվում է պայմանականորեն հանված ցուցմունքով, ուրեմն այն վճռորոշ ապացույցն է:

Նախադեպային իրավունքի վերլուծությամբ ավելի խնդրահարույց է այն հարցը, թե կոնֆրոնտացիայի չապահովման հիմքով արդար դատաքննության իրավունքի խախտումը գնահատելու վերը քննարկված երկու չափանիշներն ինչ հարաբերակցություն ունեն, այսինքն՝ ինչպես է դրանց հիման վրա թեսթի միջոցով գնահատվում արդյոք առկա է 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում, թե ոչ: Եվրոպական դատարանի իրավունքը հիմք է տալիս այդ կապակցությամբ երկու մեկնաբանության:

Առաջինի համաձայն՝ եթե վկայի ներկայությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ու պատշաճ ջանասիրություն չի դրսևորվել, ուրեմն միանշանակ առկա է արդար

դատաքննության իրավունքի խախտում՝ անկախ նրանից՝ հակընդդեմ հարցմամբ չապահովված ապացույցը միակն էր, թե ոչ: Այս մոտեցման էությունն այն է, որ եթե Եվրոպական դատարանն արձանագրում է, որ վկային ներկայացնելու համար անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել, այլևս չի անդրադառնում այն հարցին, թե վկայի ցուցմունքը միակը կամ վճռորոշն էր թե ոչ:

Երկրորդ մեկնաբանությունը, որը արտահայտված է *Շաշաշվիլիի* գործով վճռում, ավելի մեղմ է և հիմնվում է այն մոտեցման վրա, որ դատարանի խնդիրն է պարզել ոչ թե կոնկրետ ապացույցի թույլատրելիությունը, այլ դատաքննության արդարացիությունն առհասարակ, որպիսի պայմաններում դատարանը յուրաքանչյուր դեպքում քննարկում է, թե անհարգելի պատճառով չներկայացված վկայի ցուցմունքն ինչ արժեք ուներ, միակը կամ վճռորոշն էր արդյոք:

Ներպետական իրավունքում ևս այս երկու մոտեցումներն արտահայտված են: ՀՀ վճռաբեկ դատարանը մի կողմից *Հմայակ Սահակյանի* գործով ուղղակիորեն հնարավոր է համարել կոնֆրոնտացիայով չապահովված ցուցմունքի օգտագործումը, եթե այն միակը կամ վճռորոշը չի եղել, մյուս կողմից՝ *Հարություն Սարգսյանի* գործով անթույլատրելի համարելով և ապացուցողական զանգվածից հանելով երկու վկաների չկոնֆրոնտացված ցուցմունքները, թեև դրանք միակը կամ վճռորոշը չէին:

Եվրոպական դատարանի պրակտիկան այս մոտեցումներից որևէ մեկին առավելություն տալու հիմքեր չի տալիս, և ինչպես տեսանք, դրանք երկուսն էլ արտահայտված են դատարանի վճիռներում: Բայց եվրոպական դատարանի իրավունքի դինամիկան, դրանում դիրքորոշումների թեկուզ չնչին վերափոխումները վկայում են, որ դատարանն այդուհանդերձ հակված է երկրորդ մեկնաբանությանը և հակընդդեմ հարցման իրավունքի հարցը որոշվում է վերը քննարկված երկու հարցերի համադրությամբ քննարկվող հետևյալ երրորդ հարցի շրջանակներում, այն է՝ *որքանով են ապահովվել հակակշիռները*: Այս հարցի շրջանակներում է, որ դատարանը վերջնական գնահատական է տալիս կոնֆրոնտացիայով չերաշխավորված միակ կամ վճռորոշ ցուցմունքի վրա հիմնված դատապարտման արդարացիությունը: Հակընդդեմ հարցմամբ չերաշխավորված միակ կամ վճռորոշ ցուցմունքը դատապարտման հիմքում դնելու հակակշիռների առկայության գնահատման հստակ չափանիշներ չեն սահմանվել: Այդ առումով նկատի են առնվում ի թիվս այլոց՝ օրենքով նախատեսված և ապահովված դատավարական երաշխիքները և բոլոր այն միջոցները, այդ թվում՝ այլ ապացույցները, որոնք կոնկրետ ապացույցի հավաստիությունը գնահատելու հնարավորություն են տալիս: Այլ կերպ ասած՝ բավարար հակակշիռն առկա է, եթե հակընդդեմ հարցմամբ չապահովված ցուցմունքը ստացվել է այնպիսի երաշխիքների պահպանմամբ, որոնք թույլ են տալիս դատարանի կողմից այն գնահատել արժանահավատ:

Անհրաժեշտ է շեշտել, որ բազմաթիվ վճիռներում եվրոպական դատարանը սահմանել է, որ անձն իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու իրավունք պետք է ունենա վարույթի որևէ փուլում, ինչը հիմք է տվել մեկնաբանությունների, որ մինչդատական վարույթում կատարված առերեսումն ինքնին վերջնականապես երաշխավորում է, որ հակընդդեմ հարցման իրավունքի խախտում չկա: Սակայն, եվրոպական դատարանը մշտապես բացարձակ

կարևորելով իր դեմ ցուցմունք տված վկային դատարանում հարցաքննելու իրավունքը, որպեսզի դատարանը կարողանա գնահատել հարցաքննվողի վարքագիծը, մինչդեռատական վարույթում կատարված առերեսումը քննարկում է հենց հակակշիռների հարցի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ եվրոպական դատարանը գնահատում է, թե նախաքննության ընթացքում կատարված առերեսումը, դրա կատարման դատավարական երաշխիքներով, կոնկրետ դեպքում այդ երաշխիքների պահպանմամբ, դրա ընթացքի և բովանդակության առանձնահատկություններով, որքանով է հակակշռում այդ վկայի դատարան չներկայանալու բացը:

Ուշագրավ է միակ կամ վճռորոշ կանոնի պահպանումը և հակակշիռների առկայությունը գնահատելիս դատարանի կողմից կատարվող քննարկումների խորությունը՝ արտահայտված հատկապես Հայաստանի դեմ գործերով վճիռներում: *Ավերիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով որոշմամբ եվրոպական դատարանը խիստ բացառիկ մոտեցում է ցուցաբերել՝ իրավունքի խախտում ճանաչելով այնպիսի գործով, որով մեղադրյալի կողմից տորթի մեջ թմրանյութ դնելու և որպես հանձնուք ՔԿՀ հանձնելու մասին ցուցմունք տված անձը նրա հետ հարցաքննվել էր առերես, իսկ դատարան չներկայացած մյուս երկու վկաներն ընդամենը հայտնել էին, որ տորթը տվել են մեղադրյալին: Դատարանն առանձին անդրադարձել է ներպետական դատարանների կողմից ապացույցներին տրված գնահատականին և ընդգծել, որ նրանց կողմից ապացույցների վերլուծություն չի կատարվել և թմրանյութը տորթի մեջ դնելու մասին ցուցմունքին, որն ապահովված էր կոնֆրոնտացիայով, հատուկ կարևորություն չի տրվել, այն դիտարկվել է չկոնֆրոնտացված ցուցմունքներին հավասար: *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով դատարանն արձանագրել է, որ ներպետական դատարանների կողմից ապացույցները վերլուծված չեն, շարադրված են մեխանիկորեն և առանձին գնահատման չի արժանացել չկոնֆրոնտացված վկայի ցուցմունքի պակաս կարևորությունը: Իսկ *Տեր-Սարգսյանի* գործով եվրոպական դատարանը բավարար հակակշիռներ չի համարել վկաների՝ այլ պետության նոտարի հաստատմամբ արված հայտարարությունն այն մասին, որ պնդում են իրենց ցուցմունքները: **Դատարանը խիստ կարևորել է հարցեր տալու մեղադրյալի իրավունքը:**

Այլ կերպ ասած՝ եվրոպական դատարանը լուրջ կարևորություն է տալիս ներպետական դատարանների կողմից հակընդդեմ հարցման իրավունքին վերաբերող չափորոշիչների հստակ և մանրամասն գնահատմանը՝ ըստ էության ակնկալելով յուրաքանչյուր դեպքում պատշաճ պարզաբանում առ այն, եղել է արդյոք հիմնավոր և հարգելի պատճառ վկայի բացակայության, նրա ցուցմունքը եղել է արդյոք միակը կամ որոշիչը, թե ոչ, և ի վերջո արդյոք առկա են եղել հակակշիռներ՝ այդ ցուցմունքն ստանալիս ապահովված դատավարական երաշխիքներով, որոնք փոխարինում են հակընդդեմ հարցմանը՝ վկայի ցուցմունքի արժանահավատությունը ստուգելիս:

Ասվածը վկայում է, որ ինչպես եվրոպական դատարանի այնպես էլ ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատականները միշտ հիմնվում են ընդհանուր առմամբ արդար դատական քննության իրավունքի ապահովման չափանիշի վրա և հատուկ կարևորում վկայի դատարան ներկայանալն ու այդ ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս ջանասիրություն դրսևորելը: Եթե

միակն ու վճռորոշը չհամարվող ցուցմունքներ տված անձանց ներկայացնելուն ուղղված քայլերը խիստ անպատշաճ են եղել, դատարանները դրանց օգտագործումը շատ դեպքերում թույլատրելի չեն համարել անկախ դրանց՝ միակը կամ վճռորոշը լինելուց: Իսկ եթե այդուհանդերձ այդպիսի միջոցներ ձեռնարկված են, դատարանն ավելի է հակված խախտման հարցը քննարկելու ընդհանուր ապացույցների համատեքստում: **Այլ կերպ ասած՝ վկաներին հրավիրելու հարցում բացարձակ անգործությունն արդեն իսկ անարդարացի է դարձնում վարույթը:**

Չհետազոտված կամ անանուն վկաների ցուցմունքների օգտագործման հարցի վերաբերյալ Եվրոպական դատարանի պրակտիկան շատ ավելի խիստ է:

Նախ այն, որ չհետազոտված ապացույցը դատավճռի հիմքում դրվել չի կարող, միանշանակ է: Բայց Եվրոպական իրավունքն այս հարցում ևս խիստ նրբանկատ է: *Սիլվա Ասսարյանի* գործով վերաքննիչ դատարանը վերահաստատել էր մեղադրանքի հիմնավորվածության մասին առաջին ատյանի դատարանի որոշումը և այդ հետևությունն ամրապնդելու համար վկայակոչել նաև այնպիսի ցուցմունքներ, որոնք դատարանում չեն հետազոտվել, դրանք տված անձինք դատարանում չեն հարցաքննվել և չեն դատակոչվել: Եվրոպական դատարանը այն պայմաններում, որ անձի դատապարտումն առաջին ատյանի դատարանում այդ ցուցմունքների վրա չի հիմնվել, գտել է, որ եթե վերաքննիչ դատարանն այդուհանդերձ հիմնվել է չհետազոտված ապացույցների վրա, ուրեմն դրա անհրաժեշտությունը տեսել է: Այդ հիմնավորմամբ դատարանն այդ ապացույցները համարել է վճռորոշ և ճանաչել է իրավունքի խախտում:

Ինչ վերաբերում է անանուն վկաներին, ապա դատարանը հստակ դիրքորոշում չի հայտնում նրանց հարցաքննության հատուկ կանոնների մասին՝ մի կողմից հնարավոր համարելով վկաների պաշտպանությունն ապահովելու համար միջոցներ ձեռնարկելը, մյուս կողմից՝ պնդելով, որ հակընդդեմ հարցման հիմնական կանոնն այն է, որ վկաները ներկայացվեն դատարան և մեղադրյալն իմանալով նրանց ինքնությունը, հարցեր տա, իսկ դատավորը կարողանա գնահատել նաև հարցվողի վարքագիծը: Այդ դիրքորոշումների ամփոփումը հանգեցնում է հետևության, որ դատարանը հնարավոր չի համարում անանուն վկաներին պատշաճ հակընդդեմ հարցումը: **Ուստի միակը կամ որոշիչը հանդիսացող անանուն վկայի ցուցմունքի վրա հիմնված դատապարտումը բոլոր դեպքերում խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի դ ենթակետը:**

Ասսարյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանն անդրադարձել է մի կարևորագույն խնդրի ևս՝ քննարկելով, թե արդյոք իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ չվկայելու իրավունքը դատարանում իրացնող անձի նախաքննական ցուցմունքը կարող է դրվել մեղադրանքի հիմքում: Դատարանն այնպիսի ձևակերպումներ չի տվել, որոնք թույլ կտային խոսել դրա անհնարինության մասին, սակայն շեշտել է, որ տվյալ գործով դիմումատուի դուստրը նախաքննական ցուցմունքը տվել է, երբ նրա մայրը դեռ մեղադրյալ չէր: Այսպիսով, դատարանը հիմք է տվել մեկնաբանելու, որ ցուցմունք չտալու իրավունքն իրացնող վկայի նախաքննական ցուցմունքը կարող է դրվել անձի դատապարտման հիմքում, եթե դրա ստացման

դատավարական երաշխիքները խստորեն ապահովված են, այսինքն՝ առկա են հակընդդեմ հարցման իրավունքի իրացման անհնարինության բացը լրացնող հակակշռող գործոններ: **Դատարանի այս մտահոգությունը կրկին հիմք է տալիս խստորեն ընդգծելու կասկածյալի և մեղադրյալի դատավարական կարգավիճակներ տալը հապաղելու անթույլատրելիությունը: Այդ հապաղման հետևանքով այն վկաների ցուցմունքները, ովքեր չգիտեին, որ իրենց մերձավոր ազգականին այդ գործով մեղադրելու հիմքեր կան, կարող են կորցնել ապացուցողական արժեքը:**

Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության պրակտիկայի առանձին ուսումնասիրություն չի պահանջվում փաստելու համար, որ վկայի դատարան չներկայանալու բազմաթիվ դեպքերի հիմքում նրա ցանկության բացակայությունն է՝ պայմանավորված նրանով, որ հրապարակային քննության պայմաններում մերկացնող ցուցմունք տալն «անընդունելի» է, ազդում է վկայի՝ որոշակի շրջանակներում ընկալման կամ դիրքի վրա: Պրակտիկան վկայում է նաև, որ դատարանի հանձնարարությունները ոստիկանությունում վերապահվում են համայնքային ոստիկանությանն ու շատ հաճախ պատշաճ չեն կատարվում և դատավարության մասնակիցների համար ակնհայտ՝ վկան տարբեր միջոցներով խուսափում է դատարան ներկայանալուց: Արդյունքում դատական քննությանը վկաների ներկայությունն ապահովելը դարձել է լրջագույն խնդիր, որը մի կողմից հանգեցնում է վարույթի ձգձգումների, մյուս կողմից ուղղակիորեն պայմանավորում վարույթի արդարացիությունը:

Կրկնելով, որ հակընդդեմ հարցման իրավունքը կարող է ապահովվել վարույթի որևէ փուլում և մինչդեռ տական վարույթում կատարված առերեսումը կարևոր է յուրաքանչյուր դեպքում փաստելու, որ վկային հարցեր տալու մեղադրյալի իրավունքն ապահովվել է և այն հակակշռում է դատարանում վկային հարցաքննելու անհնարինությանը՝ փաստենք, որ ներպետական դատական պրակտիկայի լրջագույն խնդիրներից մեկն այն է, որ շատ դեպքերում առերեսում չի կատարվում այն պայմաններում երբ այն անհրաժեշտ և հնարավոր է: Բազմաթիվ դեպքերում նախաքննության մարմինները առերեսման հիմք հանդիսացող «էական հակասություն» հասկացությունը մեկնաբանում են խիստ նեղ՝ առերեսում կատարելու անհրաժեշտությունն առհասարակ բացառելու միտումով, երբեմն էլ չի ապահովվում այդ քննչական գործողության անհետաձգելիությունը՝ այն հետագայում կատարելու մտադրությամբ: Արդյունքում ավելի ուշ մեղադրող ցուցմունք տված վկային հայտնաբերել և առերեսում կատարել շատ հաճախ հնարավոր չի լինում:

Քիչ չեն դեպքերը, երբ կատարված առերեսումներն իրենց բովանդակությամբ և երաշխիքներով չեն համապատասխանում անհրաժեշտ հակակշիռների վերաբերյալ պահանջին և բավարար չեն լինում դատարանում վկայի հարցաքննության բացը լրացնելու համար: Օրինակ՝ շահերի մեջ հակասությունների պայմաններում կասկածյալներն ու մեղադրյալներն առերեսվում են նրանցից մեկի պաշտպանի բացակայությամբ կամ կատարվում է վկայի և մեղադրյալի առերեսում այն դեպքում, երբ գործով ձեռք բերված ապացույցներն արդեն իսկ

վկայում են, որ վկան ևս պետք է ունենար կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ:

Հիմք ընդունելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի վերաբերյալ Եվրոպական դատարանի ձևավորած մոտեցումները, իրավակիրառ պրակտիկան կատարելագործելու և դրսևորված խնդիրներն ու իրավիճակները բացառելու համար.

ԿՈՆԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին (նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազներին)՝

քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնելիս ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները, որպեսզի.

1) Բացառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում անձին կասկածյալի և մեղադրյալ դատավարական կարգավիճակ տալու հապաղումներն ու այդ անձանց որպես վկա հարցաքննությունը:

2) Բացառվի առերևույթ հանցանք կատարած երկու անձանց առերես հարցաքննությունը նրանցից մեկի՝ վկայի դատավարական կարգավիճակով:

3) Բացառվի պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերում կասկածյալի և մեղադրյալի մասնակցությամբ առերես հարցաքննությունը պաշտպանի բացակայությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք օրենքով սահմանված կարգով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մաս) հրաժարվել են պաշտպանից:

4) Ապահովվի առերեսում քննչական գործողության անհետաձգելիությունը և բացառվեն դրա կատարման հապաղումները կամ առերեսում չկատարելը՝ մեղադրող ցուցմունք տված վկայի հարցաքննությունը դատարանում ապահովելու մտադրությամբ,

5) Ապահովվի կասկածյալին և մեղադրյալին հակընդդեմ հարցման իրավունքի պատշաճ պարզաբանումն ու այդ կապակցությամբ նրանց դիրքորոշման պատշաճ արձանագրումը: Մասնավորապես, կասկածյալի կամ մեղադրյալի և այլ անձանց ցուցմունքներում էական հակասությունների բացակայության դեպքում, նրանց հարցաքննության ընթացքում պարզաբանվի իրենց դեմ ցուցմունք տված վկաներին հարցաքննելու իրավունքը և բառացի արձանագրվի վերջիններիս դիրքորոշումը:

6) Իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ցանկության դեպքում հետևողականորեն և առանց բացառության ապահովվի մեղադրող ցուցմունք տված վկաների հետ կասկածյալի և մեղադրյալի առերեսումը՝ հակընդդեմ հարցման վերջիններիս իրավունքը երաշխավորելու համար:

7) Անվերապահորեն ապահովվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումը և մեղադրյալի և մեկ այլ անձի ցուցմունքներում էական հակասության դեպքում վերջիններիս միջև կատարվի առերեսում:

8) Ապահովվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածում սահմանված «էական հակասություն» եզրույթի լայն մեկնաբանումը՝ նվազեցնելով «էական» հասկացության շեմը: Ցուցմունք չտալու մասին մեղադրյալի կամ կասկածյալի հայտարարությունը դիտել որպես էական հակասություն նրան մեղադրող ցուցմունքների հետ և պահանջել կատարել առերեսում այդպիսի ցուցմունք տված անձի հետ:

9) Նկատի ունենալ, որ մեղադրող ցուցմունք տված վկային հարցաքննելու նախաձեռնության բացակայությունը չի համարվում հակընդդեմ հարցման իրավունքից հրաժարում, այլ այդպիսի հրաժարումն արտահայտվում է այդ մասին գրավոր արձանագրված հայտարարությամբ, որը հստակ է, բացառում է ցանկացած երկիմաստ մեկնաբանություն:

10) Նկատի ունենալ, որ մեղադրյալը համարվում է հակընդդեմ հարցման իրավունքից հրաժարված, եթե այդ մասին հայտարարել է իր և այլ անձանց ցուցմունքներում էական հակասությունների առկայության դեպքում կազմակերպված առերեսման ժամանակ, կամ իր և իրեն մեղադրող այլ անձի ցուցմունքներում հակասությունների բացակայության պայմաններում պաշտպանի ներկայությամբ (երբ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է) հրաժարվել է նրանց հարցաքննելուց: Մեղադրյալի այդպիսի հայտարարությունը պետք է պատշաճ արձանագրվի:

11) Նկատի ունենալ, որ կասկածյալի կամ մեղադրյալի կամ նրանց անունից, հանձնարարությամբ կամ համաձայնությամբ հանդես եկող անձի՝ մեղադրող ցուցմունք տված կամ այդպիսի տեղեկություններ ունեցող վկային ուղղված գործողությունները, որոնք նպատակ ունեն ստիպել նրան չտալ այդպիսի ցուցմունք կամ հերքել այդպիսիք, ենթադրում են հակընդդեմ հարցման իրավունքից հրաժարում, եթե դրանք հաստատված են փաստական տվյալների բավարար համակցությամբ:

12) «Ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը» պաշտպանության միջոցի կիրառմամբ վկայի անանունացման հարցը քննարկելիս յուրաքանչյուր դեպքում նկատի ունենալ գործի քննության այդ փուլում անանուն վկայի ցուցմունքից բացի այլ ապացույցներ ձեռք բերելու ողջամիտ հավանականությունը:

13) Ապահովել հակընդդեմ հարցման իրավունքի իրականացումը մեղադրանքը հիմնավորող տվյալներ հայտնող յուրաքանչյուր վկայի հետ:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկելու հարցը քննարկելիս՝

1) Բացառել հակընդդեմ հարցմամբ չապահովված վկայի՝ միակը կամ վճռորոշը հանդիսացող ցուցմունքի հիման վրա անձին դատի տալը:

2) Ապացույցը գնահատել որպես միակ, եթե դրանից բացի որևէ այլ ապացույց (ուղղակի կամ անուղղակի) չի հաստատում մեղադրյալին մեղսագրված արարքը կատարելու հանգամանքը:

3) Ապացույցը գնահատել որպես վճռորոշ, եթե առանց դրա գործով մյուս ապացույցները չեն ապահովում հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշը և չեն բացառում ողջամիտ հավանականությունը, որ անձն իրեն մեղսագրված արարքը չի կատարել:

4) Բացառել հակընդդեմ հարցմամբ ապահովված անանուն վկայի՝ միակը կամ վճռորոշը հանդիսացող ցուցմունքի հիման վրա անձին դատի տալը:

5) Միակ կամ վճռորոշ ապացույցը հանդիսացող ցուցմունք տված վկայի նկատմամբ «Ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը» պաշտպանության միջոց կիրառված լինելու դեպքում քննարկել պաշտպանության միջոցը փոփոխելու և այնպիսի պաշտպանության միջոց ընտրելու հնարավորությունը, որը կապահովի կոնֆրոնտացիայի պատշաճ հնարավորությունը՝ նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98.13-րդ հոդվածով սահմանված կարգով իրականացված հարցաքննությունը կամ առերեսումը, որի ընթացքում վկայի ինքնությունը մեղադրյալի համար անհայտ է, կամ վկան գտնվում է մեղադրյալի կամ կասկածյալի տեսողական դիտարկումից դուրս, չի ապահովում այդ ցուցմունքի ճշմարտացիության պատշաճ ստուգումը և որպես հակընդդեմ հարցմամբ ապահովված միակ կամ վճռորոշ ապացույց չի կարող դրվել մեղադրանքի հիմքում:

6) Մեղադրական եզրակացությունը հաստատելիս ապահովել, որպեսզի դատակոչի ենթակա անձանց ցուցակում ներառվեն և դատակոչվեն բոլոր այն անձինք, ում ցուցմունքները կարող են հիմք ընդունվել մեղադրական դատավճիռ կայացնելիս:

Մեղադրանքը պաշտպանելիս՝

1) Դատարանում բոլոր վկաների հարցաքննությունը դիտել որպես հիմնական պահանջ, դրանից բացառությունները՝ որպես ծայրահեղ միջոց:

2) Նկատի ունենալ, որ իր դեմ ցուցմունք տված վկային դատարան հրավիրելու և հարցաքննելու ամբաստանյալի նախաձեռնության բացակայությունը կամ ցուցմունքը հրապարակելու նրա համաձայնությունը չի նշանակում հրաժարում հակընդդեմ հարցման իրավունքից:

3) Դատական քննության ընթացքում մեղադրողի լիազորությունների սահմաններում միջոցներ ձեռնարկել առանց բացառության դատակոչված բոլոր վկաների ներկայությունը դատական քննությանն ապահովելու և դատավորի ներկայությամբ հարցաքննելու ուղղությամբ՝ չբավարարվելով անձի բնակության վայրն անհայտ կամ փոփոխված լինելու, ծանուցագիրը չստացվելու վերաբերյալ տեղեկություններով, բնակության վայրից կամ պետությունից վկայի բացակայելու վերաբերյալ երրորդ անձանց հայտարարություններով:

4) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան հետաքննության մարմիններին հանձնարարություն տալ դատարան չներկայացող վկաների ներկայությունն ապահովելու վերաբերյալ՝ հետևողականորեն ապահովելով դրա պատշաճ, ոչ ձևական կատարումը: Հետաքննության մարմինների կողմից հանձնարարության պահանջները ոչ պատշաճ կատարելու յուրաքանչյուր դեպքում նախաձեռնել ծառայողական քննություն:

5) Բնակության հայտնի վայրում վկայի չհայտնաբերման դեպքում միջնորդել դատարանին համապատասխան հարցումների միջոցով պարզել վկայի հաշվառման վայրի փոփոխությունն ու ՀՀ տարածքից հեռանալու հնարավոր հանգամանքը:

6) Միակ կամ վճռորոշ ցուցմունք տված վկայի կողմից (նույնիսկ եթե ցուցմունքը մի քանի վճռորոշներից մեկն է) ՀՀ տարածքում չգտնվելու վերաբերյալ տեղեկությունների դեպքում միջոցներ ձեռնարկել նրա գտնվելու հստակ վայրը պարզելու ուղղությամբ և դատարանին միջնորդել դիմել միջազգային իրավական օգնության՝ վկայի ներկայությունն ապահովելու կամ հեռակապի միջոցով հարցաքննություն կատարելու նպատակով:

7) Անկախ փորձագետի հարցաքննության՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերի առկայությունից, չառարկել փորձագետին դատարանում հարցաքննելու պաշտպանության կողմի նախաձեռնությանը՝ վկա-փորձագետի հակընդդեմ հարցումն ապահովելու համար:

8) Միակ կամ վճռորոշ ապացույց հանդիսացող ցուցմունք տված վկային դատարան ներկայացնելու անհնարինության դեպքում տվյալ քրեական գործով մեղադրանքի հիմնավորվածությունը քննարկել ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչությունում:

9) Դատական քննության ընդհանուր կարգով գործի քննության ընթացքում մեղադրական ճառում պատշաճ խորությամբ ներկայացնել և քննարկել յուրաքանչյուր ապացույցի ապացուցողական արժեքը, հակընդդեմ հարցմամբ չապահովված ցուցմունքի միակը կամ վճռորոշը չլինելու հանգամանքը, հակընդդեմ հարցմամբ ապահովված ցուցմունքի առանձնահատուկ դատավարական ապացուցողական նշանակությունը:

2. ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով, ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիրբեռհանցագործությունների գործերով վարչությունների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում քննվող գործերով բաժնի պետին, ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

հակընդդեմ հարցման իրավունքն ապահովված չլինելու արդյունքում մեղադրյալին մեղսագրվող արարքն ապացուցված կամ մեղադրյալի մեղավորությունը հիմնավորված չլինելու պատճառաբանությամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, առաջադրված մեղադրանքը փոփոխելու, լրացուցիչ քննություն կատարելու համար քրեական գործը քննիչին վերադարձնելու մասին որոշում, արդարացման դատավճիռ կայացնելու, ինչպես նաև դատական քննության փուլում մեղադրանքը մեղմացման առումով փոփոխվելու դեպքերում օրենքով սահմանված կարգով ներկայացնել վարույթ իրականացնող քննիչի նկատմամբ ծառայողական քննություն

իրականացնելու վերաբերյալ միջնորդություն՝ դրա պատճենն ուղարկելով ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

3. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության, Մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետերին՝ ըստ իրավասության սահմանների՝

նախաքննության օրինականության, մեղադրանքի պաշտպանության նկատմամբ վերահսկողության ապահովման գործառույթն իրականացնելիս սույն որոշման 1-ին կետում նշված խախտումներ հայտնաբերելիս համապատասխան միջնորդության և դրա քննարկման արդյունքում կայացված դատական ակտերի պատճենները ուղարկել ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացրած կամ մեղադրանքը պաշտպանած դատախազների նկատմամբ ծառայողական քննության հարցը քննարկելու նպատակով:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

Սույն որոշման 2-րդ և 3-րդ կետում նշված կարգով դատավարական փաստաթղթեր ստանալիս՝ կարգապահական խախտման առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում դատախազի նկատմամբ ծառայողական քննություն կատարելու վերաբերյալ զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

4. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին՝

«Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության՝ գործնականում հանդիպող թերացումների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման» և «Արդար դատաքննության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների արդյունավետ կիրառման» հարցերի վերաբերյալ Կոլեգիայի որոշումների արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով.

1) սույն արձանագրության օրինակն ուղարկել նախաքննական մարմիններին՝ դրանից բխող կազմակերպական միջոցառումներ իրականացնելու նպատակով,

2) պատրաստել ՀՀ ԿԱ ոստիկանության պետին հասցեագրված տեղեկատվական նամակ՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ դրա ժամկետը երկարացնելու հիմքերի պարզման, ինչպես նաև վկաների՝ դատարան ներկայանալն ապահովելու գործառույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու առաջարկների վերաբերյալ:

3) սույն արձանագրության օրինակն ուղարկել ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտորին՝ «Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը

երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության՝ գործնականում հանդիպող թերացումների վերացման նպատակով օրենսդրական և նախադեպային չափորոշիչների արդյունավետ կիրառման» և «Արդար դատաքննության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափանիշների արդյունավետ կիրառման» հարցերի վերաբերյալ կատարված վերլուծությունները և դրանց վերաբերյալ Կոլեգիայի որոշումները դատախազների, քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրների և դատախազների, քննիչների վերապատրաստման ուսումնական ծրագրերում ներառելու նպատակով:

5. ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահին՝

1) դատախազների ատեստավորման հարցաշարում պարտադիր ներառել հարցեր՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների հիմնավորվածության և արդար դատաքննության երաշխավորման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման չափանիշների վերաբերյալ կատարված վերլուծություններից և դրանց վերաբերյալ Կոլեգիայի որոշումներից,

2) մանրամասնորեն ստուգել յուրաքանչյուր ատեստավորվող դատախազի կողմից նշված հարցերի իմացությունը, նախապես պահանջել վերջինիս հսկողության տակ քննված քրեական գործերով մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկանք և որոշում կայացնելիս հիմք ընդունել ինչպես կոլեգիայի որոշումների տեսական իմացությունը, այնպես էլ՝ գործնական աշխատանքում դրանց կիրառման արդյունավետությունը:

**ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՀ**

Ա.ԴԱՎԹՅԱՆ

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԵՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

Մ.ՀԱԿՈԲՅԱՆ